Որոը Սէյճ կ'ըսէր միշտ պէտք է կօշիկ-
ներովս ոյս աշխարհէ երթամ, քանզի շա-
րունակ սպառնական նամակներ կ'ստանար
թէ պիտի սպառնուէր: Շատ անգամ ալ հա-
զիւ աղտօնեցաւ սպանիչին հարուածէն. 1891
Դեկ. 4ին իր անձնական քարտուղարը եւ 3
ուրիշ իր մարդոցնէ զինքը պաշտպանելու
համար իրենց անձը վրայ տուին:



Տ. ՆԵՐՍԻԿ ԵՊԻՍԿ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆ

Ա. Առաջնորդ Մուտի



Տ. ՊԱՐԴՈՒ ՔԱԶԱԽԸ ԱՄԱՆԵԱՆ

ԺԱՌԱ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԺԱՌԱ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Ճէյ կուլտ աւելի ցաւալի կեանք մը ու-
նէր, որ շատ մը ընսանիքներ անսպարմարար
կործանման մատնած էր իր միլիոններն դիզե-
լու համար:

Մահէն ետեւ թռղթերուն մէջ 9 միլիո-
նի ընկալագիր գոնուեցաւ որ իր կենաց վեր-
ջին տասը տարիներուն մէջ վճարած էր ա-
նոնց որ իրեն մահ կ'ապանային:

Թագաւորներ եւ կայսրներ ծանօթ է որ
իրենց կենաց ապահովութիւն չեն ունենար
ու միշտ քաղանի սատիկաններէ շրջապատեալ
են, որք անոնց անձին վրայ կը հսկին: Անգ-
ղիոյ թագաւոր օրական 300 ֆրանք ծափք
կ'ընէ իր կենաց ապահովութեան համար
Գերմանիոյ կայսրը կրկինը, Ուստիոյ Զարը
4200 ֆրանք: Ասկէ յայտնի կ'երեւի որ հա-
րբառութիւն եւ բարձր դիրք իրենց անհաճոյ
կողմերն ունին, հարստութիւն ու երջանկու-
թիւն զուգընթաց չեն ընթանար ինչպէս ո-
մանք կ'երեւակայշեն: Խմաստուն Առզամն
իրաւամի կ'աղօթէ Աստուծոյ որ հարստու-
թիւն եւ աղքատութիւն չտայ իրեն, այլ
«Օրական հացը»:

Աղեքանից Ա. Խուսիոյ մէջ ճամբորդած ատեն կայարան մը հասնելով հոն կեցաւ հանդչելու համար ու հրամայեց որ թէյ պատրաստեն: Սեղանի մը վրայ նոր կտակարան մը տեսնելով կայարանապետին հարցուց: Այս գրքէն կը կարդա՞ս, տղաս: Ամէն որ կը կարդամ, Վեհափառ Տէր, պատասխանեց պաշտօնեան: Եսոտ ուրախ եմ, ըստ կայսրը, ու հարցուց: Այժմ՝ ո՞ր մասը կը կարդաս: Մատթէսսի Աւետարանը կարդալ ոկրած եմ պատասխանեց մարդք: Յարատեւէ կարդալ, ըստ կայսրը, քանզի նասոր իր հոգւոյն փրկութեանը համար հոգ կը տանի, աշխարհային երջանկութիւն ալ պիտի գտնէ: Երբ կայարանապետը սենեակէն դուրս ելաւ, կայսրը գաղանապէս 500 բուլղինոց պանքնօմը մը զետեղեց Մատթէսսի Աւետարանին վերջն գլուխներուն մէջաեղը: Յետոյ մեկնելով շարունակեց իր ճամբան: Նոյն ճամբով վերադարձաւ կայսրը և նոյն կայարանը հասնելով կայարանապետին սենեակը մտաւ հանգչելու համբոր: Աւետարանի ընթերցումը ո՞րքան յառաջ տարիք, հարցուց կայսրը կայարանապետին Մինչև Պուկասու Աւետարանը հասոյ՝ պատասխանեց կայարանապետը Տես-

նենք ըստաւ կայսրը, տուր Աւետարանը ինծի: Հինգ հարիւր բուլղինոց պանքնօմներն իրեն դրած տեղն էին դեռ, Սաւտը, շատ մեծ մեղք է սիրելիս, ըստաւ կայսրը կայարանապետին, որ ամօթէն ու երկիւղէն շուտրած կանգնած էր և կը դողար. դուն Աստուծոյ արքայութիւնը չես փնտուած, ուստի աշխարհային վլորձատրութիւնն ալ պիտի կորուսանես, ասի քեզի խրատ թող ըլլայ: Իսկ 500 բուլղին տեղւոյն աղքատաց բաշխուեցան:

« Սա փոքրիկ արարածն » ըստաւ անգամ՝ մը Մարտինա Լուտեր, ոստի մը վրայ թառիւ գացող թռչնիկ մը ցուցնելով, « Ընտրեց իւր ապաստանը և աչա հանդարտիկ կերպով ինքնիք ի քուն կամփոփէ մեղմիւ ուգերեսին ուստիկը բռնած, և աւանց վաղուան օմեւանի մը համար խորհելու յանձնեց ինքզինքն Աստուծոյ որ պիտի հոգայ իրեն համար »:

Ճաւատարիմ քարոզիչն միշտ իւր քարոզներն այնպէս կը պատրաստէ և այնպէս իր խօսքերն ունկնդրաց կը յարմարցնէ, որ իւր բարքանշիւրն բան մը կը սորվի նկատմամբ իւր գաղտնի մեղաց:

Սկզբի հական մօր մը գուստը անառակ
կեանք մը վարելով՝ թողեր էր իւր մայրը և
մայրենի տունը: Իւր աշերն բացուեցան վեր-
ջապէս, դարձաւ մայրաքաղաքէն դէպ և
տուն, այն հիւղափն որ կը կենար բլբակի մը
կողին վերայ: Դուստը ներս մտաւ և գտաւ
իւր մայրը որ իւր կրտկի մտիրին վրայ ծռեր
կը տաքնար: Զջջացեալն իսկցն իւր մօր բա-
զուկներովն գրկուեցաւ: «Գրեթէ կէս գիշեր-
ուան մօտ եկայ և գուսոր չ'գոցուած գտայ» ո
ըստ դուստը իւր մօր: «Երթալէդ ի վեր եր-
բէք չ'գոցուեցաւ, քանզի չէի գիտեր թէ երբ
կը դառնաս», պատասխանեց մայրը:

Ենորլիմ Քէնթը բազըրիի Արքեպիսկոպոսն,
մինչ ճամբէ մը կ'անցնէր՝ տեսաւ աղեկ մը
որ թռչնոյ մը ոտից չուտն կազած և ծռյըն
քարի մը հաստատած էր: Թռչնուն յաճա-
խակի կը բարտիւր զիւր թեւեր և կը բաղ-
ձար թռիւր ի բաց, բայց իւր ոտից կապուած
քարն կը կաշկանդէր զնա ի գետին: Արքե-
պիսկոպոսն սոյն տեսարանէ դգտծուելով սկը-
սաւ արտասուել և ըստու: «Ճիշդ այսպէս է
հոգւոյ և մարմնոյ առնչութիւնն: Հոգին կը
փափաքի սաւառնել ի վեր երկնային խոր-

հըրդոց և մտածմանց մէջ մեալ ընդ միշտ,
ոյլ մարմինն զայն կարգելով և վար կը պա-
հէ: իսկ եթէ երբեք հնար լինի թոյլ չպիտի
տայ հոգւոյն որ բնէ ամենադպոյն երկնային
խորհրդածութիւնն:»

«Երէկ», ըստու ծերունի մը իր մահա-
մերձ կնոջ անկողնին քով կոյնելով, «ի-
ստունը հինգ տարուան մէջ առաջն օրն էր
որ մէկտեղ չ'ազօթ եցինք:» Եզական գեղեցիկ
օր մը չէ՞ այս: Ամոլն անցած էր փորձութիւն-
ներէ: Ճանչցած էր ծանր աշխատութիւն, հի-
ւանդութիւն և տրտմութիւն: Մեծցուցած
էր մեծ ընտանիք մը, բայց ոյս մահկանացու
կեանքին բոլոր գեղքերուն և փոփոխութիւններուն մէջ ընտանեկան սեղանն յիսունը հինգ
տարիէ ի վեր երբէք չէր թերացած վեր, եր-
կինք, ուղղել իր առօրեայ աղջօթքին խունկը:

Հանոյէի աղբիւրները շատ են: Ամէն ան-
հատ հաճոյքի զատ ու որոշ աղբիւրներ ունի
Մարդոց խառնուածքը տարբեր է որովհետեւ,
ուստի ճաշակն ալ կը զանազանուի: Ամէն
անհատ իր գոյութեանը պէս ուրոյն ու բնո-
րոշին ճաշակներ ունի: Այսպէս հաճոյքի զա-
նազան աղբիւրներ երեւան կ'ուգան: Հաճոյ-

քի աղբիւրները, աւելի որոշ ու ընդհանուր տռումնով մը, երեքի կրնանք բաժնել.— վնասակար, անժեղ և օգտակար:

Վնասակար աղբիւրը շատերուն նախընտրութիւնն է: Ոմանք հաճոյքի աղբիւրը գուտթիւն քաղել կը յուսան, ուրիշներ խաղամընթիւթեան մէջ կը փնտուեն հաճոյքը: Վավաշ կետիքի մը չար ու ամօթալի զեղիսութեանցը դառնութիւններէն հաճոյացողներ քիչ չեն: Հաճոյքը կեր ու խումի, ափիոնի և կրքին մէջ փնտուղներն շատ են:

Դանայեան կարասներ են սակայն մարդկարին կրբերը: զանոնք լեցնել, յագեցնել ջանալը անկարելիութիւն և յիմարութիւն է:

Հետեւաբար այս սխալ աղբիւրներով յագենալ ու զաղները երբեք չպիտի կրնան հասնիլ ակնկալուած արդիւնքին ու պիտի շարունակեն մետալ հան, ուր որ էին տռաջ:

Այդ աղբիւրներէն աղի ջուր կը հոսի, մարդիկ ո'բափ շատ խմեն անոնցմէ, ոյնչափ կը սաստկանայ պապակնին:

Անժեղ հաճոյքները բազդատաբար քիչ հետեւաբարդներ ունին: Զեզոքութեան շատերը շատ չեն սիրեր մարդիկ, ասոր համար ծայրա- յեղութեանց կ'երթան միշտ: Հաճոյքի ան-

մեղ աղբիւրները ինչը՞ւ առատ ջուր չ'մուտակաբարեն վայելքի ծարաւի անձերուն Ընտանեկան խաղերը, ընկերական հացկերոյթները, մտերմական ակումբները, գէ՞ւ առիթներ են: Բայց անդին կայ բարձրագոյն աղբիւրը հաճոյքի, որմէ խմելու և ամէն մարդ: Բարձրագոյն հաճոյքը իրական հաճոյքն է: Այդ աղբիւրը զով ու կենաբար ջրով կը յագեցնէ հոգիին ծարաւը և կը բարձրացնէ զգացումը: Այս աղբիւրէն շատ աւելի խմողներ կան: Բարձրագոյն հաճոյքը վայելքի բոլոր տարրերն ալ ունի իր մէջ ու միանդամայն շինիչ է: Ան կ'այնուացնէ սիրտը, կը նորոգէ միտքը և հոգին կը գեղազարդէ: Բարձրագոյն հաճոյքը թշուառութիւնը կը մեղմէ, անկումը կ'արգիլէ և վերելքի պատճառ կ'ըլլոյ: Այս աղբիւրէն խմել և կենաց ջուրէն խմել ըստէ: Ընթերցումը բարձրագոյն հաճոյքի առաջին աղբիւրն է: Առով միտքը իր գերագոյն թռիչքը կ'առնէ, վամն զի միօրինակութեան ու տաղուտկի շղթաները կը խցէ: Ընթերցումը վշտախոց սիրտը կը բուժէ և մաշացու հարուած կուտայ բանաւար յուսուատութեան:

Ընթերցումը ներկայէն անդին կը փոխադ-

բէ մորդը և երեւակայութեան ու տրամա-
բանութեան ուժեղ թեւերով նոր աշխարհ-
ներու մէջ թեւարկել կուտայ հոգիին:

Ճին բերդաքաղաքի մը դռներն երեկոյ-
եան ժամն 12ին կը գոցուէին, և ով որ այն
պահուն ներս չեր մոտած, դուրսը մնալ կը ո-
տիպուէր: Դանապանին ցաւ կը պատճառակը
երբ լոկ մի քանի վայրկեան ուշացողներն
դուրսը ձեւել պարտաւորուած էր, ըստ տրուած
հրամանի: Աւսոմի 12ին քառորդ մնացած
դռնէն դուրս կ'ելլէր և բաւական հեռուն
երթալով փողը կը հնչեցնէր և կը դռէր.
«Նսորներս մտնել կ'ուզէ պէտք է արտարայց»:
Այս կոչը շատերուն քայլերն կ'արագացնէր
և դուռը չգոցուած ներս կը մտնէին: Իարի
դռնապանը կ'ուրախանար տեսնելով որ անոնք
ներս կը մտնէին դեռ դուռներն չգոցուած:

Դաւուը գոցուեցաւ և յիմար կոյսերն
ի զուր կ'աղաղակէին. «Տէր, Տէր, բաց մեղի»:

Սա երեք բառերն անդամանի են
Արձակուած գնդակը
Խօսուած խօսքը
Կորսուած ժամանակը:

Մարդ մը եկաւ ճգնաւորի մը ինդրե-
լով որ իրեն համար աղօթէ: Լաւ, ըստ
ճգնաւորը, միայն կը ինդրեմ ստ յարդէ ան-
կողինս օգնեցէք ինձ դուրս տանիլ, զի մինակս
չեմ կրնար տանիլ և արեւին տակ թռղուլ
որ օդ տանէ:

Գլխուս վրայ, ըստ աղքատը և հուժկու-
թաղուկներով վեր վերցնել ջանաց անկողինը:
բայց չեր կրնար տեղէն շարժել զայն, և չորս
կողմը նայեցաւ ու տեսաւ որ ճգնաւորը եր-
կու ձեռքովը անկողինը վար կը կոխէր:

Ահա՝ գոշեց մորդը, զարմանալի օգնա-
կան մ'էք դուք. եթէ կ'ուզէք որ անկողին-
նիդ դուրս տանիմ, պէտք է դուք ալ օգնէք:

Ճիշդ տանկ է, ըստ ճգնաւորը, եթէ
կ'ուզէք որ ես ձեզի համար աղօթեմ: պար-
աիք դուք ալ հետո աղօթել:

Մարդը կապիկէն չէ սերած. — Նո-
պէլեան մրցանակի արժանացած ֆրանսացի
համբաւաւոր գիտական Տօքթ. Քտուել Ա-
մերիկեան թերթի մը հետեւեալը յայտարա-
րած է.

— Երկար տարիներէ ի վեր շատ մարդիկ,
Տարվինականներ և ուրիշներ կը կարծէին

թե մարդիկ կապիկէն ծագում առած են,
կապիկներու սերունդին յաջորդող մէկ կա-
կատարելագործուած կենդանական տեսակ
մըն է: Բայց գիտութեան տուած վերջին
փաստերը կը հերքեն Տարվինի տեսութիւնը.
բնախօսական և մարդաբանական գիտու-
թիւնները տարբեր արդիւնքի կը բերեն մեղի.
երկու տեսակներ իբրարու հետ բազդատելու
համոր նոր մեթոս մը կայ, այն է, մէկուն
մկանունքային հիւսուածքները, դեղձերը,
միւսին մէջ կը փոխադրեն անոնց Նմանու-
թիւնները գտնելու համար: Կապիկին ան-
դամագնական զանազան մասերը վիրաբու-
ժական գործողութեամբ մը փոխադրելով
մարդուն մէջ կը տեսնենք որ անոնք այնքան
կը յարմարին մարդուն, որքան աւելի ստորին
կիւնդանիներէն ոչխարի, շունի կամ կովու մը
մասերը: «Արդ բացարձակապէս անկարելի է
որ մարդուն նախահայրը կապիկը եղած ըլլայ»:

—
Այսի մի կին փոքր պանդոկ մը կը վա-
րեր, Զուկեցերական գիւղի մը մէջ: Տեսնուե-
ցաւ որ հոն գիշերող օտարականներ առաւո-
տուն գուրու չէին ելլեր, ուստի լուր տարա-
ծուեցաւ թէ այրին օտարականները կ'ապաննէ

և յետոյ կը կողոպտէ: Աւրիին որդին որ շնա
տարիներէ ի վեր հետու կը գտնուեր, վերա-
գարձին լոեց այս գարշելի լուրը և որոշեց
ստուգել ատոր իրողութիւն մ'ըլլայն: Ուշ
տեսն գիշերը տուն եկաւ ու մայրը չճանչ-
ցաւ զինքը: Կերաւ, խմեց ու վառարանին
մոտ ցոյց տրուած տեղ մը պառկեցաւ: Պան-
դոկապետուհին քանից սենեակն մտաւ և
գուրս ելլու, իբր թէ գործ մը կատարելու,
և յանկարծ աման մը հալած, եռացած իւղ
թափեց որդւոյն վրայ որ գուեց և Թշուառ
մայրը և յետոյ հոգին աւանդեց: Ագահու-
թիւն ամէն չարեաց ակն է:

Պարևազմի ընկերներ. — Մարդա-
թուրի մարտէն յետոյ ամէն վայր և ամէն
անկիւն լեցուած էին մեռեալներով և վիրա-
ւորեալներով, այնպէս որ խիստ գժուարու-
թեամբ փոքրիկ սենեակ մը յատկացուեցաւ
հանգուցեալ Վիլչելմ Կայսեր, որ ներկայ
էր այդ արինալից ճակատամարտին: Սենեա-
կին կարասին կը բաղկանար անկողնէ մը
փոքրիկ սեղանէ մը և ամոռուէ մը: Երբ Կայուրը
մտաւ այդ սենեակ, Տարցուց: «Ո՞ւր են
Մոլթքէ և Պիզմարդ»: «Բնակելու համոր

տեղ՝ որոշուած չէ գեռ անոնց համար, Տէր իմ», ըստ թիկնապահը, թէե շատ լաւ գիտէր թէ Մոլթք և Պիզմարդ որչափ կը կարուտէին հանգչելու հետեւեալ օրուան աշխատութեանց վերսկսելու համար օլուրեմն ըսէ անոնց թէ միասին պիտի անցնենք գիշերը» ըստ Կայորը, «Ուրցուք այս անկողինը, վերաւորեալները ինձմեւ տւելի կարօտութիւն աւնին ադոր, և փոխարէնը բեր քիչ մը յարդ և լամի կտօրներ Ասոնք բաւական պիտի ըլլան երեքնուու համար Հրամանը կատարուեցաւ, և երեք մեծահռչակ անձնաւորութիւններն անցուցին այդ անձրեւու գիշերը յարդի վրայ»:

Մարդ մը, առանց իր կողմանէ պատճառ տուած ըլլալու, ծանր և մեծ նեղութեանց էր մատնուած։ Բարեսիրտ, մարդասէր անձ մը զայս լսելով, իսկցյն կը փութայ թշուառին քով, կ'օգնէ և արտասուաց հեղեղն կը դադրեցնէ հոսկել; Բոլորը ի սրտէ չնորհակալութիւն կը յայտնեն այս բարի մարդուն և կը ինդրեն որ անունը յայտնէ իրենց «Խընդրեմ ըսէք», կը հարցնէ անձնուեր բարերարը, «Ա. Գրոց մէջ յիշուած բարի Ամարացիին

անունը ի՞նչ էր»։ Ամէնն ալ լուս կը մնան, քանզի դեռ ոչ ոք գիտէ այդ բարի մարդուն անունը և Յիսուս ալ չ'յիշեր անունը, երբ կը պատմէ անոր արարքը «Ուրեմն խընդրեմ», կ'ըսէ բարերար մարդը, «Թոյլ տուեք որ անուն չ'յայտնեմ»։

Տիկինի մը հարցուցին թէ թատրոն յաճախելու նկատմամբ թ՞նչ կը խորհի՛. ըստ այս հանճարեղ կինը, թատրոնը մէկ ժամ՝ միայն ուսուցիչ կ'ըլլայ, իսկ շատ տարիներ կործանելի գեր կը կատարէ։

Ճարշի հռչակաւոր գրագէտն ու քարոզիչը տիկինի մը հետ կը ճամբորդէր. առ հաջոյքով կը պատմէր իր կենաց զանազան վայելքներն մի առ մի թուելով. Հարվի ըստ թէ հատ մը մոռցած է։ Ո՞րը հարցուց տիկինը. Ասոնց ամէնն մոհոււան անկողնոյ վրայ յիշելու հաճայքը, պատասխանեց Հարվի. կինը ոմափեցաւ և լաւագոյն հաճոյքներու հետամուտ եղաւ։

Օրիորդ մը յաջողեցաւ նարօլէօն Ա. ի ներկայութեան ելլել և անոր սաքը իշնալով

ինդրեց հօրը ազատութիւնը որ մահուան
գատապարտուած էր: Զեր հայրը ո՞վ է նա,
հարցուց կայսրը:

Աղջիկը երբ հօրը անունը տուաւ, նարօ-
լէսն չըր կերպով ըստւ. Զեզի բան մը չեմ
կրնար ընել, երկու անդամ է որ ձեր հայրը
դաւաճանութեան ոճիրով բռնուած է:

Գիտեմ, պատասխանեց աղջիկը, աղի ար-
ցունք թափելով, բայց ես Զեզմէ ոչ թէ ար-
գարութիւն կը խնդրեմ, այլ թաղութիւն,
վեհափառ Տէր, ներէ, ներէ իմ հօրս:

Վայրկեան մը խորհելէ ետև նարօլէսն
յուղուելով աղջկան ձեռքը բռնեց և ըստւ.
ըստւ, գնա հօրդ և ըստ որ քու սիրոյդ համար
կը ներեմ անոր:

Ահս զիւեր էր երբ Վիգթորիայի լուր
տրուեցաւ թէ ինքը Մեծին նրիտանից գա-
հակալութիւնը ստանձնել կը հրաւիրուի
նա իսկայն խնդրեց պատգամաւորէն ծնրադ-
րել Աստուծոյ գահին առջեւ իւր չեա և ա-
ղօթք ըրաւ: Ահս այսպէս սկսուեցաւ Անդ-
րից Թագուհւոյն յաջող թագաւորութիւնը:

Օեր Երիտոնեայի մը հարցուցին իր

քանի տարու ըլլալը որ կարդալ և գրել չու
գիտեր: Նիշ մը բերելով ցուցուց թէ զիստ-
ուած սիրել սկսելէն ի վեր իւրաքանչիւր Ա-
լյննդեան աւատու նոյնին մէջ հատիկ մը
ձգած էր, և համրուելով տեսնուեցաւ թէ
50 տարի եղած էր յորմէ հետէ կը սիրեր
զԱստուած ու կը ծառայէր նմա:

Անգդիական գերեզմանատան մը մէջ
փաքիկ տղու մը տապանաքարին վրայ հե-
տեւեալ խօսքը քանդակուած է, «Ո՞վ փր-
ցուց այդ ժաղիկը», գոչեց պարտիզանը, երբ
վեր վար կը քալէր պարտիզան մէջ: Իր ըն-
կեր մշակը պատասխանեց, «Եթ Տէրը»: Պար-
տիզանը լսու կեցաւ հանդարտ:

Երկինք որչափ քիչ փայլատակէ և
ամպք որչափ ուշ զոռան, մարդոց հիացումն
ի տես անոնց այնքան զօրաւոր կ'ըլլայ, բայց
եթէ երկինք միշտ փայլատակէ և ամպք ամէն
օր գոռան, յայնժամ մարդոց մտաց վրայ
հասարակ կառքերու դղրդիւնին չափ աղդե-
ցութիւն չեն ունենար անոնք:


Տղայքն ստատելու և յանդիմանելու շա-
րունակական սովորութիւնն ալ ճիշդ այս-

պէս է, անոնք շարունակ և ամէն բանի համար յանդիմանութիւն լսելով կը վարժուին անոր, անանկ որ ոչ միայն չեն ուղղուիր, այլ և ապօւշ և անզգայ արարածներ կը դառնան.

Առանց խօսելու կրնայ մարդ տուա ըսել
Գեղեցիկ առաւօտ մը տղայք դպրոցին առջին կը խաղային. երեք ճամբայ կանցնէր անգէ, գիւղին բժիշկը իր կառքը նստած անցաւ տղոց առջեւէն ու աջակողմետն ճամբէն իր տունը գնաց. Քիչ մը վերջը ձիաւոր մը եկաւ, որ շատ յուղեալ կը թուէր և հարցուց տղայց թէ բժիշկին անցնելլ տեսաննու.

Այս՝ պատասխանեց անոնցմէ մին, Ո՞ր ճամբան գնաց, հարցուց մարդը, գրաւեալ ձայնով: Տղան բերանը չբացաւ բայց խաղ մը ընելու համար ձախ կողմի ճամբան ցոյց տուաւ ձեռքովը:

Մարդը շնորհակալ ըլլալով ձին դէպի ձախ վաղցուց: Բայց յայտնի է որ չտաւ բժիշկը, այս պատճառ եղաւ որ մարդը իր որդին կորոյա. առաւօտուն նոխաճաշին տղան կուլ էր տուած ձուկի փուշ որով կոկորդը բորբոքեցաւ: Բժիշկը կանչեցին որ




ԱՇՈՒՐ Ա. ԵՎԼԻՍՈՒԹ

Քերոպի



Ա. ՏԵՐ ՊԱԶԱՐԵԱՆ
Քերոն



Ա. ՏԵՐ ՊԱԶԱՐԵԱՆ
Քերոն

Ով իմն, Յատուլլոս, ասկից կ'իմանաս թէ
ինչ ըսել է հօր մը իր առաքինի զաւակը
կորսնցունելը. Հաւատա՛, սիրելիս, որ կը վախ-
նայի ինելքս կորսնցնել պղտիկ աղուս մահ-
ուան վրայ, բայց ասավ կը միիմթ արուեիմ որ
օր մը նորէն զիրար պիտի տեսնենք. Այս ալ
կը մտածեմ որ դէտ ինծի փոխ տուեր էին
զինքը չէ թէ իբր պարգեւ, ուստի զաւակս
ինձմէ առնելով, իմն չափն, այլ ես զինքը
իր բան տէրերուն դարձուցի: Խոկ որովհետե-
րին հանգիստ տուին, վասն զի բարի էր գո-
չութիւն կուտամ իրենց որ սյուչափ տանեն
թաղուցին ինձի վայելել զինքը, ու իր մահ-
ուան համար ունեցած համբերութիւնս իրենց
կը նուիրեմ»:

Արդ մենք որ այս հեթանոս իմաստասէ-
րէն 17 դար ետքը կ'ապրինք, մենք - որ էւրոց
ուր և շուստ ունիւնի Փքիւն ունիւնի, զիտենք
թէ մեր կրտե ցաւերը Յիսուս ինք կը ստանձ-
նէ և մեր վիշտը իրը կ'ընէ, մեր արցունքով
լճացեալ աչքերը դէպ իր չարչարանաց իւնին
կը վերցնենք և կ'ըսենք. Աստուա՛ծ քու-
կամքդ որ հնեալ ըլլայ:

Միհրան Յովհաննէսան

Ֆլարիխ իմաստունը ամուսնացելոց նը-
կատմամբ կ'ըսէ. — Անգամ մը ազնուականի
մը հարցուցի թէ մարդու միշտ խելացի՞ է. — Ոչ,
պատասխանեց նա, մէկը որ ծայր տափի ճան
խելացի է, օր մը կրնայ յիմարութեան ժամ՝
մը ունենալ Ռւբեմ, պատասխանեցի ես, երբ
այդ յիմարուկան ժամը ձեր կնոջ պատահելու-
ըլլայ դուք պէտք է լուէք, իսկ երբ ձեզի հան-
գիպի կինը պարտի լուել, քանզի երկու յի-
մարներ երր դէմ առ դէմ գան կուիւ կընեն:
Ոչինչ բաներ են միայն որ ամուսնացելոց մէջ
կուիւի պատճառ կ'ըլլան: Այս և կին կազան-
գի գիշեր մը թռչուն մը տեսան տանիքին
վրայ. այըը ըստ թէ բու է, կինը պնդեց թէ
ագռաւ է: և վերջը տաք վիճաբանութիւն
մը ծագեցաւ և այր և կին սկսան զիրար ապ-
տակել Տարին անցաւ և այր ու կին օր մը
սկսան ողբալ որ թռչունի մը պատճառաւ
միմեանց մէջ անհամառնոյնութիւն էր ծա-
գած: Այըը գուչեց, իմ ըստա շիտակը էր:
կինը գուչեց, ու, իմ ըստա էր շիտակը, և
երկուքն ալ շարունակելով պնդել իւրաքան-
չիւր էր տեսութեան վրայ, նորէն կուիւ ծա-
գեցաւ և սկսան իրար ապտակել:

Իմաստունը այս պարագային ա'յն է, որ
գիտէ լուել և կը լուէ:

Ճռչակաւոր յօյն փելիսոփան, Պղատոն,
ամէն օր աստուածներուն շնորհակալութիւն
կը մատուցանէր մարդ ծնած ըլլալուն համար,
յետոյ Աթինացի ծնած ըլլալուն համար և
ի վերջը այնպիսի ժամանակ մը ծնած ըլլալուն
համար երբ Առկրատէս իւր ուսուցիչն կրնայ
ԲԱԼՄՆ:

Կեանիի յատակագիծ մը.—Օրը երկու
ժամ քալէ՛. գիշերը եօթը ժամ քնացի՛ր.
քունդ գալուն պէս պառկէ՛, արթննալուդ
պէս ելի՛ր, ենինէդ վերջ աշխատէ՛ Անօթի
եղած ատենդ կէ՛ր. ծարու եզած ատենդ
խմէ՛, և միշտ հանդարտ կերպով Պէտք ե-
ղած ատեն խօսէ՛. ինչ որ կրնաս ընել՝ այն
միայն կատարէ՛. Յիշէ՛ թէ՛ ուրիշները քենէ
կափում կրնան ունենալ, և թէ՛ դու՛ անսնց
վրայ պէտք չէ վստահիս Յարդէ՛ դրամը իր
արժէքէն ո՞չ աւելի ո՞չ պակաս. լու ծառայ
մըն է ան և գէշ տէր մը: Ամէնուն ներողա-
միտ եղի՛ր, մի անարդեր մարդիկը. մի ատեր
զանոնք և մի խնդար անոնց վրայ Յաւէ ա-
նոնց վրայ: Ամէն առառու երբ արշալոյսը անե-
նես, մահուան վրայ մտածէ՛, ինչպէս նաև
ամէն իրիկուն, երբ մութը կոխէ: Երբ շատ

առաւապիս, ցաւիդ գէմ դի՛ր. ա՞ն դքեզ
ինքնին պիտի միխթարէ՛, քեզի միշտ ըան մը
պիտի սովորեցնէ: Զանա' Ըլլալ պարզ, օգտա-
կար և աղատ:

Աղէսանիր Տիւմս

Որդի

Թարգմանեց

Մ. Գ. Մօղկան

ԽԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔԸ

ԺՈՒԿՈՎԱՅԻՑ Է

Ճանապարհորդ մը գեղեւկոս քայլերով
լերան ժայռակրուն վրայէն կը մաղլցէր, և
վերջապէս կատարին հասաւ:

Հն՝ տարածուն գագոթէն, մայրամուտ
արեւուն ճառագայթներով ողազուն ընդար-
ձակ գալստ մը կ'երեւէր. հսկոյ արեւը իր
շրջանը կատարելէ յետոյ, իր վերջին ճա-
ճանչներով կը լուսաւորէր կիսաքուն եր-
կիրը:

Խաղաղութիւնը կը ծածանէր ընդհա-
նուր Ռւղեւորը՝ այս տեսարանին հանդէպ
միխթարուած, ծնրադիր մրմնջեց իրիկուան
աղօթքը, և գալարիքին վրայ տարածուելով՝
քնացաւ Երազին մէջ իր բոլոր մարմնական
ցաւերը բժշկուած տեսաւ:

Աստուած երեւցաւ իրեն, երեսը՝ բացարձակ արեւն էր, երկնակամարը՝ իր հագուստը, երկիրը՝ իր պատուանդանը. Եւ այսպէս բացարձնչեց Աստուծոյ. «Հա՛յր, երբ հոգւզս բոլոր թուլութիւնները խստավանիմ, երեսդինձմէ բարկութեամբ մի՛ գարձներ, գիտեմ որ երկրիս մէջ՝ ամէն մարդ կը պարտի իր խաչը հեղութեամբ կրել, բայց ամէն խաչ հաւասար ծանրութիւն չունի, իմն՝ ուժէս շատ վեր է, թեթեւցուր քիչ մը, եթէ ոչ զիս պիտի ընկճէ, հոգիս ալ պիտի կորսուի»:

Այսպէս անխօս Աստուծուն կ'աղաւէր:

Յանկարծ ուժին հով մը զինք դէպ ի վեր բարձրացուց, և ինքզինք տաճարի մը մէջ գտաւ, ուր շատ մը խաչեր կային:

Զայն մը լսեց որ կ'ըսէր. «Բոլոր երկրիս խաչերը առջեւդ են, ուզածդ ա՛ռ»:

Ինք սկսաւ այն տաեն իր ուսին վրայ փորձել իւրաքանչիւր խաչ և անանց ծանրութիւնը չափել. բայց ընտրութիւնը գիւրին չէր, մէկը իրեն համար շատ մեծ էր, միւսը ծանր, ուրիշ մը ոչ ծանր էր և ոչ մեծ, սակայն անյարմար, ուր ձայրերը ուսիրը կը խցուեին. վերջապէս, թէե ամէնն ալ փորձեց. բայց չկրցաւ ընտրել:

սկսաւ փնտռել, երբ յանկարծ, պարզ խաչ մը տեսաւ, որ առաջ անուշագիր թողած էր: Ճիշտ է՝ որ թեթեւ չէր ան, ինչու որ, կարծը կաղնեփայտէ եր պատրաստուած, բայց այնպէս յարմարեցաւ իրեն՝ որ կարծես չափով իրեն համար էր շինուած: Նա՛, գոչեց յանկարծ. «Տէ՛ր թոյլ առւր որ աս առնեմ», ու առաւ:

Եւ ի՞նչ... արդէն իսկ իր խաչն էր ան: Ուուսերէնէ քարզմանեց

Արասի Մարովանեան

ՊԱ.ՑԱ.ԵՐԱ.ՑՈՒՄՆԵՐ

Արակ Ա. Թիւթիւննեան

ՄԵԿՈՒ ՄԸ ՍԻՐՈՅԻ ԽԱՄԱՐ. — Ակով տիսյ թագաւորներէն Խոպէրթ Պրիւս անգում մը երբ ծպտեալ իր երկրին զանազան կողմերը կը շրջագայէր, ուսումնասովելու համար իր սիրելի ժողովուրդին տնտեսական, քաղաքական և բարյոյական վիճակը, իրիկուն մը չափազանց յոգնած անօթի ու ծարաւ վիճակի մէջ, հեղեղանման անձրեւի մը ատեն մօտակայ տեղ մը պատսպարան փնտռեց և հիւղակ մը գանելով դուռը զարկաւ: Տունը

բնակող ծերունի տիկին մը բացառ դուռը
Թագաւորը հարցուց անոր. «Ալրդեօք կը հա-
ճի՞ք յոդնած և թրջուած ճամբորդ մը այս
գիշեր ձեր տունը հիւր ընդունիւ» Տիկինը
փութով պատսխանեց. «Տէ՛ր, բոլոր ճամ-
բորդները առանց բացառութեան և ամենայն
սիրով հիւր կ'ընդունիմ Գետո Հըսկոյն համոր»»
Թագաւորը զարմանօք հարցուց. «Ո՞վէ այդ
մէկը՝ որուն համար սցյալչափ զահողութիւն և
ծառայութիւն յանձն կ'առնեք» — «Մեր
արդար թագաւորը, մեր երկրին հայրը՝ Ռօ-
պէրթ Պրիւս, մատելով պատսխանեց կինը։

Բարի տիկինը իր թագաւորին սիրոյն հա-
մար մի՛շտ իր դուռը բաց կը թողուր ճամ-
բորդ հիւր երուն առջեւ. անոր սիրոյն համար
ուրիշներուն կը ծառայէր։

Սիրելի՛ ընթերցող, դուն քեզի համար
զահուաղ սիրելի Յիսուսին համար ի՞նչ ծա-
ռայութիւն կը մատուցանես ուրիշներուն.
Անու սիրոյն համոր մինչեւ հիմուկ ի՞նչ գործեր
կատարած ես, ի՞նչ ծառայութեան մէջ
գտնուած ես. խորհէ՛։

**Զար խորհուրդներու ազդեցու-
թիւնը. — Արդեօք Ճնողքի մը, հայր ըլլոյ**

կամ մայր, չար խորհուրդները իրենց յոռի
ազդեցութիւնը կը թողածն յետազայ սե-
րունդին վրայ։

Մարիկ ըրէ՛ք.

Կին մը, ընիկ Յարիզից, որ մեռած է 1827ին,
ոճրագործական միտումներ և խորհուրդներ
կը մնուցանէր իր մէջ. չէր կրնար աղասութիւ-
ոյթ մշակաւանջային արնոտ խորհուրդներէն և
Արդիւնքը. թող պաշտօնական զիճակագրու-
թիւնը ցոյց տայ. Աերունդէ սերունդ իրմէ
յառաջ եկողներու ցուցակը աչքէ անցունե-
լով տեսնուած է որ մինչև 1902 Մայիս իր
սերունդէն 700էն ոչնուազ անձեր գատա-
պարաւած էին իրը ոճրագործ տանուազն
մէկ անգամ. 37ը գլխատուած էին մարդաս-
պանութեան համար, իսկ գատավարութեան
և զլիատման ծախսի համար կառավարու-
թիւնը տուժած էր 450 միլիոն ֆրանք։

Ահաւո՞ր իրտղութիւն....

Սիրելի՛ ընթերցող, բարի՞ թէ չար խոր-
հուրդներ կը մնուցանեն։

**Աւելի խօսուն եւ ազդեցիկ օրի-
նակներ. — Բարի խորհուրդները և բարի
կեանքը ո՛չնութիւն են։**

Ճօնաթան (Յաղսամթան) Ետուըրտառ ծը-
նու 1703ին Ամերիկայի Պոսթոն քաղաքին
մէջ Խնք եղաւ բարի հայր, բարի քաղաքացի,
մէկ խօսքով ճշմարիտ հարդ, գիտակից իր կո-
չումին և իր պարտականութեան:

Աստուծոյ խօսքը ճշմարտութիւն է, ան
կ'ըսէ. «Արդարին սերունդը պիտի օր հնուի,»
և իրօք Ճօնաթան Ետուըրտասի սերունդը օր հ-
նուեցաւ և օր հնութեան պատճառ եղաւ Ա-
մերիկայի: Ահա՝ իր սերունդին պաշտօնական
վիճակագրութիւնը:

Իր օր հնեալ սերունդին անդամներէն 879
անձեր հետեւեալ պաշտօնական գործերու-
մէջ մեծ ժառայութիւն մատուցին իրենց
հայրենիքին. —

295 անձեր Գոյէ ճի ընթացաւարտ ըլլա-
լով իրենց մատասրական և բարոյական կեան-
քով մեծապէս նպաստեցին հասարակութեան
յառաջդիմութեան գործին, 12 նախագահ-
ներ, 65 բրոֆէսորներ, 60 բժիշկներ, 400 կղե-
րական և երաժշտագէտներ, 73 բանակի և
զինուորական պաշտօնեաներ, 60 հռչակաւոր
հեղինակներ, 400 օրէնսդէտներ, 30 գատա-
ւորներ, 80 բարձր պաշտօնեաներ, 1 փոխա-
կագահ և 3 ընդհանուր քարտուղարներ, ու-

բոնք սերեցան Ճօնաթան Ետուըրտասընէն, և
Ամերիկայի օր հնութեան և բարիքի պատճառ
եղան:

Սակայն գարձնենք էջը և պատկերացը-
նենք ուրիշանձի մը՝ Մաքս Ճուքսը (որ բա-
րոյապէս ինկած մարդ մըն էր) սերունդէն
յառաջ եկաղ անձերու ֆիզիքական և բա-
րոյական վիճակը, հաստատելու համար թէ
շարին սերունդը որդիէ որդի անիծուած կ'ըլ-
լայ՝ բնութեան անողոք օրէնքին գործադրու-
թեամբ:

Այս անձը՝ Մաքս Ճուքսը ճնաւ 1820ին,
որով ժամանակակից եղաւ Ճօնաթան Ետու-
ըրտասի իր սերունդէն 120 անձեր հաշուած
են՝ որոնցմէ 300ը աղքատանացներու մէջ
պահուած և խնամուած են, 300ը իրենց ման-
կական հասակին մէջ մեւած են, 440ը զա-
նազան ախտերու ենթարկուած են, 400ը ինե-
ղանդամ եղած են, 50ը անբարոյական կամ
հասարակ պոնիկներ եղած են և վերջապէս
60ն ալ սովորական գողութեամբ զբաղած
են: 130 ոճրագործութիւններ կատարուած
են այս վասահամբաւ սերունդին պատկանող
անձերուն կողմէ և Ամերիկեան կառավարու-
թեան ու ազգին նիւթական և բարոյական

մեծամեծ վասներ հասցունելով անիծեալ
սերունդ» անունով ճանչցուած են:

Սիրելի ընթերցող, Խորհե՛ պահ մը վերցոգրեալ երկու փիճակագրութիւններու վրոյ
որոնք կը պատահին Ամերիկեան կառավարութեան պաշտօնական տօմարներուն մէջ ձօնաթան խոռուցրափ անսւնն ու յիշատակը
օրհնութեամբ կը յիշուի, իսկ Մաքս ձուք-
սրզինը և անոր սերունդինը անէծքով Հայ
ազգը պէտք ունի ձօնաթ անի պէս մարմինով,
մոքով և սրտով առաղջ անձերու, Մաքս
ձուքքրզի պէս մարդկի անէ՛ծք են մարդկութեան. հեռո՛ւ անոնցմէ:

Միայն Եիսուս. — Եպիսկոպոս Պէտք-
րին երբ իր մահուան անկողինին մէջ էր իր
բարեկամներէն մէկը հարցուց իրեն, «Զիս
կրնա՞ն ճանչնալ», սակայն Եպիսկոպոսը պա-
տասխան չտուաւ: Իր սնարին քով գտնուող
ուրիշ բարեկամներ և իր կինն ալ նոյն հար-
ցումը կրկնեցին, սակայն և ո՛չ մէկուն պա-
տասխանեց: Երբ վերջապէս երիտասարդ քա-
րողիչը անոր ականջին մօտեցաւ և հարցուց
«Սիրելի՛ եղբայր, Յիսուս Քրիստոսը կը ճանչ-
նա՞ս», մահամերձին գէմքին վրայ ժպիս մը

փայլեցաւ և իր լոլոր մնացած ոյժը հաւա-
քելով լսաւ. «40 տարիէն ի վեր զինքը սի-
րած եմ և իրմէն սիրուած եմ, ա՛հ, սիրելի՛
Փրկիչս, ի՞նչպէս կրնամ մոռնալ զինքը.՝
Անո՞ր պէտք ունիմ»: Ամէն մորդ գոյն Յէ-
սուսի պէտք ունի թէ այս աշխարհի և թէ՛
յաւիտենականութեան մէջ, բայց մանա-
ւանդ մահամերձ հաւատացեալը իր հոգեւար-
քի տագնապներուն մէջ չի տեսներ և ո՛չ
մէկ բան բացի Յիսուսէն: Սիրելի՛ Յիսուս

Ներողամուռին. — Յովհաննէս Ո-
ղորմած, Աղէքսանդրիոյ Եպիսկոպոսը, օր մը
ազնուականի մը այցելութիւնը ընդունեց:
Խօսակցութեան միջոցին ազնուականը ըստու-
թէ ինք մինչև իր մահը չպիտի ներէր իր մէկ
նախկին բարեկամին որ իրեն զրկանք ըրտծ
էր: Այս միջոցին Եպիսկոպոսին մատուռին
զանգակը զարնուեցաւ և երկուքը միասին
գացին աղօթելու համար Երբ երկուքը միա-
սին ծնբագրեցին խորանին առջև, Եպիսկոպոսը
սկսաւ Տէրունական ազօթքը արտասանել
որուն հետեւեցաւ ազնուականը բառ առ-
բառ, սակայն երբ պիտի արտասանէին «Եւ
մեզի ներէ մեր պարտքերը» աղերսը, Եպիսկո-

պոսը կանգ առաւ, աղնուտակոնը շարունակեց
իր աղօթքը, և այս խօսքն ալ ըսելէ վերջ երբ
միայնակ մնաց անմիջապէս խորհեցաւ իր քիչ
առաջուան խօսքին վրայ թէ՛ չպիտի ներէր
իր նախկին բարեկամին, և ա՛լ չի համարձա-
կելով «ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր
պարտականներուն»ը շարունակելու, ամօթա-
հար կամացուկ մը դուրս ելաւ մատուռէն,
գնաց գտաւ իր նախկին բարեկամը, ներհց
անոր սրտանց և յետոյ փութով վերադար-
ձու մատուռը՝ ուր գեռ Եպիսկոպոսը կը շա-
րունակէր իր աղօթքը, և համարձակօրէն լրա-
ցուց իր աղօթքին մնացեալ մասը:

Իմաստունին բարի խրատը «Նո՞ւ իսր-
ակ՝ ողա բործե»։ — Թամթարիստանի իմաս-
տուններէն մէկը փողոցներէն և շուկաներէն
անցնելով բարձր ձայնով կ'ըսէր օ՛վ'զ որ 400
սոկի տայ ինձ անոր շա՞տ թանկագին խրատ
մը պիտի տամ' թագաւորը երբ լսեց իմաս-
տունին այս խօսքը հրամայեց իր գանձապե-
տին որ 400 սոկին վճարէ և յետոյ խնդրեց
անկէ որ իր թանկագին խրատը տայ իմաս-
տունը ըստաւ «Նո՞ւ իսրակ՝ ողա բործե»։ Պա-
լատականները ինդացին իմաստունին այս


խօսքին վրայ և ըսին թէ ան հարիւր ոսկի չէր
արժեր, Սակայն թագաւորը շատ գոհ մնաց
անոր տուած խրատէն և այդ խօսքը գրել
տուաւ իր սենեկակին պատերուն և իր գործա-
ծած բալոր տնակուն առարկաներուն վրայ։

Քիչ վերջ թագաւորին պալատականնե-
րէն մէկը դաւաճանութեամբ ուղղեց սպաննել-
զնա, գոհ բարձրանալու համար, ուստի կան-
չեց թագաւորին վիրաբոյժը և անոր մեծ գու-
մար մը տալով և բարձր պաշտօն խոստանա-
լով համոզեց որ թագաւորէն արիւն առած
միջոցին թունալի նժդիսկով մը զայն մա-
հացնէ՝ արեան մէջ թոյն խառնելով։ Հին
ատեններ մարդիկ արիւն առնելու ովլորու-
թիւնը ունեին իրենց առողջութեան համար։
Երբ թագաւորը կանչեց իր վիրաբոյժն, սո-
մուդրեց իր չար նապատակը գործադրել։ Իր
ձեռքին մէջ ուներ թունալի գործիքը, այն
ըսպէին երբ ինք պիտի թունաւորէր իր տէրը
իր աչքերուն հանդիպեցաւ պատին վրայ
գուած իմաստունին խրատը։ «Նո՞ւ խորհէ՛
ապա գործէ», ու վիրաբոյժը սկսաւ խորհիւ-
ւնթէ ես թոյն ներարկեմ՝ թագաւորին արիւ-
նին մէջ ինք պիտի մեռնի, սակայն իր յան-
կարծական մահը կասկած պիտի յարաւցանէ,


ուստի բժշկական քննութեան պիտի ենթարկուի որով պիտի ապացուցուի իր թունաւորուած ըլլալը, ան ատեն բնականաբար պիտի գիտնան թէ ես ըրած եմ, և ի՞նչ պիտի ըլլայ վերջս... կախազման։ Այս բոպէտական խորհրդածութեան տակ վիրաբոյժին գոյնը նետեց, ձեռքերը սկսան գողդզալ և չի համարձակեցաւ թունաւորել իր տէրը։ Սակայն թագաւորը տեսնելով վիրաբոյժին շուտըումը և ձեռքերուն գողդզալը, հարցուց պատճառը և խեղճ մարդը անօր սաքերը իշխալով խոստովանեցաւ ա'մէն բան ու ներողութիւն խնդրեց։ Թագաւորը բնականաբար ներեց վիրաբոյժին, սակայն փութով ձերբակալել տալով դաւաճան պաշտօնեան կախաղան բարձրացուց։ Խմաստունին խրատը թագաւորին կեանքը փրկեց։

Սիրելի՛ ընթերցող, սոկեղէն կանոններէդ մէկն ալ աս թող ըլլայ, «Նո-ի Էորհի՛ սող էորդէլ»։

ՃԵՄԱՐՑՈՒՐԵԱՅԻ ՍԻՐՈՅԻ ԽՈՒՄԱՐ. — Դ. գարու մարտիրոսներէն մէկը՝ Ս. Փիդապաս, փողոցներէն քաշուելով դատարան տարուեցաւ, ուր դատաւորը սպառնովիքնե-



ԼԵՒՈՆ ԱՐԱՊԵՏԱՆ
Ուսուցիչ-Հրապարակագիր (Քղի)



ՅՈՎԱՆԻԿ Հ. ԹԵՂԳԸՐԵԱՆ

Քերքող (Գանիրէ)

բով ստիպեց զայն որպէսզի թագաւորին հրա-
մանին հնազանդէր: Սակայն Եպիսկոպոսը
քաջութեամբ պատասխանեց. «Ես Կայսեր
կրնամ հնազանդիլ միոյն այն պարագային
երբ հրամանները ճշմարիտ կ'ըլլան, բայց ես
Երկինքը՝ երկրէն, և երկնաւոր թագաւորը՝
երկրաւոր թագաւորէն նախագաս կը սեպեմ,
ուստի ճշմարտութիւնը չեմ կրնար ու բանալ,
ո'չ ալ կրնամ զայն զնէլ Կայսերու: Երբ ողջ
ողջ այրուեցաւ ինք, բոցերուն մէջն փառա-
բանութիւն կ'երգէր Աստուծոյ:

ԱՌՈՂՋԱԿԱՆ

Ծերութիւնը. — Մարդկային կեանքի
տեւողութեան այն շրջանը, ուր մարտինը
աճելէ դադբելով՝ հետզետէ դէպի ան-
կում ու քայլքայում՝ կը դիմէ, ծերութիւն
կը կոչուի:

Ծերութիւնը կարելի է բաժնել երեք
շրջաններու. սկսող ծերութիւն, բուն ծերու-
թիւն և խոր ծերութիւն կամ զառամութիւն:

Ծերութեան վրայ ճշգրիտ գաղափար մը կազմելու համար պէտք է մի առ մի քննել բնախօսական այն երեւոյթները, որոնք կը պարզուին ծերութեան իւրաքանչիւր շրջանին մէջ:

Ակսող ծերութիւնը իւրաքանչիւր սեռի համար մասնաւոր երեւոյթներով կը յայտնուի կիներուն քավ այս շրջանը կանխահասէ, անոնց ծերութիւնը կարելի է սկսուած նկատել երբ դաշտանը դադրի հոսելը և յաջորդէ ամըութիւնը, վիճակ մը որ սովորաբար 50 տարեկան հասակին մէջ տեղի կ'ունենայի: Այր մարդոց ծերութեան սկզբնական շրջանը 60 տարեկանէն կը սկսի և կը տեսէ մինչեւ 70:

Սակայն երբեմն կրնայ պատահչիւր ժերութիւնը վերսիշեալ շրջանը կանխէ կամ յապազի իւրաքարչիւր սեռի ներկայացուցիչներուն քով, պարագայ մը՝ որ կախում ունի իւրաքանչիւր անհատի ապրելու ։ Կերպէն առաղջական կամ հիւանդագին վիճակէն:

Ծերութեան առաջին շրջանին մէջ մարդդալաբար կը վատուժի, ծննդական գործարանները կը թէրանան իրենց բնտկան պարագանութեանց մէջ: Կինը կ'ամշանայ, իսկ այրը իր նմանը արտադրելու իր կարողութեան շատ բան կը կորոնցնէ: Զգայաբանները

կը թէ երանան իրենց պաշտօնի անթէրի կիրառումին մէջ, մկանային զօրութիւնները երթալով կը նուազին, ողնայարը կը ծռի, տեսողութիւնը կը տկարանայ, մորթը չորնալով դեղին փայլ մը կ'առնէ և մորմնոյ դեղին մասերուն վրայ փոթէր ու խորշոմներ կը գոյանան:

Բուն ծերութիւնը կը սկսի 70 տարեկանէն, երբ թեթև և տկարութիւնները կը սկսին լուրջ հոնդամանք մը առնել, գործարանային շինուածներուն նորոգութիւնը կը նուազի, մկաններու ուժը կը սպառի, ողնայարի կորութիւնը զգալապէս կ'աճի, գէմքը կը գունատի, մազերը բոլորովին կը ճերմկին: Շնչերակներու ու երակներու ներքնաթաղանթը կը կարծրանայ և արիւնը իր շրջանը երակներու մէջէն դանդաղօրէն կը կատարէ: Շնչերակներու այս կարծրացումը բժշկութեան մէջ ծանօթէ և պնդերակութիւն անունով: Անդառութիւնը և մարսողութիւնը թէ երի կատարուելով մարմնոյն ջերմութիւնը զգալաբար կը նուազի:

Ծերութեան այս շրջանին անխուսափելի են անդամալուծութիւնը, արիւնահոսութիւնը, լնդագաբարութիւնը, ջրգողութիւնը և այլն:

Ծերութեան վերջին շրջանն է խոր ծերութիւնը կամ զառամութիւնը, երբ ծերութին կը կորսնցնէ իր մտաւոր ու մարմաւոր բոլոր կարողութիւնները և տեսակ մը ապուշի մը երեւոյթը կ'առնէ: Իր երկչոտութիւնն ու անկարող վիճուկը մանուկի մը երեւոյթը կուտայ անոր եղական մերձեցում մը կեանքի երկու եզրներուն:

Հետզիւտէ մարմայ շարժումները դրժուարանալով, ծայր աստիճան կը դանդաղին կորաքամակ ծերունին դողդոչելով ոսքի կ'ելլէ նոտած տեղէն և գաւաղոնի մը օդնութեամբ հազիւ կրնայ կաղնի կազմ մէկ երկու քայլ առնել, տեղափոխութիւն մը՝ որ յաճախ անդամալուծութեամբ կը վերջանայ: Ներքին գործարաններուն գործունէութիւնը օրէ օր կը դանդաղի մինչեւ վերջնական դադարում:

Սակայն պէտք չէ կարծել թէ բնախօսական վերյիշեալ երեւոյթները որոնք ծերութեան յատուկ են, կը պատշաճին իւրաքանչիւր անհատի: Կան մարդիկ որոնք, հակառակ իրենց յառաջացած տարիքին, ընդերկար կը պահեն իրենց մտաւոր ու մարմաւոր կորով ու գործունէութիւնը: Յաճախ տեսնուած են ծերեր որոնք առանց ակնոցի

կը կարգան կամառանց ցուպի երկար պաշտաներ կ'ընեն, վառ պահելով իրենց մտաւորական կարողութիւններն ու երիտասարդական կորովը:

Սննդառութեան տեսակէտով, ծերերը պէտք է ուտեն փոքրիկ ծաւալի տակ մննդար և գիւրամարս մուռնդներ, ինչպէս կամ, մածուն, հաւկիթ, ձուկ, միւս Խմերուած ըմպելիներու զործածութիւնը օգտակար է. Քիչ քանակութեամբ ընտիր գինի և ոռւրճը լաւ են ծերերուն: «Գինին ծերութեան կամնէ», կ'ըսէ առածը:

Ծերերը յաճախ բայց քիչ ճաշելու են: Ճաշէ ետք թեթև պտոյտները օգտակար են անոնց համար:

Հրաշեայ Տերոսկի

4. Անենուրիւն կամ՝ քնառութիւն շատ պատճառներ ունի, զորոնք բառնալով միայն կարող կ'ըլլանք արմատէն բուժել զայն:

2. Մասցին զբաղում, ձանձրոյթ, յուսախարութիւն, յուզում, ինչպէս նաև մարմազութեան խանգարում: Գիշերային իրախճանութիւնք, պար, թատրոն, սինէմա և լուսատճառ են քնառութեան:

3. Դարմաններն են նախ մարսողութեան հոգ տանիլ, մանաւանդ երեկոյին քիչ ու-
տել, թեթեւ բան մը ոււաել. քիչ մը հաց,
կարագ, նարինջ, դիւրամարս պառող և լն.
տառվ արիւնը ուղեղէն ստամբս կը քաշուի
և քունը տեղի կ'ունենայ:

4. Երբ քնառութիւն ունենաք բարձ մ'ալ
աւելի գրեք ձեր գիխուն տակը, որով ձեր
արիւնը ուղեղէն վար իջնէ:

5. Մաքրութեան, մարմնոյ և անկողինի,
իսկա հոգ տարեք, լուերը, մըուկները քնա-
ռութեան պատճառ են, փոխանակ անոնց
հեռացման ճար մ'ընելու բժիշկն դիմել ու
քնանալու դեղ տանելն յիմարութիւն է:

6. Այծէ մըրթային հիւանդութիւն մ'ու-
նիք ջանացեք ժամ առաջ բուժել տալ,
քանիք անհնար է քնանալ առանց այդ ար-
դելիչ վիճակէն աղատելու:

7. Մէզի փամփուշար երբ անկողին երթա-
ւ առաջ լաւ մը չպարպուիր անքնութիւն
կը պատճառէ: Ուստի սովորութիւն ըրէ այս
մասին ուշադիր դտնուիլ:

8. Գրդակէ բօմաններու ընթերցումը ան-
քնութեան պատճառ է, մանաւանդ երբ
անկողինի մէջ պառկոծ կարգաք, դադրե-

ցուր այս վատ սովորութիւն և անքնութիւնը
կը բուժուի ինքնին:

9. Հոգեւոր երդ, շարական մը վանկ վանկ
մաքին մէջ կրկնելով լաւ բուժիչ մը կ'ըլլայ
անքնութեան, փորձել կ'արժէ:

10. Ցիշէ սակայն որ «Եօթն ժամ ի քուն
բաւ է ամենուն», ասկէ աւելին մի փնտաեր.
մի փոխեք նաև քնոյ ժամերը, ցերեկը աշխա-
տանաց և գիշերը քնոյ շատկացուցէք:

**Ճարոնական 41 հրահանգներ 400 տա-
րի ապրելու համար.**

1. Որքան հնար է բացօդեայ տեղ ապրէ:
2. Կանուխ պանկէ, կանուխ ելիր:
3. Վեց կամ առ առաւելն 7½ ժամ՝
քնացիք մութ տեղ մը բաց պատուհաններով:

4. Սուրճ ու թէ յ շատ չափաւոր գործա-
ծէ, մի ծիսեր, ալքոհոլէ հրաժարէ:
5. Օրը միայն մէկ անգամ միս կեր:

6. Օրական մէկ կարճ լոգանք ըրէ, որքան
կրնաս տոկալ, տաք ջրով:

7. Միայն բուրդէ հանդերձներ հագիր:
8. Շարաթը մէկ օր հանգչէ, այն օրն մին-
չեւ իսկ մի կարգաք և մի գրեր:

9. Բուռն կիրքերէ հրաժարէ նաև չափա-
զանց մտային աշխատութենէ:

40. Զափաղանց տարք տեղ մի կենար:

41. Մարմոյ գործարաններէն որն որ
տկարանայ նոյն տեսակ գործարաններն գոր-
ծածէ կերտակուրիդ համար! :

Երկայնակեցուրիւն. — Մարդ չմոռ.
Նիր հապա մարդ անձնասպան կ'ըլլոյ, ոյս-
պէս է ըստած գիտուն մը, և ճշմարիտ է ոյս,
երբ նկատողութեան առնենք անժուժկալու-
թենէ, արբեցութենէ և տեսակ տեսակ մո-
լուժիւններէ պատահած մահերը:

Կիները տւելիի երկոյնակեաց են քան ոյ-
րերը, քանզի տւելիի կանոնաւ որ կեանք կ'ան-
ցնեն և ժուժկալ են քան ոյլը մարդիկ, նաև
զինուրական տաժանելի կեանքի ենթա-
կոյլ չեն:

Բացօդեոյ կեանքը կը նպաստէ երկոյնա-
կեցութեան, երկրագործներն և գիւղը բնա-
կողներ տւելի երկոյնակեաց կ'ըլլան:

Կրօնականները իրենց կանոնաւոր և չա-
փաւոր կեանքով ամենէն տւելի երկոյ-
նակեաց կ'ըլլան, արուեստաւորներուն միջին

տարիքը 65 է բժիշկները հազիւ 56 տարեկան
կ'ըլլան:

Անոնք որ կերտուխումի և սեռային հա-
ճոյքներու անձնատուր են եղած շատ կարծ
կեանք կ'ունենան, արքայական ընտանեաց
կենաց տեւզութիւնը շատ կարծատեւ
կ'ըլլոյ:

Մեծն Ազէքսանդր գինեմոլութեան զոհ
է եղած, կարոյու ի, ֆրանսուա Ա., կարո-
լութ, Լուի Ժ. և Ժ. Ժ. Ժ. մեռած են
շատակերութեան հետեւանքէ, և կին որկ-
րամնը և գինեմոլ:

Ժառանգական է երկայնակեցութիւնը.
կան երկայնակեաց գերգաստաններ, նաև
ծնողաց տարիքը մեծ գեր կը կատարէ եր-
կայնակեցութեան մէջ, երբ հայրը 25-40 և
մայրը 25-35 տարեկան ըլլայ տառնց զաւակա-
ներն քաջառողջ և երկայնակեաց կ'ըլլան
40ը անցուկներու զաւակները կարծատեւ
կեանք ունեցող զաւակներ կ'արտադրեն,
ուստի փութալ կանուխ ամուսնանալ:

Անունդը երկայնակեցութեան վրայ կարծես չունի ազգեցութիւն. բուռակեր և մատկեր, լոկ չուր խմող և ջրախառն գինի խմնղ, ծխող և չծխող երկայնակեաց են եղած, խնդիրը ժուժկալութեան և չափաւորութեան վրայ է:

Արիւնարբու անասնիկները, որոնք տըզբաւկ անունով ծանօթ են, ախտաբուժութեան էական տարրը կը կազմեն: Առնք տախոնվ շատ յարգի էին Պոլսոյ մէջ: Բայց հիմա «Տէմօտ» եղած են: Եւ սակայն Եւրոպացի գիտունները ոյս օրերս սկսած են մեծ յարգ ընծայել այդ արիւնարբուներուն, որոնք պատիւ կ'ունենան թերթերու սիւնակներուն մէջ փառաբանուելու: Գիտունները կ'ըսեն թէ տղրուկները կրնան օգտակարապէս գործածուել եթէ ուրիշ հրւանդի մը մարմասոյն վրայ գրուած չեն: Բժիշկի բացակայութեան տաեն անսնք մեծ ծառայութիւններ կը մատսացանեն, ստիպողական պարագաներու մէջ գործածուելով: Տղրուկը գործածելէ առաջ անհրաժեշտ է մարդուն մորթը ալքոոլ և յետոյ տաք ջրով լուալ, որովհետեւ տղրուկը խիստ սուր հոտառու-

թիւն մը ունենալուն համար կը պժոխայ աղտոտու մորթի վրայ իր խայթուածքը պալուցնելէ: Ասիս ֆէնիքը անհանգիստ կ'ընէ զինք և սիւզլիւմն ալ ախորժելի չգար անոր: Իր խայթուածքը ջզայնոտներուն միայն ցոււ կը պատճառէ: Եթէ ըմբռոտանայ և չուզէ իրեն յանձնուած պաշտօնը կատարել, քիչ մը կալթ կը լեցնէք վրան և եթէ դարձեալ վարանի այն տաեն պէտք է պաշտօնանկ ընել զայն և ուրիշ մը յաջորդ կարգել անոր: Տղրու համար 5 եւ չափահաններու համար 45-20 հատէ աւելի գործածելու չէ: Սովորաբար տղրուկ մը երեք քառորդ ժամէն կ'ուռի այն տաեն ինքնին կը բաժնուի մորթին վըրայէն, 40 45 կրամ արիւն ծծելէ ետք: Արիւնը սակայն կը շարունակէ հոսիլ փոքրիկ վէրքէն, որուն վրայ անասնիկը հիւթ մը ձգած է և այս հիւթին յատկութիւնն է արիւնին թանձրացումը արգիլել: Եթէ արիւնահոսութիւնը ստատկանայ, մատերնիդ քանի մը վլյուկեան վլյուկին վրայ կը դնէք և արիւնը կը դադրի: Եթէ տղրուկը յապաղի մորթին վրայէն բաժնուելու, և շարունակէ արիւն ծծել, դուշացէք լունութիւն ի գործ դնելէ և զայն մէկդի քաշելէ, որովհետեւ, «զոցի

նմանող իր փոքր տկաները կրնան վերքին
մէջ մնալ և վխասել։ Վրան երբ քիչ մը աղ
կամ ծխախոս ցանեք իսկոյն կր բաժնուի և
վար կիյնայ։ Զգուշացեք տղրուկ գործածելէ
մարմնոյն ոյն մասերուն վրայ, ուր մօրթը
խիստ նուրբ է։ Մի մոռնաք հակ որ ոյդ
որիւնարբու անասնիկին խոյթուածքը եռան-
կիւնաձեւ սպի մը կը թողու որ չ'անհետիր.
Դէմքի վրայ գործածեցէք ոյն տառն միայն
երբ ուրիշ կերպ հնար չէ ընել։ — Բայց մա-
նաւանդ զգուշացեք մորդկային տղրուկներէ,
ո՛րքան ալ փայլակնաշող երեւին անոնք։

Հրայր

Պրուսայի գաֆլճաներուն աւազանե-
րը մոնողներուն յատուկ։

Երիտասարդ մը հինգ անգամ աւազան
մը մտաւ, յետոյ քիմիթ հիւանդութեան հա-
մար քիչկին դիմեց։ Էմիշկը յորդորեց աւա-
զան մանելէ զգուշանալ, հիւանդը սակայն
չէր հաւատար, որ քիմին հիւանդութիւնը
անկէ կը պատճառէր, ուստի շարսւնակեց
աւազանը գործածել։ Անմիջապէս քիմին
հիւանդութիւնը կրկնուեցաւ, երիտասարդը
չ'ոթափեցաւ մինչեւ որ երրորդ անգամ այն

հիւանդութիւնը կրկնուեցաւ։ Ան ատեն ա-
ւազանին անմաքրութիւնը պատճառ ըլլալն
հասկցաւ, այնուհետէ այլ եւս գլուխը աւա-
զանին մէջ չէր միրճեր և կատարելապէս
ապաքինեցաւ։ Ականջի հիւանդութիւներ
միեւնոյն պատճառէ յառաջ կուգան, և շատ
անգամ ալ խլութեան պատճառ եղած են
Գիտէք թէ մեզմէ առաջ ո՞վ է մտած ոյդ
աւազաններուն մէջ, ուստի գոնէ գլուխնիդ
մի միրճեր այդ աղտոտ ջուրին մէջ։

Պանիր կերէք, և քաշ պանիր հաւասար
է 2 քաշ միսի, և տոկէ աւելի դիւրամար է։
Պանիրը 2 անգամ աւելի մննդարար է քան
հաւակիթը, և 3 անգամ քան ձուկը։ Պանիրի
օճիք, մոքարնա պանիրով, գետնախնձոր պա-
նիրով տապկուած կարեւոր սնունդներ են։

Առանց ծամելու կերակուրն կուլ տալ
ծանր հիւանդութեանց պատճառ կ'ըլլայ,
մէն մի պատառ այնքան ծամելու է որ ինք-
նին որկորն ի վար սահի Զծամուած կուլ
տրուած կերակուրներու պատճառաւ ստա-
մեքսի բորբոքում, խիստ գլխիցաւ ևն։ որո-
վայնի խիթ, սոճէ, այս' ստամեքսի քաղցկեղ

իսկ ասկէ կրնայ ծագիլ, մինչեւ իսկ աղիք-ներու փտութիւն՝ հետեւանք է ասոր։

Մրէ աղայք վարժուին բաց պատուհան-ներով ննջասենեակի մէջ քնանալ, բացօդեալ տեղ շատ շարժում ընեն, և տւելի բուսական կերակուրներով սնանին, հաղիւ թէ կը հիւանդանոն, և կամ շատ թեթեւ կ'անցնի հիւանդութիւնը։

Մարձումը (Համար) վերսախն սկսած է, և իրաւամբ, մեծ համարում՝ վայելել։ Միայն թէ ակնկալուած արդիւնքը ձեռք բերելու համար պէտք է որ գործէն հասկցող անձի մը ձեռամբ կիրարկուի, վասնզի հակառակ պարագային վնաս յառաջ կուգոյ։ Օրինակի համար, վտանգաւոր է մարձել այնպիսի տեղեր ուր կը կասկածուի թէ թարափ գոյութիւն ունենայ, և ձախող մարձումով՝ թարափը աւշոյին գեղձերուն մէջ մտնէ և թու-նաւորէ արիւնը։ Նոյնպէս՝ վտանգաւոր է երակին մէջ արիւն թխմուած ըլլալէն ուռեցած սրունքը մարձել, որովհետեւ հն թանձրացած արիւնը մարձումով կը լուծուի և սր-տին ու անկէ թոքին երթալով, շատ վտան-գաւոր հետեւանք կրնայ ունենալ։

Կան այնպիսի ուտելիքներ զորս մարդ ուտելէ ետքը երկար ատեն գէշ հոտ մը դուրս կուգոյ բերնէն ձաշէն եաք մէկ քա-նի հատիկ նոր խարկուած խոհվէ ծամելով տարոր առաջքը կ'առնուի։


Պազրւկ ու մաքուր ջուրը բերնին, կո-կորդին ու որկորդին թաղանթները թրչելով, դիւրաւ կ'անցնէ մորդուս ծարաւը, և հե-տեւաբար խմողը կը զվահայ և ջերմութիւնը կը նուազի։ Պազրւկ ու մաքուր ջուրը (շա-փուռը քանտակութեամբ) կ'ոգեւորէ նաեւ ստամոքսը և շարժման մէջ կը դնէ անոր պա-րունակութիւնը, կ'ոգնէ մարտողութեան, և մանաւանդ լաւագոյն գարման է պնդութեան դէմ։ Ստամոքսին մէջ գտնուած ջուրը շու-տով կը ծծուի արիւնէն, իրմէ դուրս հանած ջրային մասին տեղը դնելու համար։ Պէտք է լոյժ, հեղուկ, այսինքն ջրոս վիճակի մէջ պահել միշտ արիւնը, որպէսզի դիւրին ըլլոյ տնոր ըրջագոյութիւնը։

Պէտք է միշտ յիշել թէ նշանաւոր բժիշկ-ները կ'արգիւն 48 տարեկանէն վար գտնուող-ներուն սուրճ կամ թէ, խմել, վասնզի ասոնք


Հաստ կը գրգռեն անչափահասներուն ջղային
դրութիւնը:

Զրաբուժութեան ատեն անհրաժեշտ է
զգուշաւորութիւնը: Կանոնաւորութեամբ
գործածուած ջրաբուժումը կը զօրացնէ թէե
մարմինը, բայց ջուրին անկանոն կիրարկումը
ընդհակառակը կը վկասէ մարմնոյն: Հետեւ
արար բուժումի սկզբնաւորութեան ատեն
ուշադրութիւն ընելու է, տակաւ առ առ
կաւ փոխել բարեխառնութեան առահճանը:
Այս պարագային մէջ ալ մաքի առջեւ ու-
նենալու է փորձառութեան սահմանած այն
հնաւանդ օրէնքը թէ կենցաղավարութեան
եղանակին յանկարծական փոփոխումը վսա-
սակար է առաջանալու: Մարդ կենցաղա-
վարութեան մէջ իրեն սովորութիւն ըրած
մէկ եղանակը փոխած ատեն շա'տ յամրա-
բար մէկէն միւսին անցնելու է:

Սրէ ննջասենեակիները տան արեւ-
մըտեան կողմն են, անկողինները յաճախ շի-
նելու գործը յապաղելու է մինչեւ կէս օրէն
ետքը, որպէսզի լաթերը արեւուն լիակատար
բարիքին մասնակցին: Կոկիկ պահելու սխալ



ՏԻԿԻՆ ՇՈՒՇՈՅ ՀԱՐԻՓՍԻՄ: ՇՄԱՒՌՆԵԱՆ
ՔԵՐԲՈՂ



ԿԱՐԱՊԵՏ Վ. Ա. Բ. 1. Խ. Լ. Հ. Ա. Ա. Ն.
(Խարբերդ)

գաղափարը պէտք չէ որ արդեւք ըլլոյ տունը
մաքուր և առողջ պահելու աւելի բարձր
նպատակին:

Երբ ցերեկը հագնուած ներքնազգեստ-
ները նորէն պիտի հագնուին, զանոնք պէտք է
թոյլ կերպով սենեակին մէջ կախել գիշերը,
և գիշերային հանդերձները պէտք է ցերեկը
օդաւորել արեւուն մէջ: Երենց սենեակները
միշտ կարգաւորեալ և կոկիկ ցուցնել ուզող
տան աիկիններէն սմանց գիշերային զգեստ-
ները մնաթ, խորշերու մէջ ծածկելու և կամ
ծրաբելով բարձերուն ետեւները գնելու սո-
վորութիւնը աղէկ չէ: Աւելի աղէկ է զգեստ-
ները կախել յատուկ շինուած փայտեղէն
կազմածէ և լոյսի մէջ: Նամանաւանդ աւելի
եւս աղէկ է զանոնք մաքրել և թարմացնել
ժամանակ մը դուրսի օդին մէջ կախելով
շուանի մը վրայ: Կենսականութիւն կայ Արե-
ւու լոյսին մէջ: Ցոյժ զգայուն անձեր լաւ
կը զգան այն հաճոյքը, զոր մարդուս կուտայ
արեւուն և հովին ենթարկուած հանդերձ-
ներու հպումը:

Ճաօէն առաջ կամ ետքը խնձոր ուտելը
շատ նպաստաւոր ազդեցութիւն ունի մար-

սողութեան վրայ Հաստատուած է արդէն
թէ քիչ միս և շատ պառող ուտելը լւա-
գոյնն է ։ Ֆրանսացի նշանաւոր բժիշկ մը Փա-
րիզի մէջ գծուարամբասութեան և յօդա-
ցաւի նուազումը ինձոր շատ ուտուելուն կը
վերագրէ և կը գրէ թէ ինձորը առողջարար,
մարսողական և ստամբուլ զօրացնող պառող
մ'է ։ Ա. լ. թ բժշկին գրածը ուղիղ լւայ թէ
ոչ, սա՛ ստոյգ է որ Ֆրանսացիները շատ կը
սպառեն ինձոր և ուրիշ պառզներ Ասոր
համար է որ Ֆրանսայի մէջ պտղատու ծա-
ռերու մշակութիւնը վերին աստիճանի զար-
գացած է ։ Տարակոյս չկայ թէ պառողը չա-
փաւոր քանիակութեամբ, շատ առողջարար
ոնունդ մ'է ։ կէս օրուան ճաշէն ժամ մը
առաջ կերուած ինձորը ախորժակ կը լանայ
և փորձառուները գիտեն թէ ինձորաթթուն
և փորձառուները գիտեն թէ ինձորաթթուն
և մարսողական մըն է ։ Բայց մնոնք որ
լաւ մարսողական մըն է ։ Բայց մնոնք որ
ինձորը գծուարամբու կը գտնեն թող կամ
քիչ ուտեն կամ բնաւ չուտեն ։ Հում ինձո-
րէն նեղութիւն զգացողները եփուած թող
ուտեն, որ տկար ստամբուներու համար իսկ
դիւրամբարս է ։

Ա. Ա. Պ. Զ. Ա. Վ. Ա. Կ. Ա. Վ. Կ. Ա. Վ.

Ս. Ա. Պ. Զ. Ա. Վ. Ա. Կ. Ա. Վ. Կ. Ա. Վ.
Համար, խորհուրդ կուտամ երիտասարդնե-
րուն 30 տարեկան ամուսնանալ և օրիորդ-
ներն՝ 18 տարեկան

Պլատոն

Ծոմը կամ պահեցազութիւնը մոլութեան
մահն է, առաքինութեան ձայնը, կորովի աղ-
բիւրը և բոլոր հիւանդութեանց գարմանը

Թոքերով և մորթով է որ գլխաւորաբար
կը ծերանանք. հոկենք անոնց առողջութեանն
Պուշչարայ

Ծնելու նման մեռնին ալ բնական բան
մըն է, և մարդ կարելի է աւելի կը տառապի
ծնելու քան մեռած ժամանակ:

Ֆ. Պայն

Գրեթէ բոլոր մեծ գիտունները ջուր
միայն խմած են։

Sof. Ֆլեոնի

Գինիի չափաւոր գործածութիւնն ալ
մարսղութեան կը վնասէ:

Բրօք. Բուժե

Եթէ կ'ուզէք առողջ ըլլալ հեռու կե-
ցէք բժիշկէն և դեղագործէն ! ?

Եթր ամսւսնութիւնները շատ գել կ'աղ-
դեն սերունդին վրայ:

Օգտուեցէք գարնան առաւօտեան մո-
քաւը օդէն և ծծեցէք կուշտ ու կուռ դե-
ղբուն ամենէն զօրաւորն է:

Օդը շնչառութեան հայն է: Այս հացը
ուտելու տեղ կը շնչուի. ահա՝ տարբերու-
թիւնը

Մասն Սիմոն

Շնչուած մաքուր օդը աւելի օգտակար է
քան սպառուած կերակուրը:

Զաւարթ մարդոց հետ ճաշեցէք, բնաւ
անմարսղութիւն չպիտի ունենաք:

Թիւրիէ

Մէկ հաւկիթը բաւական է, երկութը
օգտակար, երեքը չափազանցութիւն:

Զեր բժիշկը դուք եղէք սակաւակեր
եղէք և ջուր խմեցէք:

Հոգմանն

Կ'ուզէք 80 տարեկան ապրիլ, առէք
քիչ կերակուր և ըրէք շատ շարժութեր:

Կերակուրդ պակսեցուր, կետնքդ կ'եր-
կարի:

Սեղմիրանը (գորսէ) հագուստեղէններու
ամենէն վնասակար և ամենէն աղետաբեր
մասն է:

Տօֆք. Ֆուա

Մաքուր օդը լաւ մնունդի մը չափ օդ-
տակար է. օդը մեր կենսական ուժն է:

Տօֆք. Ռէկվէյլի թառիզ

Մանկանց հագուստի առաջապահու-
թիւնը կը կայանայ երեք բառի մէջ. մաքուր,
պարզ և ազատ:

Ֆոնսակոխիլ

Մարմնամարզ ըրէք, ձեր երիտասարդուն-
թիւնը պիտի երկարէք:

լօյ

Ինչ որ հաճելի կը թուի և ճաշակնուդ-
յարմար, երբեմն իիստ վտանգաւոր է ձեր
ստամբուխն Տօֆք. Ռեվէյլի Բառիզ

Մաքուր կեցողը, իր առողջութեան
աէրն է: Տօֆք. Ֆոշոն

Նա որ լաւ չը ծամեր, ուշ կամ կանուխ
ստամբուխ հիւանդութեան ենթակայ պիտի
ըլլոյ:

Առողջապահական միջոցներ գործածե-
ցէք եթէ չէք ուղեր դեղ գործածել:

Մարդ կերած կամ մարսած ժամանակ
պէտք չէ մոռաւոր աշխատանք ունենայ:
Անամ Կօրիկ

Լաւ եփած հացը, չոր միսը, գիւրամարս
բանջարեղէնները լաւ կը յարմարին բանսա-
տեղծներուն և գիտուններուն:

Մոլէցօք

Զափաւըութիւն, կանոնաւոր աշխա-
տանք, պարզութիւն, աչո՛ երկար պարելու
գաղտնիքը:

Ֆլուէնս

Նա որ շատ զօրաւոր սնունդ կ'առնէ,
չը տառապելու համար պարտի մեծ շար-
ժութներ ընել:

Ոգելից ընդելիները մնկոտները աւելի
մնկոտ կ'ընեն:

Պէտք է քթով շնչել, թոքերուն մէջ
գացած օդը տաքցնելու համար:

Քանիդ

Ամեն ճաշէ առաջ, ձեռքերնիդ լաւ մը
լուացէք:

Առողջութիւնը կարելի չէ ձեռք բերել
ծուլութեամբ և անգործութեամբ:

Պլուտարկոս

Գիշերուան ճաշը հետեւեալ օրուան
նախաճաշին վասելու չէ:

Յուրաքին գիմադրելու համար թէ՛յ գոր-
ծածեցէք։ Տօֆք. Պապինէ

Լոգանքէ մը վերջ ամենաօքտակարն է
սոքով պապա մը։ Տօֆք. Վիլկն

Պաղպաղակը ճաշի ժամանակ, շատ քիչ
անդամ՝ կը վսասէ, բայց ճաշերէ դուրս,
միշտ կը վսասէ, մի՛ գործածէք։

Տօֆք. Տօնէ

Նա որ լաւ կը ծամէ, անոր ստամբուր չը
տառապիր։ Տօֆք. Ֆլիոնի

Զափաւոր կերակուրը շատ հիւանդու-
թիւններ կը վանէ։

Հատ ախորժակով կերակուրին կը յո-
ջորդէ գէշ գիշեր մը։

Ճաշի տաեն պէտք է գրեթէ երեք դա-
ւաթ ջուր խմել։

Տանը ամենէն վերի յարկը բնակեցէք։
Տօֆք. Ֆլիոնի

Եարժումը մարմարյն առողջութեան այն-
քան կարեւոր է որքան սնունդը։

Տղոց սենեակներուն մէջ, ո՛չ վարագոյր
դիր, ոչ ալ գորգ։ Տօֆք. Ֆլիոնի

Ծիախոտի շափաւոր գործածութիւնը
աւելի օգտակար է քան վսասակար, բայց
պէտք չէ օրը 20 կրտմը անցնիլ։

Տօֆք. Մոնիկն

Ստամբուկ տառապողները միայն եփած
պտուղ ուտելու են։ Տօֆք. Մառինէ

Ծարտւ եղած ժամանակնիդ ջուր խմե-
ցէք, բայց քիչ քանակութեամբ մէկ ան-
գամեն։ Տօֆք. Քնայյը

Լաւ քնանալու համար պէտք է ֆիզի-
քական շարժում և գաղջ ջուրով պահեօ մը։
Տօֆք. Ֆլիոնի

Եթէ մարդ քիչ ուտէ և քիչ խմէ, երբէք հիւանդ չ'ըլլար:

Ոգելից ըմպելիներն կարող են հանձարներն անգամ փճացնել:

Հաւաքեց

Առուսորոյ

ՏՕՔԹ. Մ. ՄԱԼԱՔԵԱՆ

ՊԱՅԻԿԱՐՔ ՃԱՆՃԵՐՈՒՆ ԴԷՄ

ՈՐՈԲ ՏԱՐԱՓՈԽԻԿ ԽԻւԱՅՈՂՈՐԻ ՅԱՅԵՐՈՒ
ՏԱՐԱԾԻՅՆԵՐ ԵԲ

4. Գիշատկանապէս ճանչցուած ու ամենօրեայ փորձառութեամբ ապացուցուած է՝ թէ ճանճերը տարածիչներն են բազմաթիւ տարափոխիկ հիւանդութիւններու, մասնաւորապէս քօլերայի, ժանտախտի, թոքախտի, կեղծմաշկի եւայլ:

5. Ճանճը ո՞չ միքրոպի բոյն մ'է, այլ ան կը կրէ նյոյնպէս ամենուրեք, իր թեւերով, թաթիկներով ու կղկղանքով, հիւանդութիւններու սերմերը, որովհետեւ հիւանդին սենեակէն անիկա կ'անցնի ճաշասրահը, ուր

կը դպի բոլոր կերակուրներուն՝ հիւանդին վէրբերուն, թուքին ու աղտեղութիւններուն հայելէ յետոյ, կամ ճեմիչներու, տան կամ շրջանակներու աղբերուն վրայ պատելէ յետոյ:

3. Ճանճը արտակարգ արագութեամբ կը բազմանայ: Ապրիլի և Մայիսի միջև ծնող զոյգ մը ճանճ մինչև Սեպտեմբերի ատենաները 5,598,720 միլիոն ճանճերու ծնունդ կուտան, որովհետեւ անոնց սերունդները ծնելէ շատ քիչ յետոյ արդէն կ'սկսին իրենց կարգին առատօրէն բազմանալ:

4. Նկատելով որ երբ ճանճերը արդէն սկսած են բազմանալ, անկարելի է այլեւս իրական կերպով անոնց առաջքն առնել, պէտք է ուրեմն անոնց գէմ պայքարի սկսիլ շատ կանուքին, Ապրիլին և նյոյն իսկ աւելի առաջ:

5. Զանոնք ջնջելու համար, պէտք է սկսիլ զանոնք ոչնչացնել հօն ուր իրենց ձուերը կ'ածեն: Այս տեղերին են: Ա. Ճեմիշներն ու կոյուղիները. Բ. տնական աղբերը. Գ. ախոռներն ու ամենուրեք, ուր աղբիւս կը գտնուի. Դ. լճացած ջրերն ու խոհանոցներու և պարտէղներու խոնաւ տեղերը, և վեր-

ջապէս բոլոր աղտեղի ու վատառողջ վայրերու մէջ:

6. Ճանճերը ոչնչացնելու համար ամենէն աղդեցիկ միջոցներն են. Գլօթեր ար չ, Սիւլֆաթ ար քիւփիր, Սիւլֆաթ ար ֆեր ճեմիշներու համար, Աղտեղութիւններու, ախոռի աղբին, լճացած ջուրերուն եւայլնի համար գործածել մարած կիր, ֆէնոլ, իւիւ ար շիսթ, քրեզոլ, քարիւղ եւայլն:

7. Արդէն հասած ճանճերը փճացնելու համար, վերեւ յիշուած միջոցներէն զատ, գործածել ճանճասպան թուղթերը, ջուրով լցուն ամանները, ուր պէտք է աւելցնել 40% ֆօրմօլ և բալոր այն միջոցները որոնք կրնան զանոնք բռնել և սպաննել,

8. Ոչնչացումի այս միջոցներէն զատ, պէտք է կանխազգուշական միջոցներ ճեռք առնել կերակուրները ճանճերու հպումէն զերծ պահելու համար: Նայելով պահուելիք կերակուրի ահսակին, զանոնք ծածկելու է երկաթաթել կափարիչներով, լոթով կամ թուղթով: Ամէն պարագայի մէջ, պէտք է որ կերակուրը զերծ մնայ այս հպումէն, ոչ միայն որովհետեւ ճանճը չօն կը ճգէ ամէն տեսակ աղտեղութիւններ, այլ որովհետեւ

և մանաւանդ որ՝ ան հօն կը զետեղէ շատ մը հիւանդութիւններու սերմերը, որոնց զոհերը կ'ըլլանք մենք այսպիսով:

Եթէ մինչև այսօր անգիտակից զոհեր էինք մենք, այս աեղեկութիւնները ունենալէ յետոյ, գիտակից ու յանցաւոր զոհեր եղած կ'ըլլանք, ու մեր և մեր նմաններուն գահիճները:

Կայս. Բժշկական Բնկ.

Աղտօնութիւնը սոսկալի աւելներ կը գործէ: Մորթի ծակախիքներն աղտավ կը խըսուին, այս ծակախիքներն գոցուելով արտաթորումը կը գագրի, որով արիւնը կը թունաւորուի, արեան վնասակար բաները, որ արտաքսուելու էին ներսը, արեան մէջ, փակուած մնալով մորդը կը թունաւորեն: Այս մորթին ծակախիքներն խցուելով երիկամունքի հիւանդութիւն յառաջ կուգայ: Երիկամունք՝ մարմինէն արտաքսելու էն կարեւոր գործարանն է. երբ աղտին պատճառաւ մորթը կը գագրի արտաքսելու, երիկամունքին պաշտօնը կը կրկնապատկուի, կը սովորուի չափէն աւելի գործել, մարմինէն ար-

տաքսելու վնասակար բաները. ատեն մը յա-
ջողելէ ետև կը ակարանան երիկամունք, հի-
ւանդանալով. ախտաւոր կ'ըլլան։ Ռւսոր եթէ
մորթը մաքսւը պահենք մարմնի առօղջու-
թեան շատ նպաստած կ'ըլլանք։

Նասրը. — Հացի կեղեւ, +ինոր, թամթիւէ
զօրաւոր քացախի մէջ, դիր նառըբն վրայ,
լամով մը կապէ. գիշերը ըրէ այս, կրկնէ մի
քանի անդամ և նասըրը կ'անհետի։

Կ'ուզե՞ս որ մազդ չժափի, առաւօտը
երեսդ լուցած ատենդ մազերդ ընաւ մի'
թրջեր, այլ չոր սանտրէ և վրձինէ մա-
զերդ, Սակայն գոնէ շաբաթը մէկ անգամ
գլուխդ օճաւով լսւա, մազերդ լսւ մը չորց-
նելէ ետեւ, լուալէդ անմիջապէս ետքը, 15
բոպէի չափ մազերդ մեզմօրէն վրձինէ։

Գլխու մորթը հիւանդութեան խիստ
ենթակայ է, նաև հիրաթափութեան պատ-
ճառ, անմաքրութիւն։ Թեփոս զլութը մոր-
թի հիւանդութիւն ունի. պէտք է մաքրու-
թիւն, դարմանը պարզ է. ջուր, օճառ և

դրձին. ասոնք լսւ գործածովը ու թեփոս
գլուխ կ'ունենայ ու ալ հերաթափութիւն։

Յիմարութիւնը, լսա Տօք. Նիքէի հի-
ւանդութիւն մ'է որ արեան կամ ուղեղի
թունաւորումէ յաւաշ կուգայ. երբ անոր
պատճառներն վերցուին յիմարութիւնն ալ
կ'անցնի։

Լեմոնի հիւթը նասըրի գեղ է. օրը 2 3
անգամ՝ քսէ այս հիւթը նասըրին վրայ։

Մրկիրս արեգակէն կ'ընդունի իր տա-
քութիւնն և լցոր Բայց արեգակը միեւնոյն
ժամանակի մէջ չկրնալով երկրիս ամէն ծայ-
րերն իր ճառագայթները զրկել, պատճառ-
եղած է տաքութեան պազութեան, հետե-
ւապէս օրուան. և գիշերուան յաջորդու-
թեանց։

Ամրուն շատ տաք օրերուն մէջ օդը կ'ա-
նօսրանայ ու կը թեթեւնայ, որով հաղիւթէ
շնչառեւարութիւն տեղի կ'ունենայ։

Մարգուս կարողութենէն վեր է օդին
տաքութեան դէմ գալ: Բայց և այնպէս

կարող ենք զմեզ պահպանել արեգակին ճառագայթներուն ոչյն սասատիկ ազդեցութիւններէն:

Եթէ եկեղեցիներ և ոյլ քարաշէն բնակարաններն ամարուան մէջ զով են, ի՞նչ է պատճառը, եթէ ոչ՝ արեւուն չկընալ թափանցելն այդպիսի տեղուանք:

Ասկէ կը հետեւի որ ամսու ատեն պատուհանները գոց պահելու է, մեծ գործարաններու մէջ աւազաններ շինելու է, զի ջուրը շոգիի վերածուած ատեն օդին ջերմութիւնը կ'աւանէ:


Բնական ջերմութիւնն ալ բարեխառնելու է. զովացուցիչ ըմպելիններ խմելու է. արեւուն ճառագայթներն ընդունելու յատկութիւն չունեցող հագուստներ և կօշիկներ հագնելու է, ինչպէս ճերմակեղէնք:

Տօֆք. Տ Աղահվերտի որդի


Անբնութիւն. — Պառկելէ գոնէ Յժամ առաջ լնիթրիք. միտքդ, ուղեղդ մի գործածեր, Քունը հուրս է, ոչ թէ սախզմամբ և գեղով, այլ ինքնին իբր բնական բան: Երբ քունը փախչի ծանր, ծանր երգեր կամ ստանաւորներ ըսէ մաքէդ:



ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ԹԵՂՅԵՒԱՆ



ԱՐՄԵՆԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ



804. ԵՐՈՒԱՆԴԻ ԶԼՅԱՑՔՆԱՆ

Ճացը՝ 100 ին 80 սնուցիւ նիւթ կը պարունակէ. լուրիսն՝ 90, սիսեռը՝ 93, սապը՝ 94, կաղամբը և շոգգամբը՝ կանաչեղինաց էն ջրաշատը 400 ին միայն 8 հաստատուն նիւթ կը պարունակէն. ստեպղին և սպանագը՝ 14, գետնախնձորը՝ 25; Մէկ լաւ հացը հաւասար է 2^{1/2}-3 քաշ փաթաթէսի, 75 քաշ հոց և 30 քաշ միս 300 քաշ փաթաթէսի տեղ կը բռնեն 4 քաշ կաղամբ՝ հաւասար է 1 քաշ փաթաթէսի. 3 քաշ շոգգամբ՝ 1 քաշ փաթաթէսի, 2 քաշ ստեպղին և սպանագ՝ 4 քաշ բրինձի, սապի, լուրիսայի և սիսեռի:

Մարմնոյ գոյնը միշտ գեղեցիկ պահելու միակ ու ամենապարզ միջոցն է, յասակ, պաղ ջուրով լուալ ու հաստ լաթով մարմինը շփել:

Առողջ երախան առաջին տարին պէտք է 9 քիլօ կշռէ, երկրորդ տարին՝ 12 քիլօ, երրորդ տարին՝ 14, չորրորդ տարին՝ 15^{1/2}, հինգերրորդին՝ 18, վեցերրորդին՝ 20^{1/2}, ետք-ներրորդին՝ 22^{1/2}, ութերրորդին՝ 24^{1/2} իններ-րորդին՝ 27, տասներրորդին՝ 30; Այսպէս աճող տղան է որ առողջ այր կամ կին մը կ'ըլլայ:

Մազերը պինդ կապելը վնասակարէ.
նաև բրդէ կապերով մազերը կապելն ալ
վնասակար հետեւանք կ'աւնենայ:

Մրջիւններն իսկոյն հեռացնելու հա-
մար ծծութիւն և պրոբրժի փոշին իրարու-
խառնէ և մրջիւն գտնուած տեղերը ցանէ:

Սպիտակ ձեռք ունենալու համար,
պէտք է լեմոնի հիւթի մէջ քիչ մը աղ լու-
ծել և առով ձեռքերը լուսու, և յետոյ
չորցնել:

Հերաբափուրիւնը կը դարմանուի
եղիձի արմատը մանրելով և կէս քաշ ջուրի
մէջ կէս ժամ եռացնելով 100 տրամ քա-
ցանիր հետո Յետոյ զտէ և ամէն գիշեր գլուխդ
առով շփէ:

Կոկօրդին մէջ միուած ձկան փուշը
կ'անհետանայ 63 հում հաւկիթ կուլ տալով:

Գլխու թեփը կ'անհետի եթէ 2 հաւ-
կիթ մէկ լեմոնի հիւթի հետ խառնելով լու-

մը շփես գլխոյն մարթը, և յետոյ գաղջ ջրով
գլուխը լուսու, թեփը գլխուն մարթին չորնա-
լէն և փոշիէ կը դոյանայ:

Մժեղներուն խայթէն ով ով լերծ ըլ-
լալ կ'ուզէ, գեղին հանդերձ պէտք է հագնի.
էն աւելի կարմիրին վրայ կը յարձակի, Գի-
շերն ալ նոյնը կը պատահի:

ԸՆՏԱՆԵԿԱՆ

Պաղ ջուրի սիրահաւններուն. — Ա-
մառուան եղանակին մէջ ամէնէն անհրա-
ժեշտ բանն է պաղ ջուրը Եւրոպական թեր-
թերը ամառը պաղ ջուր խմել ուզողներուն
սա եղանակը կը յանձնարարէն: — Զուրով
լեցուն շիշը պէտք է հաստ ու թրջուած լա-
թով մը բաւական փաթթել և արեւին մէջ
թողուլ կաթին ջուրը շոգիանալով, շիշին
պարունակած ջուրին ջերմութիւնը մեծապէս
կը նուազեցնէ, որով մէկ քանի վայրկեանէն
ջուրը սոսուի պէս կը պաղի:

Հագուստի խոզանակը. — Լոնտոնի
Լանսէթ բժշկական թերթը կ'ըսէ թէ բնա-
կելի սենեակներուն մէջ փոշելից հագուստ-
ներուն խոզանակումը մաքրասիրութեան
զգացման խիստ հակառակ է, թողունք ա-
ռողջութեան համար անկէց աւտչ եկած
չարիքը ինչպէս փոշիի միկրոպարանութիւնը
որոշակի ցոյց տուած է: Հարկ չկայ մեծ երե-
ւակայութեան տէր ըլլալու. հասկնալու հա-
մար թէ հագուստի խոզանակը կրնայ շատ
գիւրաւ պատասխանառու ըլլալ հիւանդու-
թեանց ծաւալման, Փոշին երբէք զերծ չէ
միկրոպաներէ, որոնցմէ շատերը ախտածին
յատիսութիւններ ունին Հագուստի խոզա-
նակը փոշի արտադրող առաջնակարգ տարր
մըն է, և քանի որ անոր գործածութիւնը
անխուսափելի է, պէտք է կարելի եղածին
չափ առողջապահական պահանջումներուն
համեմատ գործածել զայն Անշուշտ հա-
գուստները պէտք է խոզանակուին ճիշդ ինչ-
պէս պէտք է ծեծուին գործերը մաքրելու
համար, բոյց երկու կերպերն ալ վատանգ մը
կը ստեղծեն որ աստիճանով միայն տարրեր
է ոչ թէ տեսակով: Հետեւալուր, ճիշդ ինչ-
պէս որ մասնաւոր վայրեր կան գործերը

ծեծելու համար, մարդոց ընակութենէն հեռի
— ինչպէս որ պէտք է ըլլան, ոչ թէ տու-
ներուն քթին տակ — այնպէս ալ առող-
ջապահական ուղղութեամբ կառավարուած
տան մը մէջ պէտք է յատուկ սենեակ մը
գանութի՝ հագուստներուն խոզանակման վե-
րապահուած: Առողջութեան բծախնդիր
մարդիկ կը թելադրեն որ փոշին վասագդե-
ցութենէն ազատելու համար, հարէ և սենեա-
կին Քշ Բայ լո՛ և տիեզ Օրական հագուստ-
ները փոշի առնելու այնքան յարմարութիւն-
ներ և գիւրութիւններ ունին, որ երբէք
մտացածին նկատելու չէ հագուստի խոզա-
նակման համար արուած ոյս պատուերները:

Պետութի բիծերը, մանաւանդ կտաւե-
ղէններու վրայ, շատ անհաճոյ երեւայթ մը
կը պատճառեն և մաքրասէր տանտիկինները
միջոցներ կը փնտուն զանոնք անհետացնելու
համար: Այդ միջոցներուն մէջ լեմնի ջուրը
մեծ դեր կը խաղայի և եմնի ջրով պէտք է
թրչել բիծերը, և ապա, երբ անհետանան,
անձրեւի ջրով լուալ նոյն տեղը: Անդուսէ և
ո՛եւ և մետաքսէնէ այդպիսի բիծեր հանե-
լու համար պէտք է այրած ոսկորի փոշի ցա-

Նել անոնց վրայ և 10-12ժամ թողուլ այն-պէս, բայց որովհետեւ պտուղի բիծերը կերպուսին մէջ թափանցելով միւս կողմն ալ կ'անցնին, պէտք է որ փոշին երկու կողմին վրայ ալ ցանուի:

Ակռաները մարեկի վրձինով. - Ե՞ս-տոնի վարժարանաց մէջ նոր մարթամարզ մը սկսեր է, որ է ակռաները մաքրել վրձինով և Ամէն առաւոտ, ուսանողները արթնալուն պէս 12է մինչև 13-14 տարեկան եղողները կը շարուին, և ուսուցչաց կամ ուսուցչուհեաց հրահանդով կը գործածեն իրենց ձեռքը գտնուած վրձինները Տօպայք շատ հաճոյք կը զգան այս նոր մարթամարզէն Ուսուցիչը ևս ներկայ գտնուելով կը դիմեն թէ տղայք իրենց արտած հրահանդով կը վարուին:

Զարմանալի մարդ մը կոյ Գերմանիոյ մէջ խաջալ անունով, 24 տարեկան: Ասոր մարթնայն սակորներն այնչափ բարսկու փափուկ են, որ շատ զգուշութեամբ ու կտ մաց կամաց կը քալէ եղեր: Օր մը ուղեր է արագ քալել, բայց մէկ սատը կստեր է: Օր մը բարեկամին մէկը իւր ձեռքը քիչ մը

ամուր սեղմելուն համար, ինեղծին բազուկը կստեր է, ուրիշ օր մը բարեկամ մը կատակի համար կռնակին զարկեր է ձեռքով, ոսկը կստեր և մարդը օրերով անկողնէն չելնել հարկադրուեր է: Վերջապէս, առ նուազն տարին երկու անգամ՝ սոկրներէն մէկը կամ երկուքը կը կստերին, սակայն զարմանալի է որ քիչ ժամանակի մէջ կատարելապէս կը բժշկուին եղեր:

Ընտանիքներու մէջ սովորութիւն է ամէն օրեայ սովորական մաքրութիւններէն (Խրզմէժ) զատ երկու երեք ամիսը անգամ մ'ալ հիմնական մաքրութիւն մը ընել տան մէջ, ջրով կամ պարզ աւելով: Այս գործը սակայն, մանաւանդ ձմրան մէջ, պէտք է չոր ու պայծառ օրուան մը մէջ կատարել, որպէսզի տան ամէն սենեակներն ալ միանգամյն օգաւորել կարելի ըլլայ: Լաւագոյն է որ մաքրութեան աշխատութենէն անմիջապէս ետք, օգաւորման տառեն, ջերմացները վասուած ըլլան, որով խոնաւութիւն չմնար տան մէջ:

Թարմ ձիւնով լսու կը մաքրուին գորդերը կամ՝ հարթ ու յղկուն գեանայատակները Գորգերուն վրայ քիչ մը ձիւն ցանելէն ետքը, մեծ խողանակով կամ փոքր աւելով մը անմիջապէս ժողվելու է զայն Խակ գեանայատակներու հտմար շփելու աւել մը գործածել պէտք է:

Լոգանի ատեն եթէ ջուրին մէջ քիչ անուշադր դրուի, նոյն ջուրին մէջ լսդացողին յոդնած մարմինը կը կազդուրի վերստին, և միսն ալ մարմարինի պէս յղկուն ու ամուր, անհոտ ու մաքսուր վիճակ մը կ'առնէ:

Գեղնած ճերմակեղէնները վերստին ճերմկցնելու համար պէտք է թթուած շիճուկի մէջ դնել զանոնք և թողուլ այնպէս, հաստ հիւսկէնով լաթերը փափուկ հիւսկէնով լաթերէն աւելի երկարատես: Ապա լուսու է զանոնք աճառով անձրեւի դադջ ջրպ մէջ, և պաղ ու վճիտ ջուրէ մը անցնելէ ետքը, սովորականին պէս չորցնելու է: Եթէ մէկ անգամին չճերմկնան, կրկնելու է նոյն գործողութիւնը: Շատ բարակ ու նուրբ ճերմակեղէններու, օրինակի համար, վարագուրի,

առեղնագործուած թիւլերու եւոյլնի համար կաթը թթուած ըլլալու չէ:

Գրպանի ժամացոյցները երեկոյին լարելէ ետք մինչև հետեւեալ առտու զայն վերստին գրպանը դնելու ատեն, և կամ ուրիշ ատեն գրպանէն դուրս գտնուած միջոցին պէտք է միշտ կախուած դիրքի մէջ դնել:

Ոսկեգօծուած առարկաները մաքրելու համար, պէտք է 17 կրամ փօթաս, կամ սոսու և կամ լաւ եւս 17 կրամ պոռակո կէս քելը ջուրի մէջ լուծել ու ոյս լուծութով բարակ վրձնին մը կամ սպանդի միջոցաւ փափկապէս շփել առարկան ապա ջուրէ մը անցնել ու չորցնել: Եթէ կարելի ըլլայ՝ այդ առարկան վառարանի մօտ թեթև ջերմութեան բռնելով և փափուկ լաթի կառուվ մը մեզմութեամբ շփել, սոկեղօծումը աւելի կը փայլի: Ոսկեղօծեալ շրջանակներու և անոնց նման առարկաներու համար մաքսուր ջուր գործածելու է միայն Աղափ բիծերը թեթև մը շփելու է կարուած սոխով մը:

Կուսանեկար հինգած կամ աղտոտած
պատկերները կը մաքրուին, եթէ թարմ հացի
միջուկով դգուշաւորութեամբ շփուին:

Հայելին եթէ ուղղակի արեւին ճառագոյթին դէմ դրուած ըլլայ, շուտով կապականի: Արեւին զօրաւոր ճառագոյթիները շատ կը վսասեն աղակիին, և հայելին, հետեւարար աղտոտ կը ցուցնէ իր առջեներ-կայացուցած առարկան:

Կարմիր գինիին անարատութիւնը փորձելու ամենապարզ ու գիւրին միջոցն է, նոյն գինիին մէկ քանի կաթիլ կաթեցնել կաոր մը պարզ կառեմի (որով սեւ տափառակի վրայ կը գրեն) վրայ եթէ յառաջ եկած բիծը գորշ գոյն ունենայ, գինին անխարդախ է. իսկ եթէ կապոյտ և քիչ մը մանուշակագոյնի զարնող ըլլայ, այդ բիծը մորենիի կամ հացապտուղի հիւթով խառնուած է: Իսկ եթէ ոյդ բիծը առանց այլայլելու կարմիր մնայ, պէտք չէ տարակուսիլ բնաւ թէ բաւական կամ քիմիական վնասակար նիւթերով ներկ-ռւած է գինին զոր անմիջապէս ետ տալու է:

Թէյլ տարուան ցուրտ եղանակին մէջ շատ ընտանիքներ իրիկուընէ իրիկուն կը խմեն: Ընդհանրապէս հաճելի և անվաս բան մը կը համարեն զայն, մինչեւ մէկ աստի-ճան իրաւ է այս, մանաւանդ եթէ չափաւո-րութեամբ խմուի: Բայց գիտալու է նաև թէ շատերուն վրայ, մանաւանդ անոնց վրայ որոնք մնարազւթեան սունին, թէյլ կրնայ կաղ գուրս ելլելուն, սրտին և ջղային խանդարման պատճառ ըլլալ: Աեւ թէյլ յարմարագոյնն է կանանչ թէյէն, չինականը՝ չնդկականէն: Թէյլ եփելու կամ խաշելու չէ բնաւ, այլ վրան տաք ջուր լեցնելով թողելու որ մնայ 5-10 վայրկեանի չափ: Այսպէս պատրաստ-ուածը վնաս չտար առողջ մարմարոյն: Աւելորդ է ըսել թէ շոքար դնելու է մէջը, խմելու տաեն: Լաւագոյն է կաթով խառնուած խմել, վասնզի մնուցիլ յատկութիւն մ'ալ կ'ունենայ տառով: Կատարելապէս սփալ է այն կարծիքը թէ կաթով թէյլ դժուարա-մարս է:

—
Սենեակի մէջ գտնուած ճանճերը հե-ռացնելու պարզ միջոց մ'է հետեւեալը.

դդումի տերեւները չորցնելով փոշիացնելէ
ետքը ծխելու և սենեակին մէջ, բայց եթէ
թռչուն գտնուի հոն, պէտք է նախապէս
դուրս հանել զայն:

Անուշահոտուրին սենեակի մէջ. —
Առ լսյն բերնով և ապակիէ խցանով շիշ մը
և մէջը դիր մանուշակ, յասմիկ, վարդի թեր-
թեր եւայլն և վրան խոշոր աղ ցանելէ ետե
խցէ. երեք կամ չորս շարաթէն սրուակը
անուշահոտութեամբ լեցուած է, և երբ բա-
նալու ըլլաս սենեակը անուշ հոտով կը լեց-
ուի. միայն թէ սրուակը երկար ատեն բաց
ձգելու չէ:

Խանձուած լաթերը ստպէս կը նորոգ-
ուին. առ 100 կրամ քլօր կիր, և 900 կրամ
եռացած ջուրի մէջ հալեցուր. կտաւ մը
թաթիս մէջը և խանձուած տեղերուն վրայ
քու ոյս ջուրէն:

Կատաներու իւղոս բիծերը հանելու
միջոց

Առէք բեւեկնի իսկութիւն (էսանս	
ար թեռէպանտին)	250 կրամ
Թորեալ ալքոլ	32 "
Ծծմբական եթեր (էթէռ սիւլֆի-	
սիկ լցիսն բանհու)	32 "
Խառնեցէք ասոնք իրարոււ Լեցուցէք	
շիշի մը մէջ և լաւ մը բերանը գոցեցէք:	
Երբ գործածել ուզէք, նախ կերպասը	
դրէք լսթի մը վրայ, որ քանի մը անգամ	
ինքնի եր վրայ ծալլուած ըլլայ, յետոյ շիշը	
ցնցելով բացէք բերանը և քանի մը կաթիլ	
կերպասին աղտոտած տեղը կաթեցուցէք, և	
անմիջապէս ուրիշ լաթի կտորով մը, որ	
պէտք է չոր ըլլաս, շփեցէք մինչեւ որ բիծը	
անցոյտանայ:	

Տանիկինը

Առէք ընկուզի մեծութեամբ վաթ կայի
կտոր մը. պլորեցէք ու կեդրոնական մասը
բարակցուցէք այնպէս մը՝ որ ամրողնութիւնը
կոնի (քէլլէ) մը ձեւն առնէ. յետոյ ծայրը
կտրեցէք ու պղոտիկ սկահակալի (քինճան

թապաղը) մը մէջ գրէք զանի, որուն մէջ
պէտք է ձեթ գտնուի ու յեսոյ բանկցուցէք:
Այս ինայողական կամթեղը կը վառի այն-
քան ո՛րբան ատեն մնայ սկահակին մէջ, և
գոհացուցիչ լոյս մը կուտայ:

Ճերմակեղէնները օսլայելու և ար-
դուկելու գործը կարեւոր ինգիր մ՞է ամէն
ընտանիքի մէջ: Յատեր կը կարծեն թէ զուտ
օսլան, առանց ուեւ է խառնուրդի, օգտակար
է ճերմակեղէններուն համար, բայց ընդհա-
կառակը, միայն օսլայով արդուկուած ատեն,
ճերմակեղէնք շուտով կը կակուզնայ և կը
ճմրթկուի:

Ճերմակեղէնները փայլուն, սպիտակ և
ճկուն կ'ըլլան արդուկելով, եթէ օսլային մէջ
չետեւեալ նիւթե երն խառնուին: 6-8 շապիկի,
6 զայդ թեւնոցի և 42 օձիքի համար 420
կրամ օսլայ և մէկ ու կես քիլօ ջուր բաւա-
կոն է: Նախ և առաջ $\frac{1}{4}$ քիլօ ջուրը պղնձէ
մոքուր ամանի մը մէջ լեցնելով կրակի վրայ
դնելու է և այդ պաղ ու մաքուր ջուրին մէջ
աւելցնելու է $3\frac{1}{2}$ թերթիկ ժելադին (փայլ
տալու համար), կերակուրի գուալ մը պորաքս
(կարծրութեան համար), 5 կրամ սպիտակ

մեղրամուր, 3 կրամ կարագ (փափուկ, գե-
ղեցիկ և ճկուն ընելու համար) և խաչուէի
գուալ մ'ալ չեղուկ խէժ (այս ալ արդու-
կելու ատեն ճերմակեղէնը շուտով չչորնա-
լու համար): Ասոնք ամէնքը մէկտեղ իրարու-
խառնելէ ետքը. 10 վայրկեանի չափ եռաց-
նելու է, յաճախ խառնելով: Ամոնը կրակէն
վար առնելով, չեղուկին պաղելէն ետքը,
120 կրամ օսլան և մնացեալ $\frac{1}{4}$ քիլօ ջուրը
իրար խառնելով լաւ մը կերցնելէ ետք, եռա-
ցած բայց նոր պաղած խառնուրդին վրայ
աւելցնելու և ամէնքը մէկէն յեսոյ մաքուր
լաթէ մը անցնելու է, որպէսզի մրուր չմնայ:
Ազա այս չեղուկով պէտք է թրջել ճերմա-
կեղէնները և արդուկել զանոնք: Արդիւնքը
պանչելի կ'ըլլայ:

Ահա լաւ գեղագիր մը փափկասուն տի-
կիններու և օրիորդաց մազերուն համար. —
Ոօմ 100 կրամ, կլիսէրին 20 կրամ, վարդե-
ջուր 25 կրամ, վարդի իւղ 10 կաթիլ, շիշի
մը մէջ խառնէ և պէտք եղած ատեն ցնցելով
գործածէ:

Թառառական ճանճերէն աղատելու
համար նախ առառուն սենեակիդ գուռն ու
պատուհաները բաց, քանզի, օդի հսուանքէ
չեն ախորժիր ու կը փախչին Դեղ. քալօմէլ
և մեղք խառնէ և պնակի վրայ քսէ կը
մեռնին:

Ճերմակեղեններն թրջոց գնելով մա-
շումէ կը խնայուին. ոտա միայն անեղծ ներ-
կերու կը գործածուի:

Թրղեղեններն միշտ գաղջ ջուրով կը
լուան

Դաւնաւոր գուլպաներն նախ ներբին և
յետոյ արտաքին կողմէն կը լուան. գարձնե-
լու համար ալ ներբին կողմէ գուրս ընելով
կը կախեն:


Կլոր փայտով մը լուացքի նիւթերն եթէ
ծեծուին օճառը լաւագոյն կերպով ներս կը
թափանցէ:

Լուացուած նիւթերն պաղ ջրով այն-
քան ցողուելու է, մինչեւ որ ջուրը մաքուր և
պարզ մնայ:



ՀԱՅԻ ՓԻԼԻԳՐԱՆ ԷՅ. ԵԱԳՈՒՊԱԾՆ ԵՒ ԳԵՐԳԱԿԱՑԱՆ

(Քանիլրէ)



ՄԻՍ ՄԵՐԵՆ ԿՐԵ

Արքան լավագութեալ շուտով չորնան, այնուան գեղեցիկ կ'ըլլան: Օդին մէջ չորցուածներն աւելի ճեղմակ կ'ըլլան, քան գետինը փռուածները:

Գօլային հետ քիչ մեղքամոմ խառնելով և եփելով աւելի փայլուն կ'ըլլան արդուկելի նիւթերը:

Սերդուկեալ գօլալը նիւթերը երկար ատեն պէտք չէ պահել, շուտ կը մաշին:

Գօլայելի նիւթերը նախ ներքին կողմէն կ'արդուկեն:

Սերդուկեալ նիւթերը ատեն մը կը թողաւն, որ կատարելապէս չորնան և ապա գըզը սոցը կը զետեղեն:

Դանակ, դգամ եւսյլն կը մաքրուին և կը փայլին թըրջած բրդէ լավթով մը աղով շփելով:

Գետնախնձորը կը պահուի տակառներու և անտուկներու մէջ, որ գրուած հն մասնին մէջ քարե յատակի վրայ:

Մուկերը անխօնի իւղը կը սիրեն, և
եթէ որոգայթին մէջ դնէք այս իւղէն, խուռն-
երամ ներս կը մտնեն:

Աւաշայըն մքջիւններն չեն սիրեր. գրբ-
ուած տեղէն կ'անհետանան:

Պէճզինը առաջնակարգ միջատասպան
է, և բամպակի վրայ կաթեցնելով և ծակերն
դնելով մուկերն ալ կը փափցնէ: Փայտի որ-
դերն ալ կը ջնջուին ճեղքերուն մէջ պէնզին
քսելով:

Ցուրտ եղանակին՝ սովերը տաք պահելու
համար, կօշիկին մէջ 3-4 կարգ ծծուն թուղթ-
դիր, ամէն օր նոր:

Կօսիկներն գիմացկուն ընելու համար
փորձուած լաւագոյն միջոցն է, նոր կօշիկնե-
րուն յատակներն 2-3 անգամ թերփէնթին
— թիրէմէնթին — քսել:

Երկար ատեն անգարծածելի պահ-
ուելիք ներմակեղենները նոր լուացուա-

ծի պէս սպիտակ կը մնան, եթէ լուալով լաւ
մը չորցնելէ ետք, առանց արդուկելու,
պլուած պահուին:

Գորգերը մաքրելու համար քիչ մը աղ
և ցորենի թեփ իրար խառնելով, գորգին ամ-
բողջ երեսը այդ խառնուրդով լաւ մը շփելէ
ետքը իոզանակելու է. այս եղանակաւ թէ
գորգը կը մաքրուի և թէ գոյները կը թար-
մանան:

Գունիաւոր կերպաս մը լուալէ ետքը,
եթէ քացախախառն ջուրէ մըն ալ անցուի,
կերպասին գոյները կը թարմանան: Դոյլ մը
ջուրին համար 2 գաւաթ քացախ կը բաւէ:

Շազանակը պատեանովը մէկտեղ գիր
բացօդեայ տեղ մը 3-4 շաբաթ, յետոյ ստկէ
և դիր փայտէ սնտուկի մէջ կարգ կարգ աւազ
լցնելով վրանին: Մինչև նոր շագանակի ատեն
թարմ կը մնայ:

Նարինջ և լեմն 6 ամիս կը դիմանան
եթէ էն լաւերն սնտուկի մէջ աւազով ծածկէք
և չոր տեղ մը պահէք:

ԼՈՒԱԳԲԻ ատեն ձեռքի մորթը անվասս
պահելու համար, լուացքի սկսելէ մէկ օր ա-
ռաջ պէտք է հեղուկացած լաքայով (ինչպէս
որ կահագործները կը գործածեն կարասիները
յդկելու և փայլեցնելու համար) շինէլ ձեռ-
քերը, և լաւ մը կերցնել զայն մորթին:

ՍՊԻԹԱԿԻ մարմարիոնի վրայէն ճարպի
կամ քարիւղի բիծեր հանելու համար ձեթը
և պէնզինը իրարու խառնելով, բիծին վրայ
տարածելու և ձգելու է որ այդպէս մնայ: Եթէ
բիծը չելլէ, անդամ մը եւս կրկնելու է:

ՍՊԻԹԱԿԻ, հիւսուած ժանեակները թար-
մացնելու համար պէտք է լուալէ ետքը կաթի
մէջ թաթիսկել, քամել և դեռ թաց վիճակի
մէջ արդուկել զանոնք: Այս միջոցաւ բաւա-
կան կ'ամրանան և նոր ժանեակի դեղնասպի-
տակ երեւոյթը կ'առնեն:

ԿԱՐ և աղ մելանի բիծեր կը հանեն հան-
դերձէ. 35 տրամ կաթի մէջ թէյի դգալ մը
աղ դիր, խառնէ և կտոր մը լաթով բիծերը
շիէ:

ՄԻԱՅԻ թարմ կրնաս պահել էն տաք
օդին ալ երբ լուաս քացախ ջրով. լուա և
վրան հասա սոխի կտորներ զետեղէ. եփելու
ժամանակ լուա և յետոյ եփէ:

ՆԵՂ ԿՕԾԻԼԻ լայնցնելու համար սիմած
կողմին տեղին վրայ շատ տաք ջուրի մէջ
թաթիսած լաթ մը դիր և ձգէ մինչև պաղի.
կրկնէ մի քանի անգամ:

ԿՈՒՄՈՎԱՔԻ վէրնիկով կօշիկին յատակը
վրձինով լաւ մը շիէ, և ապա գործածել սկէ,
3 ամիս յետոյ կրկնէ այս գործողութիւնը.
կօշիկը շուտ չի հիննար:

ՅԱՅՆԵԼԱՅԻ մաքուր, պաղ ջուրի մէջ
քիչ օճառով լուա. բնաւ չքաշուիր:

ՅԱՅՆԵՐԵՐԸ միայն եղունգի կարծր վրձի-
նով մաքրէ:

ՅԱՆԿՈՂԻՆԻ մէջ ճանճերու յարձակու-
մէն զերծ մնալու համար, սպունդ մը թաթիէ
լէվանտափ մէջ և մահճակալին կապէ. ճան-
ճերը հոտէն գարշելով կը փափչին:

ՍԵՆԵԱԿԻԲՆ օդը մաքուր պահելու համար հողէ անօթի մը մէջ կտոր մը նշադըր դիր և վրան օ տըքօլօն լից:

Պանիրը զով տեղ մը և քացախի մէջ թաթիսուած թուղթի մէջ փաթթուած պահէ և երկար ատեն թարմ կը մնայ, մանաւանդ եթէ չոր լաթի մէջ փաթթես և յաճախ ջրախառն քացախով սրսկես պանիրը:

Փղոսկրի վրայէ մելանի բիծը կ'եղէ ջրախառն աղի ոգիսվ բիծը շփելով:

ՀԱՐՑԱՐԱՆ

Սղաւեի. Մշտկներէն ազատուելու համար ազդու գեղ մը ահաւասիկ. — Առ 100 տրամ ալքօլ, 15 տրամ քամփուր, 30 տրամ թիրէմէնթինի իւղ և 8 տրամ սիւպիմէ, խառնէ ի միասին շիշի մը մէջ և վրձինով քսէ մըուկին գտնուած տեղերը, Զգոյշ ըլլալ, քանզի լոյն է:

Օր. Հիասէնք. Ծակած ակռաներն լեցնել, առանց ատամնաբուժի դիմելու, սապէս կ'ըլլայ. — Արծաթ առարկայ մը առ, ինչպէս գգալ մը, դրամ մը, մատնոց մը և նուրբ խարտոցով մը արծաթի փոշի պատրաստէ, անցուր փոշին շղարչէ մը և խառնէ բաւականաչափ սնդիկի հետ և լից ծակ ակռային մէջ: Ատամնաբոյժն ալ ասկէ ուրիշ բան չէ որ կը գործածէ. միայն թէ ցաւած ակռան չեն լեցներ:

Գէւոզ. Տկար աչաց համար անվսաս գեղ մը ահա. — Սիւլֆաթ տըզինք, 3 ցորեն, աֆիոնի ոգի, 5 կաթիլ և 15 տրամ ջուր կամ վարդեջուր խառնէ միասին և օրը 3, 4 անգամ 1, 2 կաթիլ դիր տկար աչաց մէջ:

Սպասուեի. Մելանի բիծեր տախտակամածին վրայէն հանել. — Աղի ոգի — թուզ բուհու — գնել տուր. բիծերը շփէ լաթով մը որ այդ հեղուկին մէջ թաթիսուած է, յետոյ պարզ ջրով մաքրէ: Միայն թէ գգոյշ եղիր որ ձեռքդ չայրես աղի ոգիսվ:

Ցիկին Եւթիկէ. Մի իռողիք տիկին, քացախի թթուն — ասէթիք ասիտ — քսէ նոռըին վրայ, ուղտի մազէ վրձինով, առաւ օտակոյ Ամբողջ մէկ շաբաթ և նասրանիրը կ'անհետանան:

Ցիկին Գոհար. Մանչուս ոտքին մատնէրը ցուրտը խածերէ. խնդրեմ գեղ մը յանձնարարեցէք: Սոխ քսէ, քարիւղ և թէնթիւր աը խօտ. կ'անցնի:

Օր. Շուշան. Ոտքի խոնաւութեան դարմանն է մաքրութիւն, գուլպաներն յաճախ փոխել, գաղջ լոգանք նաև ոտքի գուլպաին մէջ ցանէ, Սալիսիկի փոշի:

Վահան Քահանայ. Շատ կը սիսլիք. Ճափ 1864 ին թէն միայն մէկ հատ Աւետարանական կար, սակայն անկէ ի վեր սու կերպով աճած է Աւետ. ժողովուրդ. — 1885 ին 10,775 ի հասաւ անոնց թիւ, 1897 ին 40,578 եղան, 1904 ին 50,954, իսկ 1908 ին 60,450 ի հասած էր Աւետարանական ժողովրդեան թիւը:

Օր. Սարինիկ Աչքդ լաւ բաց որ չխարեն զձեզ. քանզի Գերմանիոյ մէջ մետաքսէ կեղծ արհետական մազ կը շինեն, յար և նման ընականին:

Ռւսանող Ռուսիա թէն ունի 160 միլիոն բնակիչ բայց 120 միլիոնը ոչ կարգալ գիտէ և ոչ գրել. հոն ժողովուրդը խիստ ագէտ է:

Գոհարավանառ. Մարգարիտին կեղծ երբ շրթունքիդ դպցնես տաքուկ, իսկ բնականը պաղ կ'ըլլայ:

Կօսկավանառ. Շատ գրամ կը շահիս եթէ իրօք կօշիկները ջուրի անթափանց ընես. առ այս գնէ կէս քաշ բէշինա, 1 քաշ կտաւոտի եւղ — պէզիր եաղը —, իւղը և փոշին լաւ մը խառնէ կրակին վրայ և տաք, տաք, քսէ վրձինով մի քանի անգամ կօշկին յատակը և կարերուն տեղը:

Սարգիս Էթենիսի. Շատ դիւրինէ գիտնալ թէ ջուրը մաքուր է թէ աղտոտ. կէս քաշ ջուրը կրակի վրայ շոգիացուր, եթէ անօ-

թին տակ թողած դիրտը — թօրթուն — թխագոյն կամ սեւ է, բնաւ մի խմեր այդ ջուրը, վնասակար է, իսկ եթէ դիրտը դեղնորակ կամ կապոյտ է, լաւ, մաքուր ջուր է:

Գեղազործ. Քառոչուէ գործիքները պէտք չէ պաղ տեղ պահել, որ չքարանան. տաքուկ տեղ պահէ, իսկ կարծրացածներն դիր պաղ ջրով մեծ ամանի մը մէջ և 1, 2 ժամ կամաց կամաց ջուրը տաքցուր, յետոյ թող որ ջուրին մէջը գործիքներն պաղին:

Տիկին Լուսի Մութ գոյն ծածկոց ունեցող սեղանի առջև նստելով ճրագի լուսով կար կարելը խիստ վնասակար է տեսողութեան. գոնէ թերթ մը ճերմակ թուղթ դիր առջիդ սեղանին վրայ:

Հրանտ Զարմանալի չէ որ գժուարամարտութենէ կը տառապիս, քանի որ կերակուրդ առանց լաւ ծամելու կուլ կուտաս, իրը թէ ակռաներն ըսկ զարդի համար տրուած ըլլային, Ստամբուլ կրնա՞յ ակռապին գործն ալ ստանձնել. ո՛չ, լաւ ծամէ և մարտզութիւնդ կը կանոնաւորի:

Մայր. Բնաւ մի հանդուրժեր որ զաւակդ խնդիքը կրկնէ և կրկնէ. ո՛չ, մէկ անգամ միայն թոյլատրէ խնդրել և թող համբերութեամբ սպասէ մինչև նկատողութեան առնես խնդիքը, և կամ բան ըսես իրեն:

Օր. Մառի. Տկար աչք ունեցողները պէտք է միշտ ասեղին գերծան անցուցած ատեննին ասեղը ճերմակ բանի մը գէմ բռնեն. այս կ'օգնէ ալաց:

Կարուիի. Երբ ստիպեալ ես ճրագի լուսով կար կարել, թող լուսոյ ճառագայթ. ները միշտ ուսիդ վրայէն անցնելով կարելու նիւթին վրայ տարածուին, ասով աչքերդ չեն յոգնիր:

Տիկին Թագուիի. Արեւելեան իսլամ՝ գեղեցիկ սեռն սովորութիւն ունի ամիսը անգամ մը կարել աչաց թարթիչներուն մազերը, որով անոնք երկայն և զօրաւոր կ'ըլլան. մայրերը կը կատարեն նոյն գործողութիւնը մանկանց վրայ, անոնց քնացած պահուն. անվնաս սովորութիւն մ'է այս:

Խոհաւրար. Բանկած ծխնելոյզը մարեւ
լու համար կրակարանին մէջ ծծումքի փոշի
նետէ և առջեւը դոցէ որ օդ չառնէ:

Ցիգրան. Քեզի լաւ և վատահելի պա-
րօմեթր մը — օդաչափ — յանձնարարեմ,
տանդ պատճն վրայ գամ մը զարկ, դերձան
մը կապէ ասոր, դերձանին վարի ծայրը կապէ
հաւու կամ սագի փունջ մը փետուր, և ասոր
հասած տեղը հաստ գիծ մը բաշէ: Երբ 10-12
ժամէն անձրև պիտի գայ փետուրի փունջը
այս գիծէն վար կ'իջնէ. իսկ երբ 10-12 ժամ
յետոյ պարզ օդ պիտի ըլլայ փետուրին փունջը
վեր կ'ելլէ:

ՕՐ. ՆԱՒԹԷ Աենեակդ 8-10 օր ծաղիկ
պահելու համար անօթի մը մէջ լից թաց
աւազ, և փայտով մը ծակեր բանալով կրտ-
րած ծաղիկներդ անոնց մէջ զետեղէ, միայն
թէ սենեակը զով ըլլալու է:

Ցիկին Հայկանոյօ Եռացած ջուրը
պաղեցնելէ ետե դիր քիչ մը նանեկի իւղ և
ուշ ուղարկու շիշի մը մէջ դիր, իցէ, պահէ. երբ
բերանդ լուալ կ'ուղես, այս ջուրէն քանի մը

կաթել դիր գաւաթ մը ջուրի մէջ, անով
ցողուէ բերանդ:

Արքար. Մեքենան հրաշք կը դործէ.
100 տարի առաջ 10 գործաւոր օրը 48,000
գնդասեղ կը շինէին ձեռքով, այսօր 3 մարդ
մէկ օրուան մէջ $7\frac{1}{2}$ միլիոն գնդասեղ կը շի-
նեն մեքենայով:

Ժամազործ. Բերել տուր Զուիցե-
րիայէ նորագոյն ժամացոյցներէն, որոնք ոչ
թուանշան և ոչ ցուցիչ ունին, ներքին ֆօնօ-
կրափ մը, երբ կոճակի մը վրայ գնես մատդ, կը
գովէ 12 է կամ $6\frac{1}{2}$ է կամ 7 ին 23 կայ:
Միայն թէ ֆօնօկրափը հայերէն կամ թրքե-
րէն խօսելու է:

Օգսէն Պալքանեան 5 փոքր տէրու-
թիւններն միասին 800,000 ի մօտ զինուոր
կրնան հանել, Ռումանիա 250,000, Պուլկա-
րիա 223,000, Սերպիա 170,000, Յունաստան
82,000 և Սեւ լեռ 32,000:

Ցիկին Արաքսի. Եռետացի տիկին մը,
որ Զեղի պէս անքնութենէ կը տառապէր, ան-

ձեռոց մը շատ պաղ ջրոյ մէջ դնելով կը քաւմէր և աչքերն գոցելով անոնց վրայ կը դներ թաց անձեռոցը, 4 ժամ անընդհատ քնացաւ. յետոյ անձեռոցն չորցած էր, բայց նորէն կը րկնեց նոյն գործողութիւնն ու քնացաւ մինչեւ առաւօտ:

Օր. Սիրվարդ Զմրան ցուրտ եղանակին սենեակի բայսերը շատ ջրել պէտք չէ, և երբ ջրելու ըլլաս տաքցուած ջուր գործածէ:

Մայր. Նորածինին աչաց բորբոքումը ճարտար բժիշկի մը ցցց տալու է առանց ժամանակ կորոնցնելու, քանզի, շատ մայրեր պյունակին անտարբեր գտնուելով իրենց զաւակաց կոյր ըլլալուն պատճառ կուտան:

Օր. Աննա. Մարած անձինք սթափեցնելու համար 10-20 կաթիլ եթեր ջուրի մէջ խառնել և խմբնել, քացախ, պաղ ջուր սրսկել, անոնցմավ շիել, լուալ ճակատ, արտեւանունք, վիզ, քունք:

Գառնիկ Աչքերն միշտ առողջ պահու համար. 1. յանկարծ մութէն սաստիկ

լոյսի չենթարկել. 2. մերժել ոգելից ըմպելիք. շատ զօրաւոր խահվէ և թէյ. 3. պառկած և յոգնած ատեն չկարդալ. 4. աչքը յոգնած ատեն հեռաւոր առարկայ մը գիտել. 5. մարմնոյ առողջութեան հոգ տանիլ. 6. արուեստական լոյսով քիչ կարդալ. 7. գիշերը ուշ չպառկիլ. 8. ակնոցը ճարտար ակնաբուժի մը հրահանդին համաձայն ընտրել:

ԴԵՂԱՐԱՆ

ԹՈՔԱԽՏԱԿՈՐՆԵՐՈՒՆ ՑԱՍՆԱԲԱՆԱՆ

Ա. Այն երկիներուն մէջ ուր գուներու և ապակիներու վրայ տուրք կայ, պէտք է ջնջուի պյու տուրքն և անհատները պէտք է քաջալերել որ լայն պատուհաններ և գուռներ շինեն, որպէսզի օդը կարենայ ազատ մուտք ունենալ:

Բ. Բոլոր կարեւոր քաղաքներուն մէջ, որ առ նուազն 20,000 բնակիչ ունին, քննութիւն պէտք է կատարուի հասկնալու համար թէ բնակիչներու հարիւրին քանի՞ն թոքախ-

տաւոր է։ Փափաքելի է որ թոքախտաւորները ընդունելու յատուկ տուներ գտնուին։


Գ. Խշանութիւնք պէտք է ուշադրութիւն ընեն նոր ճամբաներ բացուած ատեն, և այնպէս մը պէտք է ընեն որ արեւու ճառագայթները շարունակ լուսաւորեն ճամբան։

Դ. Ասկէ վերջ ճամբաներն այնչափ լայն պէտք է ձգուին, և տուներն այնչափ միայն բարձր պէտք է շինուին որ արեւու ճառագայթները կարենան վարէն մինչև վեր լուսաւորել զիրենք։

Ե. Տուներու բակերն ալ այնպէս պէտք է շինուին որ շարունակ արեւու ճառագայթներն իրենց վրայ ըլլան։

Զ. Մարդ բնակած սենեակները, մէջն ըլլալով նաև խոհանոց, գործանոց և պահապանի սենեակ, փողոցի վրայ կամ բակերու վրայ պէտք է շինուին, որպէսզի կարենան լոյս առնել։ պատուհաներն պէտք է համեմատական ըլլան սենեակին։

Է. Տուներու ներքին բաժանումներն այնպէս պէտք է կարգադրել որ շարունակ և լաւ օդաւետին և գեշ հոս յառաջ չգայ։ Վառարաններն և ծինելցողները պէտք է այնպէս շինուին որ ածխային թթու յառաջ չգայ։



Ի ՑԻՇԱՏԱԿ
ՊԵՏՐՈՍ ՍԿՄԵՐՃԵԱՆԻ
Ծննդալ 2 Ապրիլ 1883, մեռած 16 Յուլիս
1912, ի Գոնիա :

Մոյ Սիրովիչ Հրեսակը

Քնուր զօգուլ.



ՎԻՃԱՎԱ
ՎՐԱՅԻ ԱՎԱՐԿԱՆ
ԽՈՎԱԿԱՆ ԱՎԱՐԿԱՆ
ԽՈՎԱԿԱՆ ԱՎԱՐԿԱՆ
ԽՈՎԱԿԱՆ ԱՎԱՐԿԱՆ

Ը. Պէտք չէ բնաւ թողուլ որ բաւական
լոյս չառնող սենեակներու մէջ մարդ բնակի:

Թ. Թոքախտաւոր բնակած տեղ մը
պէտք չէ վարձու տալ ուրիշի, որ ուրիշ մը
բնակի հոն, մինչև որ լաւ մը չհականեխուի:

Փ. Ո՛եւ է բակ որ կը ծառայէ լուսաւո-
րելու և օդաւէտելու մարդ բնակած սենեակ-
ները, պէտք չէ ծածկուած ըլլայ մասսամբ կամ
ամբողջովին, ապակիով կամ ուրիշ ո՞եւ է
կերպով:

Պնդուրիւն. աւելի պէտք է ուտել միս,
լուրիա, ոսպ, խակ կաթ և այիւրոտ կերակուր-
ներ նուազ. հացը զուտ ցորենէ. ամէն տեսակ
պտուղ. մանաւանդ արմաւ և չոր սալօր,
ամէն առաւօտ գաւաթ մը պաղ չուր խմել.
Նաև մասաժ — փորը շփել թանձր կտաւէ
ձեռնոցով 10 ըսպէ, առատուն և երեկոյ: Գրեի
դաղձ օճառ ջրով:

Փորհարուրիւն մահացու է մանաւանդ
փոքրերու, եթէ նկատողութեան չառնուի.
կերակուրը դիւրամարս. գառնուկի, հորթի
միսի ջրով ապուր, բրինձ, հաց, կաթ մինչև
անցնի: Առիւ լուրի 5-10 կաթիլ գաւաթ մը
ջրոյ մէջ:

ՑաՌԱՎԱԼՈՒ պարզ միջոց մը. գոյցէ բերանդ և խորունկ շնչառութիւն ըրէ, ասով արեան շրջանի զօրութիւն խտանայ նոր թթուուածին ստանալով և ամենանուրբ երակներուն իսկ նոր զօրութիւն և ջերմութիւն կուտայ:

Հազի դեղ. — Մանկանց կապոյտ հազը անմիջապէս կը բուժուի եթէ 2, 3 կտոր շաքար գինիի քացախի մէջ թաթիւնով կերցնէք անոնց.

ԱՆՀՐԱՔԵՑ ՄԻԶՈՑՆԵՐ ՔՈԼԵՐԱՅԻ ԱՑԵՆ

ՔՈԼԵՐԱՅԻ կրկին սկսաւ օրուան հարցերուն մէջ մտնել: Այստեղ չենք ուզեր ընդարձակորէն գրել անոր նորագոյն երեւոյթներուն մասին: Այլ պիտի յեշենք քանի մը նախազդուշութիւններ, որուն ամէն անհատ գիմելուէ քոլերայով վարակուած շրջանի մը մէջ, ինչպէս Պոլիս:

Նախ, խորշիլ ամէն կերակուրէ, պտուղէ, օշարակէ որ իրեն՝ ընդունողին համար լուծումի մը պատճառ կ'ըլլայ: Քոլերայի մանրէն կ'ամճի,

Կը զօրանայ յատկապէս այն աղիքներուն մէջ որոնք լուծումի ենթակայ են:

Երկրորդ միշտ պատրաստ ունենալ տունի մէջ քանի մը գեղապնակներով լեցուն՝ կէս կռամ սալօլով ու կէս կռամ պանտօնաֆթօլով. տունէն շուկայ գնալուն, երկու երեք հատ այս պնակներէն գրպանի մէջ տանիլ և լուծողութեան առաջին կամ երկրորդ գէպաքէն վերջ անմիջապէս մէկ հատ ստանալ և երկու ժամ վերջ երկրորդ մը եթէ փորհարութիւնը տակաւին կը շարունակէ. եթէ իիթերով է, և արիւնի նշաններ ալ կան, անմիջապէս քսան կռամ հնդկական ձէթ (հինտ եաղը) ընդունիլ և երկու անգամ լուծողութենէն վէրև սալօլի գեղապնակներուն դիմել:

Երրորդ, քոլերայի ատեն տունէն դուրս ջուր կամ ջրալից ըմպելիններ չխմել, ի հարկին թէյ խմել, եռացած ջուր ապահովուելու համար: Եթէ սուրճ խմելու ըլլաք անոր հետ պաղ ջուրէն չխմեք:

Չորրորդ, ծանրամարս ու պաղ կերակուրներէ հետո մնալ: Եթէ կարելի է՝ բնակարանէն դուրս չճաշել. անհրաժեշտ հարկին ներքեւ վստահելի ու մաքուր ճաշարան մը ընտրել ու միայն եռացած կերակուրներէն ընտ-

րողութիւն ընել։ Աղջան, կաթ և ջրալից լուծող պտուղները խորշելի են։

Հինգերորդ, տունի, դպրոցի, խանութի, գործատեղիի, եւայլնի մարդոց վրայ իիստ հակողութիւն կատարել, անոնք որոնք յաճախ գործարան կ'երթան, հաւանօրէն լուծումի մը ենթակայ են, որ քոլերայի առաջին ասաիճանն է ու գրեթէ միշտ բուժելի։ Քոլերան ամէն հիւանդութիւններէ աւելի դիւրութեամբ խափանելի ափստ մըն է, վասնզի գերազանցապէս ազտոտ ջուրերու հիւանդութիւն մըն է։ Քոլերայէն ուզողը կրնայ վարտկութիւն, չուզողն ալ կրնայ անկէ հեռու մնալ։

Առողջապահական տեսակէտով էն, աղտեղի վարդուբարքով մարդեր միայն կը վարակուին քոլերայով, էնեւը կ'առնեն քոլերան ու առանձնեւը կը մեռնին քոլերայով, վասն զի առաջին բուժելի ասաիճանին մէջ օգտաւէտ միջոցներու չեն դիմեր անմիջապէս։

Տօր. Պաղիլ Խան

Հկախուի լանիութեան ներու, որոնք այս պահուս գործի վրայ են, ու կը ջանան օր նոր դեղ նոր հրապարակ հանելու, Զեր առաջին նախազգուշական միջոցն ըլլայ՝ յուրաքանչեւնը. պտուղներէ բնա՛ւ մի վախնաք՝ թէ որ աւրուած չեն անոնք, բայց չափաւոր ըլլայ։ Խառն կերակուր չուտէք, ու շատ զով ջուր չի խմէք, մանաւանդ սառով զովացած. եփուած ջուր խմելն անհրաժեշտ է եթէ զուտ ազբիւրի ջուր չգրտնուի։ Խակ եթէ պղտիկ սիրտ խառնուք եւլն. զգաք՝ առանց վարաննելու քանի մը կաթիլ առէր լոյնիւն ով համեմեցէք գաւաթ մը ջուրը ու քիչ քիչ կուլ տուէք։

Բայց գիտցած ըլլաք որ ամէնէն վճռական դարմանը և-ի լանէն է։ Երեւակայութիւննիդ զսպելու համար ամէն ջանք ի գործ դրէք։

Լիոնի, Վիշիի ու Փարիզի հիւանդանոցներուն մէջ տեսայ այս դրութիւնը վերջին անգամ Եւրոպա կատարած ճամբորդութեանս միջոցին։ Գործողութիւն կրելու համար հիւանդանոց մտնող հիւանդը նախորդ օրը լուգանք կ'առնէ մաքրուելու համար։ Եթէ հիւանդը շատ անմոքուր է, արհեստով ածիաւ-

Քօլերան. — Օրուան հրատապ հարցն է աս. քանի՞ դէպէ կայ, ո՞վ մեռած է . . . : Մենք խորհուրդ կուտանք՝ որ բնա՛ւ ականջ

վաճառ, հնացպան կամ բեռնակիր ըլլալով, կարելի է գործողութիւն կատարուելիք մասը լուալ օճառով և զայն ծածկել չոր ապանեխական պղտիկ վիրակապով մը: Յաջորդ օրը, գործողութեան պահուն, վիրահատութիւն կատարուելիք մասին վրայ լու նէնիւ-ը ո՞իօր էշ +***+ Հինգ վայրկեան ետքը ալքոյի մէջ թաթիուած մարմաշով մը կը սրբուի էուը, որովհետեւ արդէն սյդ մասը մաքրուած և ամլացած է ու կարելի է գործողութիւն կատարել առանց վախնալու վարակումէ: Ի՞նչ պարզութիւն և ի՞նչ դիւրութիւն ու ի՞նչ ինայողութիւն ժամանակի: Ո՞չ սէ-պէ-իւ-է, ո՞չ սէ-իր ֆէնի+է, ո՞չ սէ-էր ո-էի+է, ո՞չ ալ ուրիշ նիւթի պէտք կայ, պարզապէս նէնրէ-ը ո՞իօր քսելու է գործողութեան ենթարկուելիք մասին վրայ: Դրամի ի՞նչ ինայողութիւն նաև աղքատ հիւանդանոցներուն համար:

Այս համբաւաւոր գեղը, նէնիւ-ը ո՞իօր, որ ամէն տեղ կը գտնուի թէ՛ աղքատին տունը, և թէ հարուստին, և թէ գիւղական պղտիկ գեղարաններու կամ գեղավաճառանոցներու մէջ, մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ նաև ստիպողական պարագաներու մէջ, զոր օրինակ, երբ հարկ ըլլայ ամսիջապէս

գործողութիւն կատարել արկածաբար ստացուած վէրքի մը համար, կամ պատերազմի գաշտի վրայ կատարուելիք վիրաբուժական գործողութեանց ատեն: Վիրաբուժական գործողութեանց համար Եւրոպայի մէջ այժմ ընդհանրացած այս գրութեան շնորհիւ փայլուն արդիւնքներ ձեռք ձգեցի ես ալ, վերներս կատարած 60 գործողութիւններուս միջոցին, թէ՛ Պուլկարական հիւանդանոցին մէջ և թէ՛ գուրսը Այս փոքր մանրամասնութիւնները բնականաբար կը գրեմ ո՛չ յարգելի պաշտօնակիցներուս համար, որ արդէն գիտեն զաննք, այլ ծառայութիւն մը մատուցանելու համար հասարակ ժողովուրդին ու ընտանիքի բարի մայրերուն, որ կրնան լոկ նէնիւ-ը ո՞իօր գործածելով վէրքերու համար զաննք անվրիպելի կերպով ազատել բորբոքումի կամ փտախտի ամէն վտանգէ:

ՏՕԴ. ԵԱՂՈՒ

Վիրաբոյժ Պուլկար Հիւանդանոցին

Մատենաւուրը (Թօլոյմ). — Շատ անգամներ ժողովրդական պարզ գեղեր ալ իրենց օդտակարութիւնը կ'ունենան. ահաւասիկ, մատնաշուրթի համար գեղ մը՝ որ թէկ իր իո-

շրութեամբ անտանելի կ'ըլլայ, բայց նշդրակի
հարուածէն կ'ազատի ձեզ:

Երբ մատներնիդ ցաւիլ սկսի, լեմոն մը
առէք, մէկ ծայրէն կտրեցէք և ցաւած մա-
տերնուգ վրայ անցուցէք. թողուցէք 1-2 օր
կամ պակաս, մինչև որ ցաւը անցնի: Հանած
ատեննիդ պիտի աեսնէք որ կատարելապէս
բժշկուած է մատերնիդ:

Սենեակի մը օդը մաերել. — Դրէք
պնակի մը մէջ մէկ դգալ սուրճ, մէջտեղը գո-
գաւորելով աեղաւորեցէք պղտիկ կտոր մը
քափուր (քափիրի) ու բոնկցուցէք. քափուրը
պյուրելով սուրճն ալ հետը մէկտեղ կ'այրի և
ասանկով սենեակին օդը կը մաքրուի:

**Տնական դարման ինֆլուէնձայի
դէմ.** — Առէք վեց հատ խնձոր, առանց կե-
ղեւելու կոր կը կտրտեցէք, ամանի մը մէջ
լցուցէք և աւելցուցէք 2 լեմոնի հիւթ և 15
տրամ մեղր, բերանը գոցեցէք և մաղմաղ
կրակի վրայ դրէք. յետոյ մղեցէք (սիւզիւշ
ընել) և տաք տաք տուէք հիւանդին:

Օանկարծ վիրաւորուելով երը արիւն-
հոսութիւն տեղի ունենայ, անմիջապէս բամ-
պակ առ, տաք ջուրի մէջ թաթիկ և վէրքին
վրայ դիր, անմիջապէս կը դադրի արեան հո-
սումը:

Թեւեկնի խէճը (Թիրէմէնրի) իբր
հականեխիչ. — Կիբարկումը պարզ է և
ամեն ոք կրնայ փորձել:

Պնակի մը մէջ լցուցէք դգալ մը բե-
ւեկնի խէճ, և դրէք մաղմաղ կրակի վրայ:
Այսպէս կամաց կամաց շոգիանալով կ'ոպաննէ
մանրէները և օդը կը մաքրէ: Ասկէ աւելի դիւ-
րին միջոց չի կայ կարծեմ բոլոր սենեակները
հականեխելու համար: Վակայն գիտնալ պէտք
է որ, ամենօրեայ օդի փոփոխութեան տեղը չի
բաներ: Ամեն ոք գիտէ այժմ որ, մեր ընակա-
րանին այսինքն, ննշեսենեակ, ճաշարան եւլն.
պատուհանները և գուռները օրը մէկ քանի
անգամ բանալ գոցելու է ցուրտ օրերը, իսկ
տաք ատենները բոլորովին բաց թողելու է:

Սյրածի դեղ. — Շատ մը փորձերով
հաստատուած է որ, բեւեկնի իսկութիւնը
(թիրէմէնթի բուհը) այրածի ցաւը վարկենա-

պէս կ'առնէ, և ուրիշ ամեն տեսակ դարձանաներէ աւելի շուտ կը բժշկէ:

Ստերջացած բամզակի (զոր օրինակ քօդօն ֆէնիքէ. քօդօն պուհիքէ) կտոր մը թաթիցէք (թրջելու աստիճան) բեւեկնի իսկութեան մէջ և այրած մասին վրայ դրէք, յետոյ լաթով մը փաթթեցէք որ բամզակը վրային չի սահի: Եթէ փշտաճներ կան, պէտք է երկրորդ կամ աւելի աղէկ երրորդ օրը պատռել: Պէտք է զգուշանալ սակայն որ բեւեկնի իսկութիւնը միմիայն այրածին վրայ մնայ, ապա թէ ոչ առողջ մորթին վրայ մնալով՝ բորբոքում յառաջ կը բերէ:

—

Փողացաւի դարման. — Երիցուկի (փափաթիս) ջեռաթուրմ (էնֆիւզիօն. Տես, Օրց. նախորդ թիւերուն մէջ) պատրաստեցէք, և խառնեցէք մէջը քիչ մը մեղք ու քիչ մ'ալ քացախ. — Ճեր պատրաստած ջեռաթուրմին համեմատ — ասով՝ օրը քանի մը անգամ՝ խաղածեցէք (կարկառա ընել): Ընդհանրապէս այս գեղը կը բժշկէ թէ կոկորդի և թէ նշագեղերու (պատէմճիք) բորբոքումը, կ'ըսէ, վերսիւշալ առողջապահական մասը:

—

Օղին գեղ է: Թողղ բժիշկը զանիկայ հիւանդին տայ: Դուն մի խմեր:

Ծխախոտը գեղ է: Թողղ բժիշկը իր հիւանդին տայ: Դուն մի գործածեր:

Այսօր հրաժարէ ծխախոտէն և օղիէն, քեզի երբէք վնաս չըլլար: Եթէ ըսեն, կամաց կամաց ձգելու ես, այսչափ սորվելէդ ետքը վնաս է, ոչ, ոչ, սուտ է, մի հաւատար. այսօր ձգէ, հրաժարէ, և կեանք պիտի ստանաս: Մի վախնար, քաջ եղիր:

Ռումարիզմի դեղ. — Առ գրզը քէօք ծեծէ և խառնէ կաւի հետ, ծեփէ բաղնիքի մէջ ցաւած տեղը:

Քերուտուք կ'անցնի լեմնի կտորով շփելով:

Կոկորդի ցաւ, նշաստա 1 ջուրի դգալ դիր գաւաթ մը ջուրի մէջ և յաճախ կարկարա ըրէ:

Ուժի տաք պանեօ գլխու տաքութիւնը կը հեռացնէ. մանաւանդ մանկանց համար լաւ

է. սուբերը մինչեւ ծունկը դիր տաք ջուրի մէջ
յետոյ անկողին դիր տղան:

Պնդերակուրիւն ունեցողներն պէտք
չէ գրգռիչ ըմպելիք գործածեն. միս ալ շա-
փաւոր վայելելու են, սակաւակեր պէտք է
ըլլան, և բացօքեայ շարժում ընեն. բժիշկին
խորհուրդով դեղ առնել:

Գլխութ թեփի միակ դեղն, ԴՐՅԱՆ-
դարմանն է խայծղանի օճառ. գլուխը մնով
լուս և փրփռւը 10-20 ըոպէ թող մնայ, յե-
տոյ գաղջ ջրով մաքրէ. 6-8 օրն անգամ մը
կրինել հարկ է:

Նասոր կը դադրի ցաւելէ և կ'անհետա-
նայ իսկ եթէ մաքուր կտաւ մը թիրէմէնթինի
իւղի մէջ թաթխելով դիշեր ցերեկ նասրին
շուրջը դնես:

Ուռւմարիզմը կ'ըսուի թէ մեղսուի խայ-
թով կը բուժի. Այս գժուարին գործ է. ըսըր-
կանը լաւագսյն է, փորձուած ալ է որ ամէն
անգամ գործածուելուն ցաւն անցած է:
Թարմը ըսըրկանը առ ու մի քանի մեղմ թեթև

հարուած տուր ցաւած տեղին վրայ. եթէ կը
կասկածիս թէ վասսակար նիւթեր կան ըսըր-
կանին վրայ, ջրով ցօղուէ զայն, զօրութիւնը
չկորսնցունեւ երբ չորնալէն ետև գործածես:

Լեմոնը որ ամէն տեղ կրգտնուի պան-
չելի դեղ մ'է շատ ցաւերու: Տիֆթէրի կոչուած
սոսկալի ախտին արգելիչ է. կոկորդի ցաւն,
հազը, գլխի ցաւն, ջերմը, մատնաշուրթն կը
բուժէ, մորթը կը գեղեցկացնէ և առատ մազ
կ'արտադրէ:

Վիզի ցաւի համար լեմոնի հիւթով
կարկարա ըրէ. հայի և պաղառութեան
համար հաւասար չափ լեմոնի հիւթ և մեղր
խառնելով ժամը մէկ թէլի դգալ ուտել
պէտք է. գլխի սասատիկ ցաւի համար մաս մը
լեմոնի հիւթ խառնէ երկու մաս եռացած ջրի
հետ ծանր ծանր խմէ հնար եղածին չափ տաք,
ամէն ժամ միջակ գաւաթ մը, ջերմի համար
կէս լեմոնի հիւթը երկու ապուրի դգալ ջրով
խառնէ և քիչ մը շաքար խառնելով խմել
պէտք է օրը երեք անգամ: (Մատնաշուրթն
(տոլամա) կը բուժուի սապէս. — **Լեմոնի** մը
մէկ չորրորդը կարէ և վիրաւոր մատը ատոր

մէջը ծածկէ և լաթով մը կապէ, այսպէս թող
մայ 1-2 օր. վերքը հասունցած կ'ըլլայ և պա-
րունակած թարախը կրնայ հեռացուիլ:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԱՐԴԱՍՊԱՆ ՅՈՎ. ՍԷՓ

«Արտիր հոգութուննեաւ ուշ
իւբէշ», Երեմա ԽԹ, 16:

Յովսէփի հայրը արհեստով գլխարկ շինող
էր և կրօնքով եռանդուն ֆաթողիկ, սակայն
երբ Աւետ. օրիորդ մը իր գիւղն հարս գալով
ֆաթողիկ կրօնքը պիտի ընդունէր, նա ըստ.
«Կրօնքիդ հաւատարիմ» կեցիր. հօրդ կրօնքը
ի՞նչ ունի»: Այսպէս մի կողմանէ ծայրահեղ
աւելորդապաշտութիւն և միւս կողմանէ ող-
ջամիտ տեսութիւններ այս ընտանեաց մէջ
խառն ի խոռուն կը մշակուէին:


Յովսէփի պատանեկութեան վրայ մեծ ազ-
դեցութիւն ունեցաւ գէպք մը: Աւետ. հօվիւկն
սապէս կը պատմէր Յովսէփ: — «Մեր դրացին

մեռաւ և թաղուեցաւ. օր մը անտառէն
մարդ մը ահ ու դողով վաղելով եկաւ և
պատմեց թէ հանգուցեալը իրեն պատահէր և
իր հետ խօսակցութեան է սկսեր: Կերպ մը
գտնելով սարսափելով հեռացեր է անոր քո-
վէն: Երեկոյին մեռեալը յանկարծ վառարանին
քով բազմեր է: Մառան զանի ախոռը տեսեր
է. մերթ հոս, մերթ հոն կերեւնայ եղեր այդ
մեռեալ, թաղեալ և յարուցեալ մարդը.
անոր առջեւէն գուներ ինքնին կը բացուէին,
աթուներ կը շարժէին և շուներ ողբաձայն
կուլային: Այս լուրը կայծակի նման բոլոր այն
կողմերն տարածուեցաւ. «Ճերունի Մայէր յա-
րութիւն է առեր, տեսանք զնա» կ'ըսէփին առ-
մէնքը Ամէնքն ալ հաւատացին թէ Մայէր
ողջ է և տասներիու ժամ հեռու տեղէ մը
կախարդ ճգնաւոր մը բերել տուին, որ մեծա-
ծախ հանդէսներով և արարողութիւններով
Մայէրի հոգին գիւղէն արտաքսէ. ճգնաւորը
երբեմն երբեմն կուգար տեսնելու թէ արդեօք
ամէն բան ի կարգին է:»

Ուրիշ անգամ մը Յովսէփ ստէպ կը պատ-
մէր. «Ուրիշ մի դրացի հպարտ և հարուստ
մարդ մ'էր. սա ալ կախարդի մը պէտք ունե-
ցաւ, զի գինեմոլութեան գեւը զինք գերի էր


ըրած։ Գինետուն երթալ և այլոց հետ արքե-
նալ իր պատուղյն չէր ձգեր. սակայն երբ
պատեհ առիթ ներկայանար անոր, Բագոսի
առաստ զոհ կը բերէր։ Ընտանեկան ուրախալի
կամ տրտմալի ո՛եւ է գէպք, աշխարհային
կամ կրօնական ո՛եւ է տօն, առանց արքե-
նայու չէր անցներ. մանաւանդ ուխտագնա-
ցութեան ատեն, նա արքենալու մ.ջ յետին
աստիճան առաջ կ'անցնէր»։

«Առաջին անգամ հօրս հետ ես ալ ուխ-
տագնացութեան մասնակցեցայ. գիշերը ուշ
ատեն տուն եկանք, և էն ետեւէն հարուստ
դրացին, արքեալ, գոռալով, պոռալով, գլոս-
րելով և ինալով մեղ կը հետեւէր օղիին լե-
ցուն սրուակն միշտ ծոցը դրած։ Ամեն սրբոց
պատկերներու առջին կանգնելով կ'ազօթէինք
մենք. իսկ նա մէկ կողմ քաշուելով կը խմէր.
գիւղին մուաքին մօտ Միքայէլ հրեշտակապե-
տին արձանը կար. մենք ողջունելով զնա ա-
ռաջ անցանք, իսկ նա կը պոռար. «Կեցէք.
քիչ մ'ալ խմեմ։» Հայրս անոր մօտենալով
ըստու. «Դրացի, գոնէ սպասեցէք որ մենք
անցնինք»։ «Ինչո՞ւ պիտի սպասեմ.» գոչեց
գինեմնլը. «այդ արձանէ՞ն քաշուիմ. թող
ան ալ խմէ.» և արձանին մօտենալով գոչեց.



Գ. Ե. Զ. ՕՏԵԱՆ
Հովիտ Աւետ. Հայոց (Սթանօղ)

Ավագանութեան և պատրիարքութեան



«ինամի, Խմեցէ՛ք.» և շիշը նետեց արձանին
գլխուն։ Ահ ու սարսափ լեցուց միւս ուխտա-
ւորներուն սրտերն գինեմոլը սահեցաւ, կըռ-
նակին վրայ գետինը ինկաւ և չոն մնաց,
պօռալով և հառաջելով, օղիի շիշին կտոր-
ներուն վրայ, թրջած, արիւնաթալթախ,
անձայն արձանին սոտից տակ, Խոր լուռ-
թիւն կը տիրէր գիշերուն մթութեան մէջ.
Ի վերջոյ դողդոջուն ձեռքերով բռնկցին գի-
նեմոլը և առւն տարին։ Ես ալ ահավ դո-
ջով անոնց կը հետեւէի, և կը գիտէի սո-
սած, պազած, անձայն, անկենդան գիսկին
իր անկողինին վրայ տարածուած։ Կը լուէի
ձիւն պայտերուն ձայնը քարերուն վրայ,
երբ մին բժիշկին կը խրկուէր, և հետեւեալ
առաւօտ իմացոյ որ մէջքի սոկորներն ջար-
դուրուրդ են եղած։ Թշուասը այլևս ինք-
զինք չգտաւ. քանի մ'օրէն վէրքը տարած-
ուեցաւ և նա մեռաւ անզգոյ վիճակի մէջ։
Այս գիպուտածը ազդեցութիւն ըրաւ իմ վը-
րաս, չոն Աստուծոյ գատասաան կը տեսնէի.
կրօնական գգացումներս զօրացան. քա-
րոզներուն ուշի ուշով մտիկ կ'ընէի, սա-
կայն շատ շանցած իմ ընկերներուս մնլե-
ռանդ կրօնասիրութենէն նշոյլ իսկ չմնաց

վրաս , եւ սկսայ տարակուսանաց տեղի
տալ :

Հօրս արհեստն որդեգրելով գլխարկ շի-
նող եղայ . զինուորագրութեան ատեն եկած
ըլլալով ստիպուեցայ , առաջին անգամ ըլ-
լալով , բաժնութիւն ծնողացս տունէն , ասի
շատ գժուար եկաւ . քիչ տատենէն զինուո-
րի համազգեստով սկսայ փողոցներն շրջել :
Տեսակ տեսակ փորձութիւններ գէմն ելան . ո-
րոնց գէմ նախ յաղթող գտնուեցայ : Ըն-
կերներս սկսան սրտէս հեռացնել կրօնի ա-
մէն զգացում . ստկայն գեռ աւետ . եկեղեցին
կը յաճախէի Զինուորական ծառայութեան
Յ տարիններն անցան , սակայն ես , սիրելով այդ
վիճակ , շարունակեցի և ենթասպայ եղայ :
Հաւատարմութեամբ և չար ընկերներու թե-
լագրութեանց դիմադրելով անբասիր կեանք
կը վարէի , որով իմ տեսուչներուս վստահու-
թեան արժանացայ , և ինձ համակրեցան .
գեռ քարոզներու կը յաճախէի , բայց ունայ-
նամութեան սատանան սկսաւ զիս իր ձե-
ռաց մէջ առնել . երբ բանտերու հսկողու-
թիւն ինձ յանձնուէր ինքզինքս բանտարկելոց
հետ բաղդատելով կըսէի . ի՞նչպէս կընայ մարդ
մը այս աստիճան նուաստանալ , քանի որ ա-

սոնք մարդ են և ոչ թէ վայրի կենդանի . ուս-
տի զիս անոնցմէ վեր դասելով սկսայ հպար-
տանալ :

Անգամ մը ռազմափորձերու առթիւ Յովշ-
ուկի պահակ պէտք էր կենար . առաւոտեան
գէմ իր երկու ընկերներն եկան և զինք կան-
չեցին , երկուքն ալ գունաթափ էին եղած
վախէ , քանզի մացառներուն մէջ կնոջ մը
ջախջախուած և արիւնաթաթախ դիակն տե-
սած էին . Յովսէփը հոն տարին , որ երբ տեսաւ
ահուելի դիակն , սարսափեցաւ և սպանիչին
գէմ կատաղի խօսքեր խօսեցաւ : Ասկէ քիչ
ետք Աստուածային արդարութեան մի ահ-
աելի ազգեցութիւն ստացաւ : Իր գունդը
մարզանք կը կատարէր քաղաքին դրան մօտ .
սարսափելի փոթորիկ մը փրթաւ . և ճիշդ երբ
զօրապետը շարուած գունդին առջին հասաւ ,
տեղատարափ անձեռւ մը սկսաւ և զինուոր-
ներն անհանգիստ եղան : Զօրապետը հայհո-
յելով գոչեց . երբ ես անշարժ կեցէք հրա-
մայեմ՝ ալ ոչ Աստուած և ոչ սատանայ
կրնան միջամտել . անկէ յետոյ այլեւս երկին-
քի հետ գործ չունիք . այժմ ես եմ հրամա-
յողն : Ասանկ գոչելով ձին քառասմբակ
վաղցնել սկսաւ . սակայն թացութենէն ձիւ-

ուն առջեւի ստքերն սահելով՝ զօրսապետը առնոր գլխուն վրայէն կռնակի վրայ գետինը նետուեցաւ և անշարժ հոն տարածուեցաւ։ Սպաներ յառաջ նետուելով վերցուցին զնա. թէ եւ չէր վնասուած, բայց վախէն գունաթափ էր եղած։ Յայնժամ սկսաւ նա մեղմ ձայնով դուել, «Տղայք, նա որ վերը կը նստի, կը միշտամունք եղեր. այս անգամ անվնաս անցուցինք!» Հրամանատարութիւնը սպայի մը յանձնելով, կամաց կամաց քաղաք քշեց ձին։

Ոչ թէ Յովսէփի այլ նաև բոլոր միւս զինուորներուն վրայ մեծ աղդեցութիւն ըրած այս միջադէպը։ Սակայն կրօնքը իր սրափն հետ ունէ գործ չունէր. ուստի այս արկածին աղդեցութիւնը շատ չտեւեց։ Երկար ատեն զինուորներուն զլխաւոր փորձութեան — անբարոյականութեան դէմ մաքառեցաւ, սակայն իր ունայնասիրութիւնը զինքը պարասըրահներ կը մղէր։ Անդ գեռատի մի օրիորդի հետ ծանօթացաւ, որոյ հետ ապօրէն յարաբերութիւն հաստատեց, որոյ արդիւնք եղաւ մի մանկան ծնունդ։ Իր խոր անկման վրայ ամօթահար ինքզինք ատել սկսաւ։ Նկեղեցւոյն մէջ գլուխ գետին կախած կը նստէր, առաջ կը կարծէր թէ իր բարեպաշտութեան

համար ամենուն աչք իրեն էին ուղեալ, այժմը կը կարծէր թէ իւրաքանչիւրը զինքը կը դատապարտէր. քարոզին մէն մի բառը իրեն մի յանդիմանութիւն կը թուէր. իր ապաշխարող, մեղաւոր, Աստուծոյ առջեւ չէր խոնարհէր, իրը յոգնած և ծանրաբեռնեալ չէր փնտուեր խոստացեալ հանգիստը։ Օրինաց մուրճն ու կռանը կը ջախջախէին իր խիզճը. այս վիճակը անտանելի էր իրեն. ուսակ սկըսաւ Աստուծոյ առւն չյաճախել։

Իր զաւկին մօրը պարտ էր իրեն ապրուստի համար բաւական գրամ վճարել, որով յետին աստիճան խնայողութեամբ ապրիլ պարտաւորուած էր։

Յովսէփի իր պիղծ զուարճութեանց մէջ թաղուեցաւ, որով գրամի կարօտութիւնը աւելցաւ. պարտք պարտքի վրայ գիշուեցան, աղջկը սպառնաց իր հօր բողոքել եթէ իր պարտաւորութիւններն զանց ընէ։ Անգամ մը իրեն բարեկամ մի ընաանեաց տունն էր. սենեակին մէջ առանձին գտնուած ատեն գզրոցն բացաւ քսակ մը գրամ առաւ ու ծոցը պահեց։ Տունէն հեռացած ատեն ճամբուն վրայ այս գրամը ծանր բեռ մ'էր եղած իրեն, Գո՛ղես, գող ես, կըսէր ինքնիրեն, ետ գարձիր եւ

դրամը տեղը տուր, կըսէր ներքին ձայն մը —
անհնար բան, Տագնապն երթալով սաստ-
կացաւ, զօրանոցին անցքին մէջ պահարանին
տակը նետեց:

Օրեր անցան տագնապալից, յուղեալ: Ա-
ռանց որոշման գալու թէ ի՞նչ պիտի ընէ
դրամը: Գիշեր մը, մահուան սարսափով ան-
կողինէն ցատկեց ծածկած գանձն տանելու.
առանց պատճառը գիտնալու, ճիշդ այն պա-
հուն անցըը աւլող զինուորը քսակը պահա-
րանին տակէն դուրս էր քաշած, նա զայն
սպային բերաւ, շուտարած, յուղուած Յովէփ
իր խուցը քաշուեցաւ: Արդէն դրամին տէ-
րերն անոր վրայ կասկած ունէին բանը յայտ-
նուեցաւ և Յովէփի բերդարդելութեան գա-
տապարտուեցաւ:

Պատիժը աւարտելէ ետեւ ամօթահար էր
եղած, բայց ոչ թէ ապաշխարած: Միայն
կը ցաւէր որ զինուորական պատիւն կորսըն-
ցուցած էր: Քաղաք գառնալով սկսաւ իր
նախկին արհեստին պարապիլ և գլխարկ շի-
նողի մը քով մտաւ: այլևս սկսաւ մեղաց
ծառայել: Գիւղ գարձաւ կարծելով թէ հոն
ամէն բան լաւ պիտի ըլլար: Քաղաքին փոր-
ձութիւններէն թէև խոյս տուած էր, սակայն

իր չար սիրաը զանոնիք հետը կը կրէր: Որոշեց
ժրաջան աշխատաիլ և բարւոփել ինքզինք,
բայց կարձ կեանք ունէր այս որոշում: Մեղ-
սակից կեոչ նամակներն մերթ աղերսագին,
մերթ գանգատող և մերթ սպառնական կըլ-
լային, եթէ իրեն դրամ չզրկէր. ուստի
գիւղէն փախչիլ որոշց: Ծնազրէն հրաժեշտ
առաւ այլևս զանոնք չտեսնելու պայմանաւ:
Քաղաք հասնելուն ամէն տեսակ զուարճու-
թեանց, մղութեանց և արբեցութեանց մէջ
նետուեցաւ: արհեստը ձգեց, ցերեկներն ա-
մենածանր աշխատանաց կը հետեւէր, կը
բաւէր որ շատ դրամ վաստկէր, և ինչ որ
դառն աշխատանօք ձեռք ձգէր, անբարո-
յական կեանքով կը փացնէր գիշերները: Ե-
կեղեցի երթալ մսքէն իսկ չէր անցներ: Թէև
կ'ողաքար ծանր յանցանաց և մեղաց վրայ, օգ-
նութիւն կը փնտուէր, սակայն զղում չէր
այս, ոչ ալ նոր կենաց որոշում: մղութիւնք
զինք կուբացուցին և չէ թէ միայն Աստու-
ծոյ ձայնին բոլորովին խուլ և անզգայ եղաւ,
այլ նաեւ մարդկասյին բարեկամական ազգա-
րարութիւնն: գարշելի մարդիկներու ընկեր
եղաւ յայտնի համարձակ, և անոնց ստորնա-
գայն նկարագիրն որդեգրեց և իւրացուց: Բնա-

կամանի և կերակուրի համար ըրած մեծկակ
պարագ մը կը նեղը զինքը. աշխատութեամբ
չէր կը նար այդ պարագը վճարել, և փոխա-
ռութիւն ալ ընել անհնար էր. պէտք էր
ստկայն ստակ ճարելու կ'ըպ մը գտնել: Դը-
րամ, միայն դրամ. այս էր իրեն միակ կա-
րօտութիւն, իղձ եւ փափաք:

Իր չարաչար լքած կնոջ եղբայրը քաղա-
քին գործարաններուն մէկուն գունապանը եւ
ծառան էր: Յովսէփ, անոր քեռալը, համար-
ձակ կը վարուէր անոր հետ և արտօնեալ էր
իր քով գիշերել, քանզի պարտի համար այլ
եւս իր բնակարանը չէր համարձակէր երթալ:
Յովսէփ գիտէր որ իր հիւրընկալը սենեակին
մէջի սնտուկը պահած դրամ ունէր: Յոյս
չունէր որ փոխ ստակ ստանար, ուստի ուրիշ
միջոց խորհեցաւ դրամը ձեռք անցընելու:

Բոլոր գիշեր աթոռի մը վրայ նստած ան-
ցուց Յովսէփ, իւր խորհուրդը և աչքը շարու-
նակ սեւեռած այն տեղին վրայ ուր որ դրա-
մը պահած էր: Անհանգիստ երազնէր կը
վրդովէին զինքը, պէտք էր սպաննել և տիրա-
նալ քնացաղին դրամին, ուրիշ ճար չկար:
Բայց ի՞նչպէս, զէնք մը կը փնտաէր, մինչ ի՞նք
ածելիէ մը զատ բան չունէր: Նուտ մը ձեռ-

քը առաւ զայս, կամաց մը անկողինին մօտե-
ցաւ, քնացաղին կոկորդը կարելու վրայ էր
երբ յանկարծ խորհուրդ մը սարսափով լե-
ցուց էր սիրտը: Խ'նչ ահուելի բան պիտի
ըլլար, եթէ թշուառը արթննար և աչքերը
բանար: Գոզդզալով ետ քաշուեցաւ: Նո-
րէն ածելին վերցուց, նորէն ձեռքը առաջ
չգնաց կատարել ահուելի գործը կուզէր ա-
ւարտել գործը, բայց չկարողացաւ: Այսպէս
ահուելի պայքար մը տեղի ունեցաւ սրտին
մէջ, մէկ ամբողջ ժամ: Ի վերջոյ նետեց ա-
ծելին. ո՛չ, չես կարող, կըսէր սրտին խորե-
րէն: Յայնժամ հանգիստ շունչ առաւ: Այս
վայրկենիս լուսինը ամսկերուն ետեւէն ելլելով
սենեակը լուսաւորեց: Տեսաւ որ անկիւնը
կացին մը կայ, երկայն կոթով: Առ այդ կա-
ցինը, կըսէր ձայն մը իներբեռուստ. հարկ չէ
մարդուն մօտենալ, գիւրաւ կըհասնիս նը-
պատակիդ: Կատաղի մի ոստումով կացինին
վրայ ցատկեց անձայն, յափշտակեց զայն, և
առանց ուրիշ բան մը խորհելու իջեցուց զայն
քնացաղին զինուն: Սոոկալի աղեկտուր մի հա-
ռաջ և ապա խոր լռութիւն: Կացինը գետինը
նետեց մարդասպանը, ինքն ալ աթոռին վրայ
ինկաւ:

Գործատունին դրանը զանգակին հնչիւնը զինք իր անզգայութենէն զարթուց, պէտք էր ելլել, գործարանի աշխատաւորք ներս պէտք է մտնէին, իր առողջի գործը այժմ կենդանի կերպով աչաց ներկայացաւ, պէտք էր բանաւին տալ, գիտակին վրայէն ծռելով ձեռքը երկնցուց պատուհանէն և սպասող գործաւորներուն տուաւ բանալին, մարդիկ գէմքը չտեսան և կարծեցին թէ գունապանն է բանաւին տուողը և իրենց գործին գացին, նորէն զգայազիրկ գետին ինկաւ Յովսէփ. ի վերջոյ գժուարաւ ոտքի ելաւ, արշալոյսն արդէն ծագած էր, Սպանեալէն հեռու գարձնելով աչքերը գնաց, ոնտուկը բացաւ, առաւ գրամը և կամացուկ մը տունէն հեռացաւ:

Սպանութիւնը յայտնի եղաւ և Յովսէփը այն օր իսկ ձերբակալուեցաւ, խոստովանեցաւ ոճիրը և իր միակ փափաքն էր որ ամէն բան շուտ անցնի, Սակայն ամիսներ անցան մինչեւ որ քննութիւնը աւարտելով վճիռը տրուեցաւ և վաւերացուեցաւ, Սոյն միջոցին իր մէջ Աստուծուծոյ ողորմութեան մի փափաք արթնցաւ, մարմնաւոր կենաց համար հոգը չէր, մեռնիլ կուզէր, սակայն սկսաւ իր հոգւոյն համար հոգընել և փրկութեան ճամբան փնտուել:

Ատենօր լսած Աւետ. քարոզներէն Յիսուսի ձայնը ապաշխարութիւն կը յանձնարաւէր իրեն, յաւիտենական կենաց յոյսը կը յիշէր, Ռւստի բանտին Աւետ. քարոզչին յայտնեց իր սրտին փափաքը և արտօնութիւն ստացաւ Աւետ. քարոզութեանց մասնակցիկ: Նաբաթը քանի մը ժամ՝ ալ Աւետ. քարոզիչի մը հետ իր խուցին մէջ խօսակցութեամբ կ'անցնէր, Յովսէփ սկսաւ աշխայժիւ կարգաւ Ս. գիրք, և անոր մէջ միմիթարութիւն փնտուել: Քարոզչին ազգեցութիւնը բերաւ զինքը ճանչման իր մեղաց նաև զդշման, և Աստուծոյ ողորմութեան և շնորհաց վստահութեան: Ի սկզբան կ'ողբար իւր գժբաղդութիւնը, բայց շուտ սկսաւ իր յիմարութիւնը և կուրութիւնը տեսնել և ի վերջոյ ճանաչեց որ Աստուծմէ հեռանալն էր պատճառը իր խոր անկման և կործանման: Յղթայակապ Յովսէփ շատ անդամ կը վայելէր Աւետ. քարոզչին այցելութիւնը իր անենակին մէջ. այս միակ խուցն էր բանտին մէջ, ուր Աւետարանի պայծառ ճառագայթք ազատ մուտք կը գտնէին. հոս մոռցաւ բանտարկեալն իր արտաքին վիճակը և բոլոր հոգւով կը խորհեր կենաց ջուրէն խմել և անցնել իր հոգւոյն

ծարաւը Հարցնելով և ունկնդրելով թողուց
Յովսէփ որ չնորհաց արեւը ծագի իր հոգւոյն
վրայ. ի վերջոյ դաւանեցաւ իր հաւասաքը և
յայսը: «Տէր քարոզի» կ'ըսէր նա իր գիսաւ-
տումէն քիչ առաջ, «Աւետ. վարդապետու-
թիւնը ամէն ուրիշներէ վեհ և գեր ի վերոյ է,
յիրաւի նա է զօրութիւն աստաւածային. երբ
տրտում, տիսուր ըլլամ և լալ սկսիմ երեք
սիրելի համարներ ունիմ Սուրբ գրոց մէջ,
Աստուծոյ ողբրմութեան նկատմամբ, որոնց-
մով կը միիթարուիմ: Ես. 1. 18. Եթէ մեղ-
քերնիդ արեան նման կարմիր ըլլան, ձիւնի
նման ձերմակ պիտի ըլլան, Յով. 21. 15. երբ
Յիսուսը զինք երեւ ունիւմ ուրիշուն Պետրոսին
կ'ըսէ. արածէ՛ ոչխարներս, արածէ՛ գառնուկ-
ներս, առանց անոր ուրացումը յիշելու և
նկատողութեան առնելու: Երրորդն է այն
թանկագին և անգին խօսքը, զոր Յիսուս ըսաւ
Խոչին հրայէ առաջանին, որ եւ է՞րծոց ո՞րժանի
պատրիէլ կ'սորուաց, «Այսօր իմ հետո դրախտին
մէջ պիտի ըլլաս»: Յիսուս իր խօստումը բռնեց
անշուշտ, և զնա գժողով չիրկեց. ուստի երբ
հասնի իմ ժաման, բոլոր զօրութեամբս խաչ-
եալ փրկչին պատկերն հոգւոյս առջն պիտի
բռնեմ և մոռնամ ամէն ուրիշ բան, և գո-

չեմ անոր. ո՞հ, ողբրմէ՛ ինձ. յայնժամ — կը
յուսամ — թէ նա զիս չի պիտի մերծէ. եթէ
այս մնայ իմ վերջին միակ խորհուրդս. չեմ
կրնար կորսուիլ»:

Այս խօսքերէն յետոյ Յովսէփ վերցուց իր
շղթայակապ ծանր ձեռքը և զայն գունաթափ,
բայց զուարթ երեսին տանելով սրբեց ար-
ցուները, ծանր շղթան գետինը կը քսուէր:
Մահուան վճռագիրն, որուն ակնկառոյց
կ'սպասէր, հասաւ. ինք մեծ անդորրութեամբ
լսեց վժիռը և ինդրեց որ Աւետ. քարոզիչը
մինչև վերջը քով կենայ. այն վերջին գիշերը
դաստապարտեալին հետ անցուց մահուան
պատրաստելով զնա. զլիսատման վայրն եր-
թալէ քիչ առաջ նորէն դաւանեցաւ իր
հաւասաքը և յայսը պարզ խօսքը ուով, և հար-
ցուց քարոզին թէ կինա՞յ այս դաւանութեամբ
երշանիկ մեռնիլ: Հաստատ կերպով ապա-
հովցուց քարոզիչն թէ նա վստահ կրնայ ըլ-
լսյ Աստուծոյ շնորհաց:

Յովսէփ գիսատուեցաւ անդորր խաղա-
ղութեամբ: Անոր կեանքը Յակ. Ա. գլուխ և
15րդ համարի ահուելի մի բացատրութիւնն է.
«Յանկութիւն յղանեալով մեղք կը ծնանի և
մեղքը որ կը կատարուի մահ կը ծնանի». սա-

կայն անոր մահն ալ հաստատ ապացոց է
սա' խօսքերուն. «Նա որ ինձ կը հաւատայ.
թէկ մեռնի պիտի ապրի»:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ա Ս Ո Ւ Ա Մ Ա Շ Ո Ւ Խ Զ

Աստուածաշունչ մատեանն գրուած է
իբր յիսուն հեղինակներէ:

Ունի Հին կտակարանը 39, Նորն 27,
ամբողջ 66 գիրք:

Ունի Հին կտակարանը 929, Նորն 260,
ամբողջ 1181 գլուխի:

Ունի Հին կտակարանը 23,214, Նորն
7959, ամբողջ 31,173 համար:

Ամենէն կարճ գլուխն է ձժի, և երկա-
րագոյնն ձժի՞ Սաղմոսը:

Դ. Թագ. ԺԹ. գլուխը և Եսայ. Լ. գլուխը
ձիցդ նման են:

Եզր. Բ. գլուխը և Նեկմ. Ե. գլուխը ճիշտ
նման են:

Բ. Մնաց. նոյն երկու համարով կը վեր-
ջանայ որով կը սկսի Եղրասայ գիրքը:

Ճի. Սաղմոսին 8, 15, 21 և 31 համար-
ները ճիշտ կրկնուած են:

«Աղջիկ» (ոչ գուստը) Հին կտակարանին
մէջ միայն երկու անգամ յիշուած է, Յով. Գ.
3: և Զաք. Ղ. 5: Երկարագոյն համարն է Եսթ.
Ղ. 9 և կարճագոյնն Յովհ. Ժ.Ա. 31:

Ինն գրքեր և մէկ սաղմոս յիշուած է ի
Ա. Գիրս, որ այժմ կորսուած են, որք են.

Ուղիղին գիրքը, տես Յես. Ժ. 13, և Բ.
Թագ. Ա. 18:

Աղդով տեսանողին գիրքը, տես Բ. Մնաց.
Թ. 29, և Բ. Մնաց. ԻԲ. 15:

Նաթան մարդարէին գիրքը, տես Բ.
Մնաց. Թ. 29:

Սիլօնացի Ա.քիայի մարդարէսւթիւնը, տես
Բ. Մնաց. Թ. 29:

Սիմայիս մարդարէին գիրքը, տես Բ.
Մնաց. ԺԲ. 15:

Յէսուխն պատմութիւնը, տես Բ. Մնաց.
Ի. 34:

Սողոմոնի Բնագիտութիւնը, տես Գ.
Թագ. Դ. 33:

Ենովքի մարդարէութիւնը, տես Յուղ. 14:


Տէրոջը պատերազմաց գիրքը, տես Թուղ.
ԻԱ. 14:

Նատ տեղեր յիշուած է այն սաղմուը որ
պարտիվք համարիլ ձնԱ.:



Անկանոն գրքերը 14 հառ են, որ կը պա-
րունակեն 183 դլ կամ 15,081 համար:

Ասոնք ներշնչեալ համարուած չեն թէ-
պէտ հին ապագրութեանց մէջ, անջատ դրս-
ուած կը գտնենք երբեմն զին և նոր կտակա-
րանաց մէջտեղը :

Քրիստոսէ Ժէ. դար առաջուան ժա-
մանակներուն վերաբերող արձանագրութիւն-
ներէ հաստատուած է թէ Նեղոս գետը այն
առեն եօթը տարի շարունակ չէ յորդեր եւ
երկրին պտղաբերութիւնն ալ դադրած է այդ-
միջոցին, որուն հետեւանկով երկարատեւ ու
սոսկալի սով մը տիրած է Եգիպտոսի մէջ։
Դիտողներ կան թէ Ծննդոց գիրքին մէջ յիշ-
ուած «եօթ սովի տարիներու» սկիզբն է այդ։
Այս արձանագրութեան գիւտով պատմական
իրողութիւն մը կը գտնեալ Աստուածաշուն-
ցին մէջ յիշուած այդ պատմութիւնը Նեղոս
գետին ցամքելուն եւ ատկէ յառաջ եկած եր-
կարատե սովին նկարագրութիւնը եղած է
կարգ մը մեհենագրոշմերու վրայ, զարս Պրուկ-
պէյ յաջողած է լուծել ու կարդալ։



Գ.ԵՐ. ԶՈՐՃ ԲՅՐԱԲԻՆԸ Ն.Ս.Փ



ԱՅՐ. ՄՐ. ՓԱՐԹԻԶ

ՍԵՐԳԻՈՅ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԲԱՏԱՆԻՔԸ

ԵԿ 13 ԹԻՒՅ

Պետութեան հիմնադիրն Գալակէօրկօվիչ
ծնած է 1804ին $(1+8+0+4=13)$. 1813ին
Թուբը ստիպուեցաւ լքել Սերվիան $(1+8+$
 $1+3=13)$. 1840ին $(1+8+1+3=13)$ Գա-
րանօրմի որդին Աղքասանդր, Սերպ թագաւո-
րին հայրը, Սերվիոյ բանակին հրամանատար
կըլայ. 1903ին $(1+9+0+3=13)$ Բէթը
Սերվիոյ գահն կելէ, 1912ին $(1+9+1+2=$
 $13)$ Բէթը իր երկու որդիներով պատերազմի
կերթայ և կը յաղթէ Թբիլիսի, ուստի կը
հետեւի թէ Սերվիոյ Գալակէօրկօվիչ գեր-
գաստանի յաջորդ նշանաւոր դէպքը 1921ին
 $(1+9+2+1=13)$ պիտի պատահի.

Ե Օ Թ Կ

Արարչստործութեան մէջ եօթը օր կայ,
եօթը օր շաբաթուան մէջ, եօթը բաժանում
Տերունական աղօթքին մէջ: Մարդուն տա-
րիը եօթը շրջան ունի, լուսինը եօթը երե-
րեւոյթ, արդարը օրը եօթը անդամ՝ իյնայ՝
պիտի կանգնի: Հրէական եօթը տարւոյն մէկը

շարալթ էր, եօթն անդամ եօթը Յորելեան կը բերէր, իւրաքանչիւր տօն եօթը օր կը տեւէր Ա. և Բ. տօններու միջացը եօթը շարաթ էր. Դեւտական մաքրութիւնը եօթը օր էր: Ասից մէջ կար եօթը եկեղեցի: Եօթը հոգիներ կան Աստուծոյ գահուն առջեւը, եօթը երեցներ: Գառնուկը ունի եօթը աշքեր. Յովհաննէս տեսաւ եօթը աշտանակ, եօթը ասաղ, եօթը հրեշտակ, եօթը փող, եօթը հարուած, եօթը եղջիւր: Փարաւոն երազեց միշտ եօթը. սով և առատութիւնը տեւեցին եօթը տարի: Եօթն անդամ տասը հոգի Եպիպոս գացին, հոն եօթն անդամ տասը տարի պատուոյ մէջ մնացին, որոյ կըրկինն տարի գառն գերութիւն կրեցին: Եօթն անդամ տասը ծերեր դատեցին Խրայէլը: Ցիսու ըսու եօթն անդամ եօթանասուն պէտք է ներել եղբօրը:

Եօթն էին հրաշալիք աշխարհի — Եգիպտական Բուրգերը, Բաքելոնի առկախ պարտէզները, Արտեմիսի Տաճարը Եփեսոսի մէջ, Լուսնթագի Արձանը յՈղիմպոս, Մոսողոսի Շիրիմը Գարեյ մէջ, Հասդոսի վեթխարի Անդրին, Աղքասանդրիոյ Փարոսը:

Եօթն էին Յոյն իմաստունք — Թաղէս Ա-

թինացի, որոյ նշանաբանն էր «Ծանիր զքեզ» Սողն Սպարթացի — «Վախճանը մտածէ». Եիլո Մելիտէցի — «Երաշխաւորութիւնը առողը ապահով կըլլայ», Պիսո Փրիենցի — «Մարդոց շատը չար են». Կղէոպողոս Լինտոսցի — «Ուկեղէն միջինը», կամ «Փախիր ծայրահեղութենէ». Փիտագոս Միտիլէնցի — «Փամանակը բռնէ ճակատին վարսէն». Փէրիանտէր Կորնթացի — «Ոչինչ անկարելի է աշխատողին»:

Եօթն էին Գործք բարի — Հիւանդը Խընամել, Անօթին կերակրել, Ծարաւեին խըմցընել, Մերկը հագուեցնել, Տնանկը պատրսպարել, Որբին, այրւոյն այցելել, Մեռեալը թաղել:

Եօթն էին մեղք մահացու — Հպարտութիւն, Բարկութիւն, Նախանձ, Ցանկութիւն. Որկամոլութիւն, Ադահութիւն, Ծուլութիւն:

Եօթն են առաքինութիւնք — Հաւատք, Ցյոս, Աէր, Խոհեմութիւն, Արդարութիւն, Քաջութիւն, Ժուժկալութիւն: Առաջին երեքը կը կոչուին նաեւ Արբազան առաքինութիւնք:

Ցովսէկի Հայկազն

Զուրբ ջուր եղած ատեն 100⁰ չերմու-
թեամբ եռալ կը սկսի:

Աղով լի (աղի) եղած ատեն 109⁰ չերմու-
թեամբ եռալ կը սկսի:

Զուրը մետաղէ ամանի մէջ 100⁰ չերմու-
թեամբ եռալ կը սկսի:

Զուրը ապակեայ ամանի մէջ 101⁰ չեր-
մութեամբ եռալ կը սկսի:

Զուրը ծովու վրայ 100⁰ չերմութեամբ
եռալ կը սկսի:

Զուրը բարձր լերան վրայ 84⁰ չերմու-
թեամբ եռալ կը սկսի:

Պատճառը՝ ծովու վրայ օդի ճնշման շատ,
և լերան վրայ օդի ճնշման քիչ ըլլալն է:

ԹՈՉՆՈՑ ԱԽՈՐԺԱԿԵ

Թոչնոց ախորժակը եթէ մարդու ախոր-
ժակին հետ համեմատենք՝ զմարդ շատ ետ կը
գտնենք: Սարեակն (^{սինչու}) մէկ անդամէն
կրնայ մեծ խղունչ մը կլլել: Այս համեմա-
տութեամբ մարդ մը պէտք էր մէկ անդամէն
եղան մէկ աղդրն լափել: Կարմիրկատարն
(^{սուսու}) ալ արտաքոյ կարգի շատակեր է: Հաշ-
ուած են՝ որ կարմիրկատար մը մէկ օրուան

մէջ կրնայ պյնչափ ուտել՝ որ կերածն 14 սոտք
երկայն երկամալրի հաւասարի: Մարդն այս
համեմատութեամբ պէտք էր մէկ օրուան մէջ
27 սոտք երկայն խոզի երշիկ ուտել: Ասկէ կըր-
նայ չափուիլ որ Ճռչնիկներն մէկ օր-
ուան մէջ քանի մը հազար որդ և Ճճի կը մաք-
րեն մեր պտղատու ծառերու վրայէն:

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Նորահնար մեքենաներու միջնաւ այժմ
1,500 ուղար ըեռ կամ 200,000 քաշ
ծանրութիւնը տղայ մը իսկ կրնայ վերցնել:

Ամերիկայի Ուաշինգթուն քաղաքի ա-
ռողջապահական քննիչը, էն շատ ծանճ ըս-
պաննողին 50 սուկի խոստացաւ. Լէյթոն ա-
նուն մանչ մը 82,000 սպաննելով մրցանակն
ընդունեց:

Թամբիոյի մէջ 800 հանրային բաղնիք
կայ, որով առաջինն է աշխարհի մէջ, 2.ը
Պոլիս, 3.ը Բելթըրոպուրկ:

ՍԵՅԼՈՒՑԻ մէջ Վ.Հ.տա կոչուած ցեղ մը կայ, որ բնաւ չեն ինդար անոր պատկանողները, քանզի — կըսեն թէ աշխարհի մէջ ծիծաղի արժան բան չկայ: Յաւոց ձոր է աշխարհ անոնց համար:

ՆԱԱԿԵՐԷՆ սմանք մեծցնելու համար մէջտեղէն կը կարեն և երկու կտորներուն մէջ նոր կտոր մը կ'աւելցնեն:

ԳԵՐԱՄԱՆԻՈյ մէջ կինը ծեծող ամուսինները Շաբաթ երեկոյ և կիրակի օր կը բանտարկեն, միւս օրերը կը թողուն որ գործի երթան:

Վ.Ի.ԲԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ կը հաստատէ թէ ամուսնացելոց միայն 18 ոճրագործ կ'ըլլայ, մինչ ամուսիններուն 38: Կարեւոր պատճառէ այս ամուսնանալու:

Մարդս իբր 30,000 մազ ունի գլխուն վրայ, կնոջ մէկ հատիկ մազը 78 կրամ ծանրութեւն կը նայ տանիլ, հետեւապէս բոլոր մազերն ի միասին հինգ թօնուէ աւելի:

Ա.ՊՉԼԱԲՆ մազը մանչերուն մազերէն երկու անգամ աւելի կարճ միջոցի մէջ կաճին:

Միացեալ նահանգաց մէջ տարին 126 միլեառ 600 միջին նամակ, թէրթ և պյան կը դրկուի: Խւրաբանչեւր անհատ տարին 161 նամակ կամ թէրթ կը ստանայ: Գերմանիոյ մէջ 145, Զուլցերիոյ մէջ 124, Անգլիա 117, Ֆրանսա 78, Իտալիա 44, Մէքսիկօ 13, Ուուսիա 12, Թուլլիա մէկ և $\frac{1}{10}$:

Ա.ԵԳՂԻՈՅ ձօրց թագաւորը Հնդկաստանի մէջ թագադրութեան հանդէսին առթիւ կը ուղացաւ. իր ծանրութեամբ 40,000 Անգլոսկի բաժնուեցաւ ժողովրդեան:

Ա.ՊԱԳԱՅԻՆ զրահաւորները պիտի ունենան մէջմէկ պալօն, որ վեր բարձրանալով անթել հեռագրով խուզարկութեանց արդիւնքը հաղորդեն:

Ա.ԱՏՈՒԱԺԱԿՈՒՆԻՅԻ ընկերութեան հարիւրամեակին, 1904ին Սուրբ մատենի գրոց թարգմանութիւնը 358 էր, 1912ին 560ի հասած է սոյն թարգմանութեանց թիւը: Մարդ-

կային համօքէն դրականութեան մէջ
Սուրբ Գիրք եզական վեհ գիրք մը կը բռնէ:
Ոչ մի գիրք այնքան լեզուներու թարգման-
ուած է: Ոչ մի գիրք այս աստիճան տարած-
ուած է, ինչպէս Սուրբ Գիրք:

Ամերիկա մտնելու համար փասփօրթ
պէտք չէ, միայն 35 տալէու պէտք է գտնուի
դրազնդ և ծանր ոճիրի համար պատժուած
ըլլալու չէք: Անձնական գործածութեան յա-
տուկ գոյքերն ալ մնաքէ զերծ են: Նաև ախ-
տազերծ աչք — պայման է կարեւոր:

Մարդուս հասակը կը կարծնայ 50րդ
տարիէն. 90ին 3³/₄ սանթիմէթը կարցած է:

Երկրազնիսիս վրայ բոպէն 67 մահ և 70
ծնուդ կը պատահի:

Մանկանց իւրաքեան մեծադոյն մասը
ապահներէ յառաջ կուգայ:

**Աջ ձեռքը աւելի զգայուն է, քան ձա-
խը, մանաւանդ ցուրտի և պազի համար:**

Մասներուն եղունգներն տարին 4 սան-
թիմէթը կ'աճին, աւելի ամառը կ'աճին քան
ձմեռը. միայն թէ մարմնոյ սննդառութիւնը
կանոնաւոր և առողջական վիճակը լաւ պէտք
է ըլլայ:

Ամուրիներուն կեանքը կարծ կ'ըլլայ,
ամուսնացեալներունը երկար:

Վզիվեացիի այսօր արհեստական ջեր-
մութեամբ հաւկիթէն ձագ հանել դիտեն.
30—60,000 հաւկիթ թիսելու համար, աշ-
խուէ շնուրած ահազին փուռեր կը շինեն:
100ին 65—70 հաւկիթ կը յաջողի: 1911ին
124,000 սոկիի 84 միլիոն հաւկիթ արտա-
ծած են:

Ճովանոցը 1712 Օգոստոս 12ին ձօն
Հանուէր Անգղիսցին հնարած է, Պալէնայի
ակրաներով շնուրած և վրան մամլաթ անց-
ուած էր, ծանրութիւնն ալ իբր 4 քաշ էր:

Մեղուն 40—80 ծաղիկէ կաթիլ մը
մեղր կը հաւաքէ 200—400 ծաղիկէն 5 կա-
թիլ. ուստի մէկ մեղուն քիչո մը մեղր շինելու

Համար քանի մը տարի կարօտ է. տաք օր մը 20,000 մեղու 100,000 ծաղիկներէ մեղը կը քամեն:

Զարլս Ցիխորն վայրաշարժը 22 տարի շարունակ գործելով 3,380,000 քիլոմէթրօ ճամփորդած է. ամէն օր Լոնդոնիցն Մանչէսթր բանելով 28,000 թօնօ ածուխ և 207,000 թօնօ ջուր շոգիի վերածած է:

Տարօրինակ Աներիկացին. — Ութափ մէջ ա՞ն որ շաբաթը մէկ անգամ բաղնիք չերթար ծանր տուգանք կը վճարէ: — Թէքուասի մէջ հեռաւայնի միջոցով հայհայողը կը պատժուի, — նաև հոն գինեմոններն 5 տոլար տուբք կը վճարէն: — Նիւֆօրթի մէջ օթօմնապել վարողները 10,000 տոլար երաշխաւորութիւն պէտք է տան իրենց զոհ գացողներուն ի նպաստ:

Անվարիխս վրայ այժմ 2750 տարբեր լեզուներ կան:

Եւրոպական Ռուսից մէջ կայ 69,712 քիլոմէթր երկաթուղի, Գերմանիա 58,070,

Գաղղիա 39,980, Աւստրիա 22,638, Հունակարիա 20,125, Իտալիա 13,160:

Զիբակոյի մէկ դատաւորը անկարողը ըլլալով արգիլել որ սուտ գեղերու արտօնութիւն չտրուին մաղ բուսցնելու, նոր գեղի մը փորձը նախ ընել տոււաւ իր մէկ պաշտօնեային վրայ, որոյ գլուխ կնտակ — տաղ — էր:

Անգլիոյ մէջ զրպարտել, անուանաբեկել գրեթէ անհնար է, քանզի այնպիսի ծանր տուգանք կը վճարէ զրպարտել որ իր կործանման պատճառ կ'ըլլայ:

Քալիֆօրնիայի մէջ ծառ մը կայ 90 մէթրօ բարձր, 27 մէթրօ շրջապատով:

Բանամայի ջրանցքին բացումնվը Եւրոպայէ Սան Ֆրանչիսկօի ճամբան 6,200 մղոն կը կարձնայ, Անգլիոյ և Նոր Ջելանտայի ճամբան 1,600 մղոն, Նիւ Եօրփի և Աւստրալիոյ ճամբան 2,400 մղոն:

Եղունգներուն արագ աճումը նշան է քաջառողջութեան:

Համար քանի մը տարի կարօտ է. տաք օր մը 20,000 մեղու 100,000 ծաղիկներէ մեղը կը քամեն:

Զարլս Ցիխորն վայրաշարժը 22 տարի շարունակ գործելով 3,380,000 քիլոմետրո ճամփորդած է. ամէն օր Լոնտրայէն Մանչէսթր բանելով 28,000 թօնո ածուխ և 207,000 թօնո ջուր շոգիի վերածած է:

Տարօրինակ Աներիկացին. — Ութափ մէջ ա՞ն որ շարաթը մէկ անգամ բաղնիք չերթար ծանր տուգանք կը վճարէ: — Թէքուասի մէջ հեռաւձայնի միջցով հայհոյողը կը պատժուի, — նաև հոն գինեմոներն 5 տոլար տուրք կը վճարեն: — Նիւֆորթի մէջ օթօմնապել վարողները 10,000 տոլար երաշխաւորութիւն պէտք է տան իրենց զ՞հ գացողներուն ի նպաստ:

Ա. Ժիարեիս վրայ այժմ 2750 տարբեր լեզուներ կան:

Եւրոպական Ռուսից մէջ կայ 69,712 քիլոմետր երկաթուղի, Գերմանիա 58,070,

Գաղղիա 39,980, Աւստրիա 22,638, Հունակարիա 20,125, Իտալիա 13,160:

Զիբակոյի մէկ դատաւորը անկարող ըլլալով արգիլէլ որ սուտ գեղերու արտօնութիւն չտրուին մազ բուցնելու, նոր գեղի մը փորձը նախ ընել տուաւ իր մէկ պաշտօնեային վրայ, որոյ գլուխ կնտակ — տաղ — էր:

Անգղիոյ մէջ զրպարտել, անուանաբեկ գրեթէ անհնար է, քանզի այնպիսի ծանր տուգանք կը վճարէ զրպարտիչը որ իր կործանման պատճառ կ'ըլլայ:

Քալիքօրնիայի մէջ ծառ մը կայ 90 մէթրո բարձր, 27 մէթրո շրջապատով:

Շանհամայի ջրանցքին բացումնվը Եւրոպայէ Սան Ֆրանչիսկօի ճամբան 6,200 մղոն կը կարծնայ, Անգղիոյ և Նոր Զելանտայի ճամբան 1,600 մղոն, Նիւ Խօրքի և Աւստրալիայ ճամբան 2,400 մղոն:

Եղունգներուն արագ տճումը նշան է քաջառողջութեան:

**Մարզոց կենաց միջին տեւողութիւնը
ներկայիս 40 տարի է:**

**Սիւամի մէջ 166,293 վանական և մայ-
րապետ կայ:**

**Նիւժառունուինսի մէջ օձ, գորտ և
կրիսյ դեռ չէ տեսնուած:**

**Այժմ Զինու մէջ փոխանակ գլխատելու
քրորդորմանվ անզգայ կ'ընեն ոճրագործը և
ապա այս վիճակին մէջ գնտակահար կ'ընեն:**

**Տերպիլինսի — Անդզիս — մէջ 1912ին
հորթ մը ծնաւ որ ունէր 2 գլուխ, 2 քիթ, 4
աչք և 2 ականջ:**

**Արարիսյ մէջ բայս մը կայ որ երբ չորց-
ներվ քիչ մը կուշ տան, տաեն մը կը խըն-
դացնէ, ցատկել և խաղալ կուտայ, յետոյ
քուն կը բերէ զայն առնողին վրայ:**

**Զմբան ցուրտ եղանակին էն սննդարար
օրական ուտելիքն է չամիչը, որ 80% սնուցիչ
նիւթ կը պարունակէ. պէտք չէ սակայն չա-**

**փաղանց ուտել: Ու եւ է կերպով եփած կամ
հում կընայ ուտուուիլ:**

**Ա. Գիրքը 450 լեզուի և գաւառաբառ-
քառի թարգմանուած՝ 7,899,562 օրինակ
տպուած է:**

**Նանիքի մէջ — Գաղիս — յիմնարանցը
կը գտնուի պատուապտրեալ մը որ թէւ կարդալ
և գրել չգիտէր սակայն սքանչելի հաշուագէտ
է. հարցուեցաւ թէ 1000 միինն երկվայրկեան
ապրող մէկ մը քանի՞ տարեկան կ'ըլլայ, ճշտիւ
պատասխանեց 48 երկվայրկեան խորհելէ ետև,
Միայն 28 երկվայրկեանի պէտք եղաւ պատաս-
խանելու թէ քանի՞ երկվայրկեան կայ 39 տար-
ուածն, 3 ամսուածն և 12 ժամուածն մէջ: Եւ
ուրիշ ասոր նման հարցումներ:**

**Ավերիկեցիները երբէք չեն փանդտար
մինչեւ իսկ անոնց սերունդը եթէ Ավրիկէէ
դուրս աեղեր գաղթած են: Շատ տարօրինակ
իրողութիւն մ'է ոյս:**

**Պէրլինի Ունդըր տէն Լինտըն կոչուած փո-
ղոցը 65 մէթը լայն է, Վիէննայի Բինկ սթրասէ**

Փողոցը 57, Փարիզի կրան պուլվարը 37 և
Պուտարէշթի Անտրաշի փողոցը 47:

ԿՐԵՒՐԸ միջատներէն վնասուելէ ազատ
պահելու համար տարին մէկ անգամ 3 մաս
պաղեղի և 1 մաս ճերմակ պաղեղի փոշիի
խառնուրդ մը ցանէ թերթերուն մէջ:

ՀԱՌՎԱՐՄԱԿԱՆ ՔԱՅԹԱՔՍԱԿԱՆ — գե-
րեզմաններն — 930 քիլոմէթր երկայն են և 15
միլիօն մարդիկ հոն իրենց վերջին քունը կը
քնանան:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԷՈԹԵՐ

Աշխարհիս մէջ ամենամեծ սրբնթաց շո-
ւենաւն է անգլիական համանուն «Սուրբթ»
թորփիլահալածը, «Թրըպին» աւոր (նորագիւտ
մէքենական ձեւ մը) մարտանաւը Ունի 1,800
թոնո տարողութիւն և ժամը 37½ հանդոյց =
43 մղոն արագութիւն Արագութեան մասին
ծոտ գաղափար մը տալու համար կ. Պոլսէն
մինչեւ Դարդանէլ 3½ ժամէն, մինչեւ Խմիր
6¾ ժամէն, մինչեւ Գէօսթէնէն 4½ ժամէն
և Տրապիկը 12½ ժամէն կը հասնի: Իսկ

ամէնէն սրբնթաց երկաթուղիի գիծն է առա-
ջն՝ Մ. Նահանգաց «Միջուկըն Աէնթրալ» ըն-
կերութեան Նիակարա-Ֆոլս-Ուինստոր գիծը,
որ ժամ 7½ մղոն = 114.24 քիլոմետր արագու-
թեամբ կը սուրսց: Այս երկու քաղաքներուն
իրարմէ հեռաւորութիւնն է 225 մղոն, որ երեք
ժամէն կը կարէ: Երկրորդն է Եւրոպից մէջ
անգլ. «Կրէյդ Ուէսթըրն» ընդ մէջ Լոնստոնի և
Բլիմութի գիծը, որ ժամը 63½ մղոն = 101.17
քիլոմետր արագութեամբ կը սուրսց: Այս եր-
կու քաղաքներուն իրարմէ հեռաւորութիւնն
է 240 մղոն, որ 4 ժամէն կը կարէ: Ասոնցմէ-
տեկի արագ երկաթուղիի գիծեր կան բայց
կարծ հեռաւորութեան մը վրայ շինուած են,
զոր օրինակ Մ. Նահանգաց Ֆլիմինկէն—Ճաք-
սլինվիլ գիծը ժամը 120 մղոն = 193 քիլոմետր
արագութեամբ կը սուրսց և միայն 5 մղոն եր-
կայնութիւն ունի, 2½ վայրկեանէն կը հասնի,
կամ Հայտար Փաշոյէն մինչեւ Նիկոմիդիա 40
վայրկեանէն:


Մ. Ուենայտեկան

ԴՐԱԿՈՐ մասնագէտ մը, թուանշաններ
ու յայտնի իրաղութիւններ ցոյց տալով, կը
հաստատէր թէ Ֆրանսայի ժողովուրդը՝ ֆի-
զիքապէս և նիւթապէս անհաշուելի ահագին


Պատասի մը ենթարկուած է՝ այն օրէն ի վեր,
երբ ճերմակ հացին (պիրա, փրանձէլա) յարգ
տալով, դադրած է սովորական պարզ հացը
ուտելէ:

Ավելուրին մէջ սնունդ եղողը, կեանք տուու-
զը միայն բնոստղն է, թեփերը հանուած ճեր-
մակ ալիւրին մէջ բնոստղ չկոյ, այդ ալիւրը
երբեք սնունդ չի պարունակեր, ուստի այդ
ալիւրով շինուած հացը ուտողը չի սնանիր, և
այդ հացին համար առուած դրամը պարզապէս
կորուստ մըն է, կ'ըսէր յօդուածագիրը ու
կ'եղրակացնէր թէ Ֆրանսոսի ժողովուրդը թէ
սնունդի կողմէ և թէ դրամի տեսակէտով
չափազանց մեծ վնաս մը ըրած է ու կը շարու-
նակէ լնել ճերմակ հաց ուտելով:

Հետեւեալ ցուցակէն կ'երեւի որ վեց
մեծ պետութիւնք ի պատերազմի նաւային դին-
որներն ալ հաշուելով քսան միլիոն քաջա-
վարժ զինւոր կրնան իրարու դէմ կռիւի մնել
ծովէն, ցամաքէն և օդին բարձրերէն. բիւրաւոր
թնթանօթներն ալ գոռալով, հուր կը ժայթ-
քեցնեն և մի քսանի միլիոն մարդիկ գետին կը
փռէն մեռ եալ կամ վերաւոր:



Պ.Ա. Ա. ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆ



ՊԱՏ. ՅՈՎ.ՄԻՔ ՀԱՅԿԱՆ
Քարոզիչ-Ռևուզիջ Աւես. Հայոց (Պիլէնիկ)

ԵԿՐԱՊԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՍԵՐԱՎԱԾԸ

ԵՐԿԻՐ	ԲԵԱԿՀԱՆՔԻՒՅ	ԶՈՒՄԱԿ Ի ԽԱՂԱԳ.	ԶՈՒՄՈՒՐ Ի ԱՎԱԽՐԱԳ	ԶՐԱԲԱԼՈՐ
ՌԵՆԴԻՄ	166 000,000	1,290,000	5,500,000	430
ԳԱՐԻՄԱՆԻԱ	65,000,000	870 000	5,200,000	150
ՄԵԾՆ ԲՐԺՈՏԱՆԻԻԱ	45,000,000	254,000	730,000	570
ԱՀԱՄՊՐՈ ՀԱՆԿԱՐԻԻԱ	57 000,000	390 000	2,000,000	190
ՖՂԱԽԱԱ	39,000,000	720,000	4,000,000	450
ԻՄԱԼԻԱ	35,000,000	250,000	1,200,000	270
	407,000,000	3,774,000	18,630,000	2060
ՀԱՄԱԳՈՆԸՆՈՐ				

ԿՐԹ ԱԿԱՆ

—————

ԱՌՏԵՆԻՆ ՏԵՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱԱԾ
ՄԵՐ ԱՊ.ԶԿԱՆՑ Վ.ԱՐԺԱՐԱՆԱՅ ՄԷՋ

Երկու սեռերուն համար ալ՝ տնտեսագիտական սւսմանց գործնական անհրաժեշտութիւնը բացայաց է արդեն։ Խոկ մասնաւորապէս մեր իգական սեռին համար, այդ անհրաժեշտութիւնն՝ տւելի քան անմիջական է։ Զի՞նախ որ՝ գաւառացի իգական սեռը մանաւունդ, գրեթէ չորս պատի մէջ փակուած, իսպառ զուրկ է շփումէ՝ տնտեսական-սուեւրական աշխարհին հետ, ըս գեթ տարինան մը կը թրծէ արական սեռը՝ գործնական — գործառական տնտեսագիտութեան տարրական սկզբունքներով։ Իգական սեռը զուրկ է տառնցմէ ալ։ Ներքին գաւառներու մէջ, ուր կը գտնուի արդեն հօծ հայութիւնը, կիներու շուկայ եղենլը՝ գնումներ ընելու, քրէական օճիր մը պիտի նկատուէր, ինչ որ կը տեսնուի ծովեզերեայ մտսերու մէջ

տւելի։ Կինը՝ հօն՝ իսպառ կղղիացած է առեւտրական-գրամական աշխարհէն։ Եւ նոյն ատեն, կինը կը գտնուի այնպիսի գերի մը մէջ, ուր նոյնքան պէտք ունի տնտեսագիտական գիտակցութեան, որքան՝ այրը։ Զի՞ այրն է վաստակողը՝ իբրև աշխատաւոր և կինն է սպառողը՝ իբրև տանտիկին։ Աչա՛թէ ինչո՞ւ համար տւելի քան անմիջական է տնտեսագիտական ծանօթութեանց պէսիլը՝ տնտեսական աշխարհէն կղղիացած և միեւնոյն տեն, առանին անտեսութեան պարտականութիւնը՝ որքան անխուսափելիօրէն, նոյնքան անգիտակցօրէն իրենց ուսերուն առած՝ մեր կիներուն համար։

Այս կենսական պէտքին անյետաձգելի գոհացումին ի նպաստ, ո՞չ մէկ մէթոսիկ շարժաւմ կայ մեր օրուան գրականութեան մէջ։ Հազուագեպ օվասիս մը դարձած է «Հանրագիտական Օրացոյցը», որ այլ ևս ամէն հայընտանեյարկի անբաժանելի մտերիմը նկատուելու վրայ է, որքան իր բազմապիսի և գործնական ծանօթութեանց խտացումով, նոյնքան իր «Ընտանեկան» բաժինով, որ տւելի ճոխանալու արժանի է։

Այս տարեկան օվասիսէն գուրս, գրեթէ

ո՞չ մէկ կանոնուոր բաժին՝ մեր օրաթերթերուն և պարբերականներուն մէջ, ուր անտեսադիտութիւնը ժաղովրդականացնելու որոշ ճիգեր նշանաւելին ԱՇ մէկ բաժին, նոյնպէս մեր լսարաններուն մէջ, ուր տեղ արուելք՝ մեր իգական սեռի օրուան կեանքին իսկ հետ արա առնչութիւն ունեցող այսպիսի ծանօթութեանց և առաջքն առնուելք անաքանդ տուժումներու և կործանաւմներու։ Այս օրուան համար, իրերն այսպէս Կ'ընթանան, ի վեաս հանրութեան։

Կը թեայ գպրոցը, որմէ ոլիտի սպասէինք հիմնականը, ի նոպաստ գէթ վազուան իգական սերունդին ԵՇ, տե՛ս, որ այս հիմնականն ալ շատ խախուտ է, որուն չի վատահուիր վազուան որ և է կառուցում։ Տնտեսագիտութիւնը մինչդեռ իսպա՛ռ կը բացակայի մեր արտկան նախակըթարաններէն, ուր միջին կարգերէն իսկ կարելի ե հարկ էր սկսիլ, մասաչելի աստիճանաւորումներով, ասդին Առանդին տնտեսագիտութեան դասն ալ բոլորովին անուեանական է՝ մեր ազգկանց վարժարանաց մէջ, զուրկ առարկայական մէթոտէ և պարզապէս թութակօրէն աւանդող։ Առ այժմ այսպան։

Քηի

Լեւոն Մրապեան

ՏՈՒԵՆԸ ԱԻ ԴՊՐՈՑԸ

Հուլած ու գրաւած է, և այսօր ամէն ոք իբր բացարձակ ճշմարտութիւն կ'ընդունի թէ մանկան՝ տանը մէջի կեանքն է տւելի նկատառելի և ուղղելի քան դպրոցականը, սրովհետեւ տղան իր լեզուի ու բարքի տուազին վանկերը տանը մէջն է ոք կը սովորի և ոչ դպրոցին։ Կ'արթէ ուրեմն, այդ խիստ կենսական սու փափուկ հարցին վրայ գրել, գրել միշտ, մինչեւ որ սերունդը սկսի իր սիսալը ճանչնալ և զայն գարմանել։

Հայր չունենալը կը նշանակէ մէկը՝ որ զրկուած է զինքը պահող և զգուշացնող ոյժէ մը. և այսօր աշխարհի վրայ միլիոններով են հայր չունեցողները, որոնք արդիւնք են մարդկային ցանկութեան յագուրդին, և որոնք կյալով անարգ ճակատագրի մը ձեռքը այսօր մարդկութեան ստորնագոյն խաւը կը կազմին։

Հայր չունի նաև այն զաւակը, որի ծնողքը զուրկ են զաւակ դաստիարակելու գիտակցութենէն և ընդունակութենէն. այս՝

այդ թշուառն ալ եթէ չերթայ աւելնալու
պյան ստորնագոյն խութին վրայ, անսոնցմէ մեծ
տարբերութիւն մըն ալ չպիտի ունենայ ա-
պահովար.

Ես զիտեմ և ամէն օր կը տեսնեմ մար-
դիկ: որոնք իրենց փաքրիկներու հայհոյանքին
վրայ կ'ուրախանան, և կը թելադրեն տղուն
որ, իրենց այդ հաճուքը (?) քիչ մըն ալ երկա-
րելու համար, մի քանի անգամ ալ հայհոյէ:
Ես աեսած եմ և գիտեմ մարդիկ, որոնք իրենց
փաքրերու սոււտին հանդէպ կ'ուրախանան
ա՛յնչափ՝ որչափ սոնց ծնունդին. — մարդու
ծնունդ՝ սոււտի ծնունդ . . . :

Մարմնոյ ծնունդը անմիջապէս, իր հետ
անքաժանելիօրէն կը բերէ նաև հոգւոյ
ծնունդը, և տղու մը առաջին անգամուան
լացը պէտք է ծնողքին յուշարարը ըլլայ թէ
նա արդէն հոգի մը և ապագայ մը ունի և ոչ
թէ լոկ միս և սոկոր: Ուրեմն մանկան ծնընդ-
եան հետ անմիջապէս պէտք է զուգընթաց
մշտկել անոր մարմինն ու հոգին.

Թժիւկները մանկան օրոցքին վրայ վայ-

րահակ մօրը կը թելադրեն որոշեալ ժամա-
նակ միայն կար տալ և ոչ թէ երբ տղան կու-
լայ. և քանի որ իմ նիւթէն գուրս է ասոր
օգուտն ու վնասը պատկերացնել, ես այդ
պատուերը իբր մէկը կը նկատեմ այն ճանա-
պարհներէն ու միջոցներէն, որոնք ազու հո-
գին կրթելու կոչումն ունին: Թէ ի՞նչպէս

Տղան որոշ ժամանակ երբ կը սովորի քաղց
զգալ, այդ կը դառնայ կանոն, ու այդ կա-
նոնը իր ետեւէն կը բերէ կանոնաւորութիւն,
և փոքրութենէն կանոնաւորութեան վար-
ժուած մէկը կանոնապահ, հետեւաբար և
օրինապահ, ուրեմն և իր վայրագ կիւթերը
լուեցնելու, համբերելու ընդունակ մարդ կը
դառնայ. ասոնքյաջորդարար և իրարու ետե-
ւէն երթացող իրականութիւններ են:

Սահիսուրին ու ճշդախօսութիւնը
առնը — ծնողաց — նուերներն են տղուն.
դպրոցը մէծ գեր մը չունի հոսու:

Փոքրիկին բնաւորութիւնն է ուղել միշտ
և գիտնալ նիւթին ինչին, ինչպէս և ին-
չուն: Արդ, երբ տղան կ'ուղէ, անշուշտ որ

նա աւելի քան համարձակ է իր ծնողքին հետ,
ուրեմն անոնցմէ կ'ուզէ շատ անդամներ, և
հայրն ու մոյրը պէտք է գիտնան տղուն այս
և ոչ ըսելը և իրենց ըստծը չփոխել ու և է
գնով:

Ո՞վ բաւ որ ուսուցին պատուերը աւելի
շատ կ'ազգէ տղուն վրայ քան հօրը, և հետե-
ւաբար դպրոցին՝ քան տան, տղան եթէ կ'են-
թարկուի ուսուցչին, պատճառը սա է որ նա
կը հաւասար ու գիտէ թէ իր հայրը կը յար-
գէ իր վարժապետը, այլապէս նա ստահակ մը
կը դառնայ:

Ուսուցիչը կը պատուիրէ տղուն չհայհո-
յել, չծիսել, չխմել, խօսելով ասունց վասնե-
րուն վրայ, ու աղան երբ տուն կ'երթայ, կը
լսէ իր հօրը, մօրը, և այլն հայհոյութիւնները,
ուսուցչին խօսքերը անմիջապէս օգը կը ցըն-
դին, հայրը տալով իր սիկարը տղուն, և Քե՛զ
մատաղ, կացուր սիկարս երբ կ'ըսէ, նա ար-
դէն լսւ ծխող մը դարձաւ, և այդպէս դեռ
շատ օրինակներ ու գործեր: Ի՞նչ եղաւ ար-
դիւնքը՝ դպրոցը՝ դրական և տունը՝ ժխտա-
կան, մինչդեռ այդ երկուքը իրարու լրացու-
ցիւներ պէտք էին ըլլալ, և քանի որ մենք դի-

տենք թէ Ամարդիկ ի մտնկութենէ հաստատ-
եալ կան ի խնամն չարին, ապա ուրեմն, չարը
պիափի յաղթանակէ, ժխտականը պիափի յա-
ռաջանայ, և ահա լաւ անձ մ'ունենալու
տեղ, ծխող, արբեցող, հայհոյուղ դպրոցա-
կան մը կ'ունենանք:

Ես չեմ մեղադեր երբէք դպրոցը տղուն
այս կամայն յոռի վարմունքին համար, որի
միակ պատախանատուն ՏՈՒՆՆ է եւ ոչ
դպրոցը, և քանի որ տունը չէ դաստիարակ-
ուած ու կը մնայ իր ներկայ ինկած վիճակին
մէջ, դպրոցը ապահովար մեծ դեր չկրնար
կատարել:

Լաւ կրթուած զաւակ ունենալ ցանկա-
ցողը իր տղան դպրոց գնելէ առաջ իր տունը
դպրոց կը դարձնէ, ստեղծելով հոն կանոնա-
նապահութիւն, բացարձակութիւն, հաւատի,
որոնցմավ միայն կարելի է բաղձացուած ար-
դիւնքին հասնիլ:

Քղի-թէմբան ՍԻՍԱԿ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ՄԵՐ ԵՐԱԽԱՆԵՐԸ

ՏՕԳ. Մ. Ս. ԳԱՅՐԻԷԼԵԱՆ

1. Մանուկներուն հարիւրին յիսունը հինգ
տարեկան չեղած կը մեռնին, ուստի

2. Մաքուր պաշէ երախան, թրջոծ շրբ
փոխէ, օրն անգամ՝ մը տաքուկ ջրով լոդցուր,
աստիճանաբար ջուրին ջերմութիւնը նուա-
զեցնելով պրան մեծնայ երախան, սենեակ և
ամէն բան մաքուր և փոշիէ զերծ:

3. Որչափ կարելի է քիչ դպչէ երախային
և փափիօրէն դպչէն. նորածինը շատ փափուկ
է, թող պառկի միշտ, ուրիշ գիրքի մէջ
բռնել, վեր առնել, վար դնել պէտք չէ,
որանին մէջ նա առելի հանգիստ է քան քու
բազկացդ մէջ:

4. Առաջին քանի մը ամիսներուն մէջ ե-
րախային հետը շատ խօսելու հարկ չկայ, ա-
ռով ուղեղը կը գրգռի:

5. Առաջ երախան չի ճշեր երբեք բայց
եթէ երբ ծարաւէ, անօթութենէ նեղուի:

6. Երախան իիթ ու ցաւ չունենար եթէ
կերածը լու մարսէ:

7. Լու ոնանող երախան չի հիւանդա-
նար, բայց միայն տարափոխիկ հիւանդու-
թիւններով:

8. Երախան լաթ երով, կապերով, զգեստ-
ներով մի ծանրաբեռներ, պորալ իջնալէն
շարաթ մը վերջն ալ պորտին վրայ կապ պա-
հելու պէտք չկայ:

9. Ցուրտ եղանակին կակուղ լրդեղէն,
շոպիկ մը և պարեգօտ: Տաք եղանակին կտա-
ւեղէն կամ մետաքսեղէն, բայց «Հ գուլպա»,
ոչ կօշիկ, ոչ գուլպակ կամ զլխանոց:

10. Քնացած ատեն թեթեւ ծածկոց մը
կը բաւէ, թանցը ֆանէլաներ, վերմակներ
չսփաղանց կը տափցնեն երախան, կը քրտըն-
ցնեն, կը խառվեն, մարսողութիւնը կը խան-
գարեն ու զինքը պաղառութեան ընդունակ
կ'ընեն:

Այս տասնաբանեան մանաւանդ գեռատի
մայրիկներու ուշագրութեան կը յանձնենք:

ԵՐԵԽԱՅԻՆ ԱՄԵՆԱԼԱԲ ՍՆՈՒՆԴԱ:

1. Առաջին 42 ամիսներուն մէջ մօրը
կաթն է ամենալաւ մնունդը:

2. Եթէ կաթը բաւական տռատ չէ վը-

Հատելու և կարեւորութենէ դադրելու չէ,
օր քան զօր կառատանայ կաթը:

3. Մայրը ինքը կ'օգտուի անձամբ սնուցանելով իր զաւակը, առաջընութիւնը կը վերահստատուի ու փափուկ անդօր կիւներ կը զօրանան և հիւնադ մայրեր կը բժշշկուին, կուժովան կաթ տալով և յետոյ գերազանց տոռովը թիւն մը կը վայելնա:

4. Նիւ Եօրքի մէջ 1912ին 3392 երախաներ մէկ տարեկան չեղած մեռան աղիքի հիւնադութենէ, և ասոնց 10էն 9ը չիշի միջոցով:

5. Նցն քաղաքին մէջ 1912ին մեռանզ բոլոր առաջին տարեին չբոլորած երախաներն 44289 հատ են, որոնց մէկ երրորդը մեռան մէկ ամսուան չեղած, ասոնց մէծ մասը պիտի ապրէին եթէ մայրերնին զիրենք սնուցած ըլլային:

6. Մօրը կաթով սնանող երախաներն հազիւ երբեք աղիքի խանգարում կ'ունենան. մինչ չելով կերակրուողներն հազիւ երբեք զերծ կը մեան այդպիսի խանգարումէ մը մասնաւանդ տաք եղանակին:

7. Մայրատուն երախաներն շատ կը զարգանան, անոնց ականերն ժամանակին կը

բուսնին, միս և սոկոր ուժով կ'ըլլան ու անցապաղ ստքի կ'ելլէն:

8. Մօր կաթով սնուցած երախան թռաքատպի, կազիյա հազի ու ուրիշ ախտի ենթակայ իսկ ըլլայ շատ աւելի շուտ կը բռնժուի մինչ չելով կերակրուածներն սովորաբար կը մեռնին:

9. Ծնելէն 3 ժամ՝ յետոյ երր մայրը ու երախան հանգստացած են առաջին գինցում կրնայ տեղի ունենաւ, գաղջ ջրով մանկան շրթունքն ու մօրը սամնելին պառուզը լուսով, կաթ տալէ առաջ. եթէ աւելի ժամեր սպասուի կրնայ ստինքը կաթով լեցուիլ և պնդանաւ որով երախան դժուարաւ կրնայ պառուզը բռնել:

10. Երախան ծնելէն ետեւ շաբար ջուր տալ գէ շավլորութիւն է, մանկիկը սնունդի կարօս չէ այդ ժամանակ, պէտք է հանգիստ պառկի ու քնանայ: Ուրիշ բան երր մայրը չափէն աւելի յոգնած է. ան տոնեն մէկ կամ երկու անգամ շաբար ջուրի մէջ քանի մը կաթիլ կովու կաթ խառնելու և չելով, ոչ թէ գգալով, տալու է որ ծծէ:

ՄՏՔԻ ԱԽՈՂՆՉՈՒԹԵՌԱՆ

ՃՐԱՋԴԱՆ

1. Միայն միտքով և մարմեռվ առողջ ներն ամսւանանաւու են:

2. Արենակիցներու ամսւանութիւնը արգիլեռու է:

3. Անժուժկալ ծնողաց զաւակներն տըխմար և լուսնոտ ըլլալու տըխմարիր են:

4. Նմանը զնմանը կ'արտադրէ, տկարամիտ, լուսնոտ հայր կամ մայր իրենց նման զաւակ կունենան, փոխանցումի օրէնքով:

5. Միտքի և մարմնի մաքրութեան վարժեցուք զաւակներդ, հասարակաց գաւաթճներէ, անձեռոցներէ և լն. Հեռու թող կենան ինչպէս չար ու վարակիչ հիւանդութիւն ունեցող ընկերներէ կ'զգուշանան:

6. Վարժեցուք զաւակդ կանոնաւոր պահերու միջոցին միայն ուտեհել լաւ եփուած անդարար կերակուրներ:

7. Թող զաւակներդ վարժուին բացօդեայ թարմոգի մէջ ապրիլ և քնանալ օրը ինն ժամ մինչև 12րդ տարին անցնեն:

8. Կրթէ զաւակդ որ կանոնաւոր գործով մը զբաղի, գործ մը որ իրեն, յարմար և սիրելի

է, խոյս տալով չափազանց յոդնութենէ:

9. Ապառնիին թող չապաւինին զաւակներդ, անցեալն ալ թող խոր թաղեն և ապրին միմիայն ներկային մէջ, այն ալ տըխուն, լուրջ և աշխայժ:

10. Հնալանդութեան վարժեցուք զաւակդ. կրթէ զայն օրինակովդ ամէն բարի, առաքինի և օգտակար բաներու մէջ:

* * *

Հանրութիւնը զքեզպիտի չափէ ո'չ թէ այնքան դպրոցի մէջ առած առթիւններէդ, որքան բարոյական հանգամանքներէդ, որոնց մով գլխաւորաբար պատիւ պիտի կրնաս բերել այն կրթական հաստատութեան, որ զքեզը անուց իր կուրծքին վրայ: Ուրեմն, կրթնած մուսութիւններու պաշտրիդ, երբէք յաւակնոտ, դոսոգ ու սնամիտ մի ըլլար. — Հոգ չէ թէ այլք պահէտ ու առմիկ ըլլան, — հեղութեամբ ու անուշութեամբ վարուէ, յարգէ ամէնուն իրաւունքները, ճանչցիր քու պարտականութիւններդ, բարեսէր, լուրջ ու համեստ եղիր բոլոր յարաբերութիւններուդ մէջ, և անոնք պիտի հիւսէն քու ճակատիդ ամենէն մաքուր փառապսակը:


ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆՔԻ ԻՄԱՍՏՆՈՅ

Հանդերձին համեմատ մէկը մի՛ դու-
տէք, Ասոռւած սանկծեց մարդը, իսկ հան-
գերձը գերձակը կը չինեւ: Ո՛չ ոք դատեցէք
իր ընտանեացը համեմատ, կայէն լաւ ընտա-
նիքէ մը սերած էր: Ո՛չ ոք դատեցէք իր
հարստութեան համեմատ, շատերը այն պո-
տիճոն համեստ և խղճահար են որ չեն կը բ-
նար հարստանալ: Ո՛չ ոք դատեցէք իր բնա-
կարանին համեմատ, մուկեր և միջատներ
պալտաներուն մէջ ալ կը դանուին: «Մի
դատէք որ չդատուիք»:

Միօտ ուրախ, զուարթ. էն գեղեցիկ
դէմք, ժանտ և կրքոտ դէմքով կ'աւրուի.
Քաղցր խօսք մեզի ծախք չպատճառեր, և
շատ թանկագին է:

Օսարականին վրայ մի խնդաք, մի
ծագրէք, հետը մ'իշխաք, որ մը դուն եւս



Ա.Ե.Ր. Գ. Ե ԳԸՐԳԵԱՏԱՐԵԱՆ
Հովիտ Աւետ. Հայոց (Կարին)



Ա. Ա. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Հովհան Աւետ Հայոց (Բերրի)

օտարութեան մէջ կ'ըլլաս, և նոյն փոքձա-
ռութեան կ'ենթարկուիու:

Մանչ մը կրթելը անհատ մը կրթել է,
իսկ աղջիկ մը կրթելը տան մը սերունդը կըր-
թել է:

Ծնողներ թող իմաստուն ընտրութիւն
ընեն դպրոցներու մասին, գիտնալով որ իր
պաշտօնին անդիտակից ձեռքերու մէջ շուտ
կը մեռնին իրենց նորաբաց ծաղիկները:

Կրօնը վանելով բարոյականութիւնով
դահանալը, կը նմանի անոր, որ ընկոյզին մի-
ջուկը նետելով կեղեւով կը բաւականանայ:
Բարոյականութիւնը կրօնի արտաքին փայլն է:

Սոկրատ կ'ըսէ մայր մեղսուն է տան ար-
կինը. ուր որ գտնուի հոն է փեթակը, Եթէ
հեռանայ մեղսուները կը ցրուին, բջիջները կը
խանգարուին, մեղրն անդամ՝ կը կորսնցնէ իր
հոտն ու համը:

Բանաստեղծը կ'ըսէ, թող չտեսնեմ
տանը առանց մանուկի, և դարունը առանց
ծագիկի:

Եատ տաղանդներ կը ծլին, բայց գեռ
չբացուած կը թառամին, զի միջավայրը նը-
պաստաւոր չէ:

Հարստուքիւնը եթէ կորսուի, բան մը
կորսուած չէ, երբ առողջութիւնը կորսուի
բան մը կորսուած է, երբ նկարագիրը կոր-
սուի, ամէն բան կորսուած է:

Աօխատուքիւնը մարդուս դրամարկղ
մը կը պարզեւէ, և չափաւորութիւնը այդ
արկղին բանալին կ'ըլլայ:

Ճօն Լօֆ, անուանի գիտնականը կ'ըսէր,
թէ իր գիտութիւնը երկւ լանի կը պարտի,
նախ՝ բնաւ չէր ամաչեր հարցնելէ և տեղե-
կութիւն ստանալ. և ապա ամէն տեսակ
մարդոց հետ կը խօսակցէր այն նիւթերուն
վրայ, որ անոնց կոշման կը վերաբերէին:

Համեստուքեամբ հարստացիր, առա-
տաձեռնութեամբ հարստութիւնդ գործածէ:

Ներկայացուածին նման, ոչ ոք չար
է, ոչ ոք այնքան լաւ, որքան պարտի ըլլալ:

Փոքրիկ մալութեան՝ գուոդ մի բանար,
որ մի գուցէ մեծ մալութիւն մը մուտ գտնէ:

Գիտուքիւնը կը խսնարհեցնէ, ադի-
տութիւնը կը հպարտացնէ, գիտութիւնը
կամաց կը խօսի, տգիտութիւնը պուալով,
գիտութիւնը համեստ, զգոյշ և խօսւն կ'ընէ,
տգիտութիւնը պարծենկոտ, յանդուգն և
անձնավատահ:

Երբ նոր փորձ մը կ'ըլլայ առաջինը դու-
մի ըլլար, ոչ ալ վերջինը՝ երբ հինք գուը կը
նետեն:

Ճիւանզուքիւնք պատիժ են զանցա-
ռութեանց. հոգ տար սաքիդ և զլուխդ հա-
զիւ վնոս պիտի կը է:

Անօրուքիւնը ամենալաւ դարման է
հիւանդութեանց:

Մարդասիրուքեան վարձքը առողջու-
թիւն է:

Զափաւորուքիւնը մեծ ապահովու-
թիւն է:

Ինչ որ մէկուն հաճելի կերակուր է,
աւրիշի մը վնասակար թոյն է:

Դպրոցն ատողը միշտ յիմար կը մնոյ:

Զգոյս եղիր որ ցանելիք վնասակար
բայսի ոերմեր չըլլոյ:

Յ.մենազեղիցիկ թոշունը չկրնոր եր-
գել, այսպէս ամենագեղեցիկ կին մը առա-
քինութենէ զուրկ կրնոյ ըլլալ:

Թոսդ յոյս ըլլոյ մեր ծառան և հաւաք
մեր գտաւզան:

Միայն զերքերը չուսումնասիրենք, այլ-
նաև զմարդիկ, մանաւանդ զմեզ:

Երկրորդ փորձը շատ հեղ կը յաջողի,
երկրորդ խորհուրդը շատ հեղ լոււագոյնն է:

Սամէն վէրքի ողեղանի չգտնուիր:

Էն աննշան համարուսած բաներն մեզի
լաւ դաս կու տան:

Զանա՝ ամէն բանէ դաս մը տանել:


Գիտելի էն լու դասատուն է, ուստի
ուշադրութիւն ըրէ:

Փոքրիկ սկզբաւորութիւնք կրնան մեծ
վախճան ունենալ:

Առանց յարատեւական ջանքի գիւտ
մը չէ եղած:

Թէյամանէն ելած շողին դիսելով
շոգեշարժ մեքենային ծնունդ արուեցաւ:

Նա որ գժբախտութեան չէ կարող
առնիլ իրօք թշուառ է:



ԶՈՐԱԿՈՐ ՄԱՐԴԻԿ



Միլօն արտաքոյ կարգի զօրութիւն ու-
նէր և 4 անգամ՝ յաղթոլ հանդիսացաւ Ա-

զիմակիական խաղերու մէջ ։ Երկու մասներով բռնած նուռ մը ոչ ոք կրնար ձեռքէն տառնել, իր ճակարը պատաժ չուանը գերձանի պէս կը փրցնէր. եղ մը կ'առնէր ռւսին վրայ ու արագ արագ քալելով շրջան մը կ'ընէր, յետոյ բռնցիք մէկ հարուածով կենդանին կ'ըսպաննէր և կը նստէր կ'ուտէր։

Թօլիթամաս յարձակեցաւ ահաելի առիւծի մը վրայ և սպաննեց զայն, երկու ձիւծուած կառ.ք մը մէկ ձեռքովը կը կեցնէր, ձառի մը բռնը կը կոտրէր դիւրաւ, ինչպէս մէնք գաւազան մը կը կոտրենք ։ Դարեհ թագաւորը զայնիր առջին լերել տուաւ. Ներս մտած ատեն երեք հուժկու զինուորները ձեռքի մէջմէկ հարուածով գետինը փուեց. ուրիշներուն ալ ատանկ կատակներ պիտի ընէր, բայց Դարեհ ըստաւ, ալ կը բաւէ. այն ատեն ցուլի մը սուքէն բռնելով կեցուց զայն, կենդանին կատիւլով կ'աբացէր, բայց չկըցաւ ազտիւլ անոր ձեռքէն։

Սալվիոս Հռովմայ մէջ 400 քիլօ ուսերուն և 400 քիլօ ալ սաքերուն վրայ դնելով դիւրութեամբ սանդուխներէն վեր կ'ելէր։

Թօլիթինէս օր Ապողոնի նման գեղեցիկ և Հերակիլիսի չափ ալ զօրաւոր էր, 4400 պսակ ընդունեց մարզական կրթութեանց մէջ։

Լուի որ Պուլլիէր ձեռքովը երկաթէ գաւազան մը կը կոտրէր. էն զօրաւոր մարդը անոր ցուցամտաին ու բթամտաին մէջ սեղմուած գնդակ մը չէր կարող լուել. Գետնի վրայ կը կանգնէր, և 4 հուժկու զինուոր չէին կարող զինքը տեղին շարժել. Իր ձին ուսերուն վրայ կ'առնէր ու հրապարակին մէջ կը շրջէր, և առանց սոտքը ասպանդակը գնելու ձիւռն վրայ կը ցատկէր։

Թիեզօ Սբանիացին կը խորտակէր ամենէն ամուր շղթաներն որով իր ձեռքերն կը կապէին. բաղզուկները կուրծքին վրայ կը գնէր խաչտձև և 40 մարդ չուտներով քաշելով չէին կրնար զանոնք տեղերնուն շարժել.

Մօրիս կոմաը օր մը ձիւռն սաքերուն պայտ զարնել տալու համար պայտարի մը խանութը մտաւ. պայտարին տուած պայտ տերը մի առ մի փշրեց մատներովը ըսկելով. Շնոր պայտերը շատ անպիտան բաներ են,

բարեկամ, ասոնք կապար են, » Եւ ժպտելով
վեց ֆրանքնոց մը նետեց պայտարին, այս ալ
հուժկու մէկն ըլլալով երկու կտոր ըրաւ վեց
ֆրանքնոցն և ըստաւ, «Տէր իմ, ձեր դրամն ալ
իմպայտերէս տարրերութիւն չունին» կոմոք
լաւ վարձատրութիւն մը ընելով այս իր առ
խոյեանին, զայն իր քովառաւ նոյն կոմոք
լոնտոն ճամբորդութեան տաեն Յ կոփա-
մարտիկ աւզեցին անոր ճամբան դոցել. ինք
սակայն վեցն ալ մի առ մի բռնելով գնդակի
մը նման աղբի սայլի մը մէջ նետեց.

Պարսապաս հազարապետը օր մը 250
քիլոնոց սալ մը առաւ և իր վերաբկութիւն տակ
պահեց, Թօնթանօթով հրացանի կրթութիւն
կ'ընէր, Էն Խոշոր անսասուններու սոկորները
մատներովը կը փշրէր, Օր մը կը պատահի մեծ
բազմութեան մը, ուր մարդ մը վիթիարե
արջ մը կը խաղցնէր, կ'առաջարկէ արջին
հետ կոռուիլ, Քանի մը անգամ դետինը կը
փռէ արջը, յետոյ մէկ հարսւածով կ'ապաննէ
զայն և ուն առած ժողովրդեան կը ներկա-
յանայ, փուռն ծափահարութիւն իլելով.
Օր մը տեսաւ որ իր գունդին սպաներն
դաշտառած են ժողովուրդէն, վազեց և աջ

ու ձախ գետինը փռեց շատերը, ժողովուրդը
կատաղելով վրան յարձակեցաւ, ինքն ալ էն
հսկայ մարդիկներէն երկու քը յափշտակելով
զանոնք իբր խարազան գործածեց ամբոխը
ցրուելու համար, Կապօնացի մը զինքը մե-
նամարտի հրաւիրեց, Պարսապաս լուռթիւն
պահէց, Կապօնացին իր հրաւերը երկրորդեց
և երրորդեց, «Նատ լուր,» ըստ Պարսապաս,
«առ ձեւքս բռնեցէք!» Կապօնացին հազիւ
թէ ձեւքը դրած էր անոր ձեւաց մէջ,
զարհուրելի ճիշ մը արձակեց, ձեւքը կտոր
կտոր, ջարդ ու փշուր էր եղած անոր ձեւաց
մէջ:

Տօրօթէ մայրապետ, Պարսապասի քոյրը,
իր եղբօր նման զօրտւօր էր, օր մը վանքը գո-
ղեր էրն մտած, սոսկում էր տիրած բոլոր
մայրապետներուն վրայ, ոքը երենց խուցերն
մտած գռներն փակած էրն. Տօրօթէ գլուքը
իմանալուն պէս, գողերուն վրայ կը յարձակի
ու զիմացը ելլողը բռնելով պատուհանէն վար
կը նետէ պարտէզը, բայց գանակի հարուա-
ծով մէջքէն կը վիրաւորուի, Տեսնելով արեան
հսուիլ, փրցուց մատուին սիւներէն մին և
այս ահագին գաւազանով հալածեց գողերը,

սպաննեց մի քանին և միւսներն փախցուց։
Տօրօժէ պատուական սիրտ մ'ունէր բայց
շարժումները կոչտ ու զարհուրելի էին. օր մը
երկու ընկերներու հետ զքօսած ատենը ան-
դիտաբար անոնցմէ մին խեղդեց և միւսին
թեւն կոտրեց, ուստի վանքէն արտաքսուեցաւ

Օգոստոս թ. Լեհաստանի թագաւորը
մոտներով կտոր կտոր կ'ընէր ձիու պայտերը
և մէկ ձեռքին վրայ մարդ մը առած կը
տանէր։

Թոււսել եղամբ նշանաւոր զօրութեան
օրինակներ կ'ոււտան։ Անդրանիկ եղբայրը 40
տանաշափ բարձր տեղէ մը վար կը ցտակէր
25 քիլօ ծանր բեռ մը ոտքին վրայ և նոյնքան
ալ իւրաքանչիւր ձեռաց վրայ ունենալով։
Աթուի մը վրայ գլխիվար կը կանգնէր և տկ-
ռաներով գետնէն կը վերցնէր 250 քիլօնց
բեռ մը։

Էմիլիանիկ գարբինը 4250 քիլօնց թրն-
թանօթ մը վերցուց։ Ձեռքը բոնած գաւա-
զան մը չէին կրնար երկու հուժկու մարդիկ
ձեռքէն խլել։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

—օշակո—

Վարդան բահանայ Արտանեան.
Ծնած է 1863, Ակնայ գաւառին Բինկեան
գիւղին մէջ։ Հայրն է Կարապետ Արտանեան,
նահատակուած 1896 Սեպտ. 7, Ակնայ ջարդի
միջացին։ Մայրը ողջ է, եղբայրն է Գէորգ Ծ.
Վ. Արտանեանի։

Ծննդացաւարտ եղած է 1880ին Բինկեանի
նախակըթարանէն։ Հետեւած է 3 տարիներ
գեղագուղծութեան։ 1884ին Պոլսոյ մէջ հիմ-
նած է գրավաճառանոց մը։ 1889ին պտըտած
է Եւրոպա և այցելած է Փարիզի արուեստա-
հանդէսը, հոնկէ դարձին կ. Պոլսոյ մէջ հիմ-
նած է ֆանկլայի և գուլպայի հրատակադոր-
ժարան մը (առաջինը բոլը Թուրքիայ մէջ)։
Իր գործարանին արտադրութեանցը հաւ-
նուած է ու պատուուած պետութենէն Մէ-
ծիտիկի Ե. Կարգի պատուանշանով։ 1892ին
իր գործարանը գագրեցուցած ու վերագրա-
ձած է հայրենիքը, ուր գասախօսի պաշտօն
վարած է մայր վարժարանին մէջ։

1897ին Տիվրիկի գաւառուին Զմիմառա զիւղին քահանայ ընտրուած և Աերաստիոյ Պետրոս Եպիսկոպոսին ձեռնադրուած է: 12 տարի հոն պաշտօնավարած և տպա Խարբերդու Ա. Կարապետի թաղին հովիւ է և կուսուցանէ անդ կեդ. վարժարանին և նոր Ամբատեան Ճեմարանին աղջկանց դպրոցին մէջ: Իր գրական գործերն բաղմաթիւ են:

Առուր Էֆ. Եռւսութ. Գրագէտ, քերթող, Հրապարակագիր և ուսուցիչ: Աշուր էֆ. Եռւսութ, աղդով Խարբերդի Բող. Ասորիներէն է, ծնած 1858ին: Աղբացեալ Վեր. Ա. Կ. Պետիկեան և ինքը քրոջ ու եղոր թոռներ են:

Աշուր էֆ. կեդ. Թուրքիոյ գոլէճին մէջ երեք տարուան աշակերտական փայլուն շրջան մը բոլըբելէ ետք դաստիառութեան կ'երթայ նախ Ամսալիս ու յետոյ Զմիւռնիոյ Ամերիկան Վարժարանը:

Զմիւռնիոյ մէջ ուսուցչութիւնը ձգելէն վերջ Ասորիներու իրը միսիսնար պատրաստուելու համար Պոլսոյ մէջ Ար. Քըրթիզ աշնուն կանոնիկոսին կը դիմէ, որը կը խոստանայ իր նպատակը յաջողցնել: Երկու վարիչներ

Անդիսէն ճամբոյ կ'եղեն և մինչև Հալէպ կուղան, սակայն ջարդը և կաթողիկոսին մահը իրարու յաջորդելով գործը կը վիճի:

Խարբերդէն գուրս զանողան տեղերու մէջ ուսուցչութիւն ըրած է, Մէարիփի պաշտօնէութիւնը «Տէրէճէ ի Ալա» աստիճան կրող ուսուցչի վկայագիր մը յանձնած է իրեն: 95 թուականէն վերջ Եփրատի Տեսչութեան կոչուելով մինչև այսօր կը մնայ հոն, սիրուած ու յարգուած գէմք մը Ահշտ վեհանձն և հեղահամբոյ, անցիշալար ու ներող եւ օդնելու պատրաստակամ:

Լևոնի Մրապեան, Ուսուցիչ և հրապարակագիր, աշխատակից «Արեւելք» ի, «Սուրհանդակ» ի, «Ար. Մամուլի», «Բիւրակն» ի, «Ծաղկիկ» և «Հանրագիտակ» ի: Հեղինակ գրական երկու հատորներու (հրատարակիլ) Բառագիր «Գղիի գաւառաբարբառ» ին: Ծնած է Քղի, 1880 Դեկտ. 28ին: Ուսուցչական վրական սերունդէ, հայրն է Հ. Ա. Ընկ. արդի տնօրէններէն մէկը: Նախնական ուսումն առած է նախորդ Հ. Ա. Ընկ. Գղիի Բարձր. Նախակրթարանին մէջ եւ տպա կատարելագործած հօրը ձեռքին ներբեւ և ինք-

նաշխատութեամբ։ Շատ կանուխէն սկսելով
ուսուցչական պաշտօններ վարած է Խարբերդ,
Տիգրանակերտ, Քղի և Կարին 17 տարիէ ի
վեր, որոնց առաջին տարիները 96ի ընդհանուր
կոտորածներէ յետոյ հաւաքսւած 40 որբերու
ուսուցչութիւնն ընելով, Խարբերդի Որբանո-
ցին մէջ հոգեբուղին խանդաղատանկով բաժ-
նելով յիշատակներն ու կոկիծներն այդ ան-
բոյն թռչնիկներուն։

ՈՂՋ ԵՐԹ ՀԻՆ ՏԱՐԻՈՅՆ

Կ'անցնի՛ս հին տարի լուս ու ցաւազին
Վերջալուսիդ մէջ յոյսերս կ'այրին,
Կ'անցնի՛ս տրտմօրէն և շրւտ կ'անհետիս
Ինչպէս որ անցան երազներն անգին
Ծաղիկ իմ կետնքիս։
Կ'անցնի՛ս հին տարի սարէն հովիտէն
Համբոյլներ տալով քաղցր, մեղմօրէն
Թօշնած ծաղեկին, վարդին, շուշանին,
Որոնք նորածագ արփւոյն շղթերէն
Կետնքին կը հային։
Կ'անցնի՛ս հին տարի հայրենի երկրէն
Պատմելով սրտի ցաւերս պէսպէս
Քաղցրիկ մայրիկիս, որուն կարօտէն

Օտար աստղերու ներքին վշտակեղ։
Ակ գեռ կ'արտասուեմ։
Գնա՛ հին տարի լուս ու ցաւազին
Թաղուիլ առ յաւէտ գիրկը ոչինչին
Տարտամ, անորոշ, արիւն ցոլքերէդ
Վերջ, թող շուտ ծագի այգը կենսաւէտ
Ցեղիս մեծ փառքին։
Գահիրէ ՑՈՎՍԵՓ Հ. ԹԲՐԴԸՆԵԱՆ

Յ. Հ. Թըզլրեան. Երիտասարդ բա-
նաստեղծ, ծնած է Եալօվայի Փարձի գիւղին
մէջ։ 17 տարեկան հասակին Կոնեայի Ճենան-
եան գոլէճին աշակերտ է եղած։ Երկու տարի
վերջ Խզմիրի Ամերիկեան գոլէճն և անկէ մէկ
տարի վերջ ալ զինուոր եղած է Օսմ. Հայրե-
նիքին և գրադիր տասնապետի աստիճան ստա-
ցած։ Հիմա կը գտնուի Գահիրէ, ուր կը պաշ-
տօնավարէ հաստատութեան մը մէջ։ Փար-
տուղարն է նաև Գահիրէի Հայ Ե. Թ. Ընկե-
րակցութեան։ Հեղինակն է «Այդալոյսի Շի-
թեր» անուն բանաստեղծական սիրուն ու
քաղցրիկ գըբոյկի մը։

Ցիկին Շուշանի, Հռիփսիմէ Շմաւոնեան
ծնած է 1843ին ի Տիգրանակերտ, Հայրը մե-
ռած է գոլքրպյէ և քառասուն օր ետքը մայրը:
Հռիփսիմէ վեց տարեկան հասակին մէջ եղ-
բօրը Վեր. Թովմաս Պօյաճեանին խնամքին
մնացած է:


1852ին Ամերիկեան դպրոցը կը մտնէ ի
Պոլիտ. Հինգ տարի ուսունելէ ետքը 1857ին
Տիգրանակերտ վերադարձաւ Պ. Մարտիրոս
Շմաւոնեանի հետ որոյ խօսեցեալն էր:

Հոն հասնելուն պէս առաջին իդական
դպրոցը բացուեցաւ, ուր սկսաւ ուսուցանել:
Հետեւեալ տարին իր խօսեցեալը եկաւ Խար-
բերդէն ուր կը պաշտօնավարէր իբրև քարոզիչ
ուսուցիչ, ամուսնացան և Խարբերդի դաշ-
տին մէջ գործել սկսան:


Տիկին Շմաւոնեան ամէն տեղ իր ամուս-
նոյն կը գործ ակցէր և անոր հետ ճամբորդելով
Խարբերդու դաշտին գիւղերը և շրջակայ քա-
ղաքները լոյս կը սփռէր:

1887ին Պոլիտ անցան, ուր ամուսինը Լան-
կայի եկեղեցւոյն հովուութիւնը ստանձնեց:

Հոն սկսաւ գրիչը օգտակար կերպով գոր-
ծածել, թարգմանելով «Խաչ Տանողը» և
«Սիրոյ Խրատուները Անզլիերէնէ», և Տու-



Գ.ԵՐ. Պ. Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Տեսուչ Գերմ. Ուրբանոցի (Խարբերդ)



Գ. Ե. Ա. Յ. Պ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.
(Ամասիա, Ամասիա, Ամասիա, Ամասիա)



Գ. Ե. Ա. Յ. Պ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.
Հովհան Աւետ. Հայոց (Ամասիա)

աւէլի քարոզները Տաճկերէնէ Հայերէնի թարգմանելով։ Իր թարգմանած և հեղինակած երգերէն սմանկը կը դանուին հոգեւոր երգարանին մէջ, ինչպէս նաև ստանաւորներ և յօդուածներ «Աւետարեր»ի մէջ։

Կարապետ Վարժապետ Լիւլէնեան, Մնած է 1834 Խարբերդի մէջ։ Թաղի գպրոցը աւանդուած կրթութիւնը լրացնելէ վերջ հօրը կ'օդնէ թաղիքի գործին մէջ։

Կարապետ Վարժ. կը գնէ աշխարհաբար Ա. Գիրքէն օրինակ մը և հակառակ իր ծնողացը ու աղդականներուն ընդդիմութեան ինք Աւետարանի Ճշմարտութեանց կը հետեւի և 1860ին, օգնական ուսուցչի պաշտօն կը ստանձնէ։ 1865ին Աստուածաբանութիւն կ'ուսանի և տարի մը Հապուսի գիւղին մէջ ուսուցիչ քարոզիչ կ'ըլլայ, Խարբերդ կը դաշնայ իբր օգնական ուսուցիչ, ետքը կ'ըլլայ տեսուչ Աւետ. գպրոցին։

1888ին Եփրատ մանկարանի տեսչութիւնը վարեց մինչև 1911։ Սարկաւագի պաշտօն և վարելով մինչև 20 Յուլիս 1914 նա մասու իր հանգիստը։

Կարապետ Վարժ. 51 տարի երեք սեռունդներ դասակարակած ու աղջին 10,000 մօտ զաւակները կրթած է։

Սաւզիս Յ. Թէլֆէկան, Ծնած է Կեսարիա, 1866 Յունվ. 6ին, և տեղայն Բարձր. Վարժարանի աշակերտելէ ետեւ 17 տարեկան եղած ատեն կ. Պոլիս եկած, ուր հօրը գորգավաճառատան մէջ 7 տարի աշխատած է: 1891 ին Ամերիկա երթալով մինչև իր մահ հօն, ի նիւ Եսոք բնակած և գորգավաճառութեամբ զբաղած է: 1897 Սեպտ. 6ին տանւանցած է Աղնաւորեան բարեհամբաւ Ամիրայի զաւակներէն Օր. Աղստանի Աղնաւորեանի հետ: 1914 Յունուար 21ին 48 տարեկան ծաղիկ հասակի մէջ իր յաւիտենական հանգիստն է մտած: Ահա ամբողջ կենսագրականը այս բարերար անձնուարութեան:

Հանդուցեալ Սարգիս էֆ. Թէլֆէկան կտակած է Թոււրքիոյ բարձրագոյն վարժարանաց և գոլէճներու ու եկեղեցիներու 20,000 Անգլ. ոսկի: Արեւելեան Որբանոցը սոյն կտակին մէջ ո՛ւ է բաժին չունի թէկւ, այսու հանդերձ վատահ ենք թէ Հանդուցեալին Աղնիւ Տիկինն ու Պարագայք ուրիշ կերպով կարգադրած են, որ հանդուցեալին յիշատակը անջինջ մնայ նաև Արեւել. Որբանոցի սանուհեաց սրտերուն մէջ:

ՈՂՋԵՐԹ ՍԻՐԵՑԵԱԼ ՄՈՐԵԳ.ՅՈՐՄ

Սաւզիս Էֆ. Թէլֆէկանի

Քու դամբանին ծաղկեպսակներն արցունքով Հիւսեցինք, ով դու համակ սէր, գորով, Դու որ վերին մեծ հրաւերին հնազանդ Այսպէս յանկարծ թողուցիր մեզ, թռա՛ր անդ . . . :

Մեր արցունքով քո վեհ ճակտին արժանի Դափիներ մենք հիւսեցինք. զի Անհունի Ծրագրին համաձայն այս կեանքն անհարթ Գիտցար ապրիլ իբր ճշմարիտ անկեղծ մարդ:

Արցունքով կը յիշենք յոյժ սիրելի Անունըդ որ, քաղցր յուշերով լի ու լի Աղնուութեան, վեհանձնութեան, բարութեան

Հոմանիւ մը դարձան կարծես յաւիտեան:

Յիշատակդ ալ սուրբ, անթառամ արցունքով Ասկեղօծած պիտի պահենք միշտ մեր քով Մեր սրտին էն նուիրական խորշին մէջ Ուր մօտենան յարգանք ու զուտ սէր անշէջ:

ՏԵՇԱ ո/վ խոնարհ ու վեհ հոգի, չերմագին
Արցունքներով այժմ կ'ուխտենք քեզ քո
կեանքին
Բարձր ու աղջիւ հանգամանքներն մեզ համար
Ներշնչումի հուր մը պահել մըշտավառ:

Եւ սակայն դու մի վշտանար, մեծ հոգի,
Քեզ նուեիրուած այս կաթիլներն արցունքի
Նիւթապաշտին արտասուքին չեն նման
Ողջ երթ մ'են լով պահուգ բաժանմեն:

ՄԱՐԻ ՊԱՇՊԱԶԻՐԿԵԱՆ

—

Տոգր. Երուանդ Ճենիզեան, Ա. Հանգուցեալը երրորդ զուտակն էր բարեյիշատակ Վեր. Աղէքսանդր Ճենիզեանի, և ծնած էր 1868ին: Նախ կ'աւարտէ 1885ին Պարտիզակի Բարձր. Վարժարանի ընթացքը: 1889ին ալ կ'աւարտէ Ռոպէրթ գոլէճի ընթացքը և 4 տարի Աւետարերոյի օգնուկան խմբագրի պաշտօն վարելէ ետեւ լամինպուրկ կ'երթայ բժըշկութիւն ուսանելու: Հոն ալ համալսարանի ընթացքը կ'աւարտէ, 1899ին ստանալով իբր մրցանակ կարեւոր գումար մը և 4 առաջին կարգի մէտալ և 20է աւելի վկայագիր:

Ընթացքը աւարտելէ յետոյ Անգլիոյ մէջ

իր արհեստը ի գործ դրաւ: 1900ի սկիզբը հայրենիք վերադարձաւ և մինչեւ իր մահուան օրն բժշկութիւն ըրաւ: 1913 Դեկտ. 12ին թոքաւապէ բռնուած անկողին ինկաւ և 14ին կիր. օր իր հանգիստը մտաւ, հանգարտ և խաղաղ մահուամբ մը:

Ատարազարի մէջ 12 տարի բժշկութիւն է ըրած, բայց ոչ թէ դրամ շահելու այլ բարեգործելու նպատակաւ: «Իմ արուեստս ի գործ պիտի դնեմ իմ ազգակիցներուս և ընկեր արարածներուս օգտին համար», այս էր իր նշանաբան, «ողորմելի է այն մարդը որ դրամ չունի, բայց շատ աւելի ողորմելի է այն անձը որ միայն դրամ ունի» կ'ըսէր հանգուցեալ անզուգական հայ բժիշկը:

Իբր 10 տարի Հայուհեաց Վարժանանի խնամկալ է եղած: Խտինպուրկի մէջ գրտնուած ատենը Ե. Փ. ընկերակցութեան մը նախագահ է ընտրուած, պատիւ և պաշտօն մը որ հազոււագէպ է օտարամերժ Անգլիացիներու համար տալ օտարազգին մը: Բայց ամենէն վեր և աւելի, ինքը հաւատոյ մարդ էր. կրօնք և անդրշիրիմեան կեանքը միայն խօսք չէին իրեն համար: Կրօնասէր և բարեպաշտ էր, և իբ ոսկորներուն մինչեւ ծուծը ամբողջովին

Մարդ էր իր Աստուծոյն հետ շարունակ յարաբերութեան մէջ ապրելով, ազօթքով և Ս. Գրոց ընթերցումով։ Այս տեսակ կեանք մ'էր որ վերջացաւ, և յուղարկաւորութեան տխուր հանդէսին գրեթէ ամբողջ քաղաքը մասնակցեցաւ, հակառակ տեղացող յորդաշու անձրեւին։

ՄԱՀՅ. ՓԻԼԻՊՊՈՍ Ի.Յ. ԵՎԱԳՈՒՊԵԱՆ

1847—1914

Եղիպատոսի և Թուրքիոյ Հայ Աւետարանականներու ամենէն հարուստ գերդաստանին երեց մէկ անդամն էր Փիլիպպոս էֆ. զոր մահը մէկ երկու ժամէն զգեանեց յանկարծակօրէն, 67 տարեկան հասակին մէջ։

Ողբացեալը ընկի Արարկիրցի, պատանի հասակին մէջ իր հօրը հետ Եղիպատոս մեկնած և հետզհետէ բարձր դիրքի և բաղդի տիրացած էր իր երկու եղբայրներուն հետ։

Բարձր կրթութեան տէր մէկը չըլլալով մէկտեղ իր զաւակներուն դաստիարակութեանը համար մասնաւոր խնամք ունեցած է։

Կեանքով միշտ պարզ և անփառունակ ապրած է, միշտ համակրող մը և սռատօրէն

նպաստող մը եղած է Արեւել Որբանոցին իրենց Արարկիրի մէջ ունեցած կալուածները տեղոյն եկեղեցւոյն նուիրած են։

Իր անունը միշտ անբաժան կը մնայ Գաւհիրէի Հայ Աւետարանական եկեղեցւոյ կազմակերպութեան պատմութեան հետ։

Իր ետեւ կը թողրու այրի մը, 5 մանչ և 2 աղջիկ զաւակներ։

Ա.Կ.Խ.Ղ.Ա.Կ.

Միս Մէյրի Իլէ «Մայր վարժուհին», ինչպէս կը կոչուէր հանդուցեալը, ծնած էր 1841ին և իր հանդիսուր մտաւ 12 տարեկանի Պէլյութ։ Իր քոյրը միս Շարլօթ, որ ծնած էր 1839ին դեռ կ'ապրի և կը գործէ ի Պիթլիս, ուր 45 տարի շարունակ աշխատած են այս անղուգական զոյգ քոյրերը հայ իգական սեռին գաստիարակութեան համար։ Երկու քոյրերը Ամերիկան Մասոնթ Հօլեօք ճեմարանը ուսուած և ապա ի Գերմանիա կատարելագործած են իրենց ուսուց։ Երբ Գերմանիայէ Ամերիկայ կը վերադառնան նաւուն վրայ կը հանդիպին Պիթլիսի միսինարներէն ոմանց որոնք Պիթլիսի կրթական և կրօնական գործերուն յարմար վարիչներու պէտքը կը յայտնեն, երկու քոյր

թերը կ'ըսեն «պիտի ջանանք յարմար վարժուհի գտնել»։ Ամերիկա հասնելէ ետեւ զ'աշխատին յարմար օրիորդներ գտնել, բայց ոչ մին կ'ուզէ Թուղթիա գալ, ուստի երկու քոյլերը կ'որոշեն իրենք գալ և ստանձնել Պիմլիսի կրթական գործը, և իրաք 186 ին գալով աղջկանց առաջն վարժարանը կը բանան և զայն կը կոչեն «Մատնթ Հոլեօք»։

Հանգուցեալին 45 ամեայ արդիւնաշատ կեանքն և գործունէութիւնը չենք կրնար Օրացոյցիս անձուկ էջերուն մէջ նկարագրել, ստուար առանձին հատոր մը պէտք է սոյն արդիւնաշատ կենսադրութեան համոր։

Հակառակ իր յառաջացած տարիքին հանգուցեալը ամենայն եռանդով և կրովով գործեց մինչեւ այն օրը, երբ բժշկին հրահանագով մեկնեցաւ քաղաքէն և գնաց Մարտին ապաքինման համոր, հոն 5 ամիս մնաց և օգը աննպաստ գտնելով գնաց Պէրութ ուր և հանգչեցաւ իր գործերէն։

Անոր մահուամբ Մատնթ Հոլեօք վարժարանը կրոյս իր մայր-վարժուհին, որ այժմ կ'ողբայ նման անմիթար օրըի իր անդարմաների կրուստը Ուր գտնել անոր նման կատարեալ, անձնուեր, ճշմարիտ կրթիչ և դաս-

տիարակ. նա ուսանողներուն միտքն ու հոգին և մարմինը ներգաշնակօրէն կրթելով և միջավայրին պահանջն նկատողութեան առնելով զանանք ներկային և ապագային համար կը կրթէր։ Միս Մէյի էր նաև տիպար Աւետարանիչ։ Իր աշակերտուհիներն հետն առած գիւղերը կ'երթար, ցոյց տալով գիւղացւոց մէջ գործելու պէտքը, և կը խրատէր որ չմերժեն գիւղերն երթալ երբ ընդունին հրաւեր հոն գործելու։ Միս Մէյի վերջապէս բարեսիրտ, գլուծ և աղքատասէր էր։ 1895ին արիւնութուականին ինք և իր քոյրը 50—60 որբուհիներ իրենց խնամոց առարկայ ըրին։ Բնանապետութեան սեւ օրերը ինք կը մուրար իր արտասահմանի բարեկամներէն և աղքատներուն թշուառութիւնը կը մեղմէր։ Ծուլութիւնը աններելի մահացու մեղք կը նկատէր։ Ով բազմաշխատ մայր, դու հանգիստի կը կարօտէիր, հանգչէ այժմ, դու չես մեռած այլ ճշմարիտ, իրական կենաց փոխուեցար և ստացար պսակն փառաց։

7. Մ.

Պետրոս Սէմերենեան, Ծնած է 2 Ապրիլ 1883 և մեռած 16 Յուլիս 1912 ի Գոնեա, ուր Ճէնանեան վարժարանի աշակերտելէ ետեւ

վաճառականութեամբ կը քրաղէր, Բնաւորութեամբ քաղցրաբարոյ, կեանփով մաքուր, բուլր զինքը ճանչցողներուն համականքին արժանացած էր, որս վերջին ապացոյցն էր յուղարկաւորութեան հանդիսին հօծ բազմութեան մը ներկայութիւնը Հակառակ իր վաճառականական գործերուն իր պատկանած ժողովրեան եկեղեցական և կրթուկան զարգացման կ'օգնէր. իր վերջին սոսկալի ցաւերն իսկ շանջատեցին զինքը Աստուծոյ սէրէն և անոր կամաց հպատակելէ:

Միայն 29 գարուններ վայելեց հանգուցւելը և երգեց.

Երա՛զ, աւազ կեանքո էր երազ
Հածոյքն անոր փրփուր, աւազ,
Փսան և ինն գարունք անցան
Բոլոր ոսկի յոյսերս կորան,
Այժմ ոսկի կեանք իրական
Երբ ժամանէ հրեշտակն մահուան:

“Քոյր Պոպիլ, Մշոյ պահապան հրեշտակն է այս օրիորդ Նորվեկիացի, որ 1907է ի վեր Մշոյ քաղաքին և գաշտին մէջ կեանք և ըստ կը սփռէ և սփոփանք ու խրախոյս, իբր բժիշկ, գայեակ, գեղագործ, հիւանդապահուհի

ուսուցիչ ու քարոզիչ։ Աստուծոծ օրհնէ այս նաշխարհիկ օրիորդը, լիառատ վարձատրէ. հաստատ և անսասան պահէ և երկար կեանք պարգեւէ որ զայն նուիրէ նաև յայսմհետէ թշուառին, անկեալին, Հայուն ու Քուրդին, մեծի ու փոքրի, այր և կին մարդու, իսլամի և քրիստոնէի։ Հայ օրիորդները չե՞ն հաճիր գոնէ մասամբ մը ընդօրինակել այս ազնիւ օրիորդն ու հետեւիլ անոր շաւիղներուն։

Ա.ԵՐ Յ. ՕՏԵԽԱՆԻ, Բնիկ իսթանողցի ըլլալով 1851ին ծնած է։ Նախնական կրթութիւնը առած է ծննդավայրին մէջ։ 15—17 հասակին օգնական վարժապետ և Հայ. եկեղեցւոյն ձայնաւորն է եղած։ 1869ին Պրուսա զրկուեցաւ Նախսպատրաստական գպրոցը, հոն շուրջ երեք տարի ուսանելէ վերջ 1873ին Մարտուան զրկուեցաւ. Ճեմարանին ուսմանց և Աստուծաբանական դասընթացքը աւարտելով 1877ին իսթանով հրաւիրուեցաւ իբր քարոզիչ։ 1879ին կեդ. միութիւնը զինքը հովիւ ձեռնադրեց և քիչ յետոյ ամսունացաւ։ 1880ին Անդիխա ուղեւորեցաւ, հոն 3½ տարի մալով և կլասսո Ֆրիչքրջ գոլէնին աստուծաբանական դասընթացքին հետեւեցաւ։

Վագանցներուն եկեղեցիներու և կրթական շենքերու պէտքը շեշտելով և 1000 սոկիի մօտ գումար մը ձեռք ձգելով վերադարձաւ իսթանօց։ Անմիջապէս Ֆէրմանիի գործին ձեռնարկեց, Անգլ. գետապանին (Լորտ Տրֆորին) շնորհւե մէկ շաբաթէն Ֆէրմաններաւ։ 1885 Մայիս 5ին եկեղեցւոյն հիմնարկեքի պաշտօնը կատարեցին. եկեղեցին և գորոցը 1800 սոկի ծախքով շինուեցաւ առանց պարտքի, որուն 1000 սոկին Անգլիայէն, 500ը ժողովուրդէն և մնացեալը Ամերիկայի Պորտէն, և եկեղեցասէր անհատներէ հաւաքուած է։ Եկեղեցին տաշեալ քարով շինուած է, երեք վերնատունով և 2000էն աւելի ունկնդիրներ կը պարունակէ։ Ունի 200 քաշնոց գեղեցիկ զանգակ մը նուիրեալ Անգլիացի տիկինէ մը։ 1887ին կեդր. Միութիւնը նորաշէն եկեղեցին Աստուծոյ նուիրեց։ Ունեցած է 150 տունի մօտ ժողովուրդ, 250ի չափ եկեղեցւոյ կենդանի անդամներ, վարժարան մը ուրկէ ելած աշակերտք Մարտուանի և Գօննեայի գոլէճներուն ժրէշմէն կարգը կ'ընդունուին։ 1894ին 16 տարուան բազմաշարչար պաշտօնավարութենէ ետեւ թողուց եկեղեցին, (Իսթանօղի) ու միւս կրտսակին Ենկիւրիի բեմը ստանձնեց մինչև 1905։

15 տնաւոր լքեալ ժողովուրդ մը որուն 350 սոկինոց Ազօթարանը դրաւուած էր նախկին քարոզիչ Մ. Վարդանեանէ, կրօնափոխ (Մուշտամմէտ Ֆէրիզի) ըլլալով։ Վարձու տան մէջ կը պաշտօնավարէր մինչև որ իր ջանքով բարեւմբարերաց և եկեղեցեաց և այլնպատճ ներով 800 սոկինոց ներկայ Ազօթարանն ու երիցատունը շինուեցաւ ժողովուրդը 35 տան բարձրացաւ։ 1905ին ի Պիլէճիկ մէկ տարի, և յետոյ շուրջ 6 տարի ալ ի Միիսալիճ էր։ 1912 ին գարձեալ Իսթանօց հրաւուիրելով անկէ ի վեր հան կ'աշխատի։

Ճարմ Փըրքինս Նէփ, Ծնած է Թուրքիա 1863 ի Բաղէշ, 1872ին ծննդաց հետ Վան գնաց, հան ձորճ երկյարկ տան մը տանկիքէն ինալով և իր գանկը ճեղքուելով մահէն մազապուր աղատեցաւ։ 1877ին Ամերիկա անցաւ և 13 տարի ուսման հետեւեցաւ վարժարաններու մէջ։ 1890ին միսիոնար եղաւ և ամուսնացաւ, նոյն տարուան մէջ Պիթլիզ եկաւ. 1895ին հայրը մեռաւ. Սասնյ կոտորածներուն նպաստներ բաշխեց անձամբ Սասուն երթաւով 1895ին Պիթլիզի մէջ եւս կոտորած տեղի ունեցաւ և այդ առթիւ զինք սպաննելու փոր-

Ճը տեսնելով ամսուան մը չափ ստիպուեցաւ փակուած մնալ իր տան մէջ և ինքնապաշտապանութեան միջոցներու դիմել որով կ'ամբաստանուէր իրբե ոճրագործ և խռովարար։ Ասանկ ստայօդ լուրեր մոլեռանդ և տպէտ շրջանակներու մէջ տարածուելով բնոււ չէր կրնար տունէն գուրս եղել բանտարկեալի մը պէս 1896 Մարտին խիստ ձմեռուան եղանակին Փասփորթ տուին իրեն յայտարարելով որ անմիջապէս մեկնի։

Ամերիկեան «Մարդէլ-Հէտ» զրահաւորը զինքը Խոքէնտէրունէ կ. Պոյիս բերաւ։ 18 ամիս հոն կենալէ ետքը Պերլին դնաց։ 1897ին Գերմանիաէն Ամերիկայ անցաւ, յետոյ զրոկուեցաւ Խարբերդ 1899ին Որբանոցի գործին հսկելու համար։ Քանի մը տարիներ մօտաւուրապէս 1400 որբեր և որբուհներ շնորհիւ իր կազմած ընկերուկցութեան ստացան թէ կըրժութիւն և թէ արհեստ։ Ասկէ զատ Եփրատ Պոլէնի և Աստուածաբանական Շեմսրանի մէջ գտաւը կուտար։ 1909ին Ամերիկա վերադարձաւ իր գործը շարունակելու համար։ Վեր Նէփի կենսագրութիւնը ստուար հատոր մը կըլլայ և խիստ շահեկան գիրք մը։

Ա. Ար. Փարքրին, Ծնած է 1870ին, 1895ին Գոլէնի և 1898ին Աստուածաբանական Ժեմարանի ընթացքը աւարտելը ետեւ 1900ին Թուրքիա եկաւ և հաստատուեցաւ Սեբաստիա, ուր կրթական գործին բարեկարգիւն, այս ստեղծիչը եղաւ։ «Ռւսուցչանոց» մը կը պակսէր այս երկրի համար, որ զայն ստեղծեց Մը. Փարթիճ 7 տարուան գասընթացքով։ Հոն կ'ուսուցցուին լեզուներ, գիտութիւններ և մանկավարժական այլեւոյլ ձիւղերը գործնական վարժութիւններով։ Երեք համալսարանական, չըս գոլէնական և ուրիշ դաստանուններ ունի։ Նոր չենքը քաղաքին բարձր վայրին վրայ է կառուցեալ։

Արշակ Ա. Թիւրիւննեան. Ծնած է հաւանականաբար 1878ին Երզնկայի մէջ։ 1896 ին Երզնկայի Եզնիկեան ուսումնարանի Բարձրագոյն կարգը լրացուց որմէ վերջ վեց տարի ուսուցչութեամբ զբաղեցաւ, առաջին երեք տարիները հայրենիքին և Քէմախի իսկ, վերջին երեք տարին ալ, Կարնոյ Ամերիկեան Բարձրագոյն կարգը մէջ։ Ցետոյ եօթը տարիի քարոզչութիւն ըրաւ Խնուսի մէջ։ 1907—1909ին արմատիքի տարապայման սղութեան ատեն քա-


բողած տեղերը հաց ալ կը բաժնէր: Յընթացս
աշակերտութեան Ախմ Հաճի գիւղի սցցելու
քարոզչութեան պաշտօնն ալ միասին կը վա-
րէ: 1903էն սկսեալ բաղմաթիւ յօդուածներ,
արձակ կամ ոտանաւոր, — կրօնաշունչ —
դրած է, «Աւետարեր»ի և Փրոֆ. Շէճիղեանի
խմբագրած «Բիւրակն»ի մէջ: Աշխատակցած է
նաև օրաթերթ «Արեւելք»ին: Այժմ կ'աշ-
խատակցի «Տաճար» և «Բողբոջ» հանդէսնե-
րունն Ա. Աէրունի ծածկանունով: Անդրանիկ
հեղինակութիւնն է Պատմական թիսուս Քրիս-
տոսը որ ջախչախիչ փաստերով կ'ապացուցանէ:
Քրիստոսի պատմականութիւնը:

Պատ. Յովսէփ Հայկազն, Ծնած է
Պարտիզակ 1866ին, քիչ մը ատեն աշակերտած
է Պարտիզակի Բարձր. Վարժարանը: Իր նախ-
նական տարիներուն մէջ հետեւած է շատ մը
արհեստներու, բայց 18 տարեկան հասակին
մէջ ուսուցչութեան կը հրաւիրուի Պոլիս Ա-
շակերտաց Միսիոնարական դպրոցը, երեք տա-
րի յետոյ Արեւ. Որբանոցը, մէկ տարի, որմէ
վերջ Ծննդավայրին մէջ կը գործէ անընդհատ
20 տարի: Վերջին եօթը տարիները կը գործէր
երր փոք միսիոնար «Աշխակերտաց» Ամերիկեան




Գ.ԵՐ Պ. Գ.Ա. Ա. Յ Ա Ն Ա Ն

Հովիւ Աւետ. Հայոց (Քղի-Գասապա)



Ա. Ա. Յ. Գևորգյան
Հովհան Աւետ Հայոց (Թողարկ)



Ա.ԵՐ. Պ. Պ. Ա.ՄԻՒԹԻՆԱՆԵՍ. Հ
Հովհան Աւետ. Հայոց (Խարբերդ)

ընկերութեան՝ մինչեւ անոր գործունէութեան
վերջանալը Թուրքիոյ մէջ Երկու տարուան
արձակուրդով կը մեկնի Պէջրութ, Երուսաղմ
և այլն Պարափակէն կը հրաւիրուի իրբ քարո-
ղիչ և ուսուցիչ, չորս տարուան խիստ ար-
դիւնաւոր շրջան մը կը բոլորէ որուն միջոցին
սիրելի կը գտանայ տեղոյն Աւետ. և Լուս.
հասարակութեանց Անկէ վերջ իրբ քարողիչ
կը պաշտօնավարէ Երզրումի մէջ Այժմ կը
պաշտօնավարէ Պիլէճիկի մէջ

Պատ. Հայկազնի անձին նկարագրականը
ընել անկարելի է այս սուղ տողերուն մէջ Ան-
եղած է եռանդուն, հաւատարիմ և անկեղծ
պաշտօնեայ մը իր պաշտօնավարած վայրերուն
մէջ ։ Իր երեսնամեայ ուսուցչական շրջանին
մէջ ունեցած է 2000է աւելի աշակերտներ և
ջերմեռանդ քարողներուն ազդեցութեամբ
100է աւելի հոգիներ առաջնորդած է եկեղե-
ցին։

Ա.ԵՐ. Գ. Պ. Պրրզեաւեան, Ծը-
նած ի Հաճին 1866ին, նախնական վարժու-
թիւնը առած է ծննդավայրին սովորական և
Նախապատրաստական գպրոցներու մէջ ։ 1883
ին Այնթապի Կ. Թ. գոլէճը մտաւ, տարի մը

Հաճնոյ Երկրորդ եկեղեցւոյ մէջ քարոզչի պաշտօն կատարելով՝ 1889ին գոլէճը լմնցուց ու նոյն տարին Մարաշի Աստուածաբանական ճեմարանը գնաց: 1892ին աւարտելով առաջին պաշտօնավարութիւնը եղած է Մալաթիա 1892—1896ի, Հոս այն 1895ի ահաելի գէպքը պատահելով թէկ մահէն ազատեցաւ, բայց բանակալ կառավարութեան ձեռքէն չկրնալով աղատիլ ջարդէն անմիջապէս ետքը բանատարկուեցաւ 3½ տարի: 1896—1898 Մէրսին, 1898—1903 Հաճըն, Ճնեդավայրը, 1903—904 Աղվիյէ, 1904—1907 Նէվշէհիր, 1907—1912 Խաթանօզ և 1912 նոյ. մէկին կարնոյ եկեղեցին պաշտօնավարութեան սկսած և նոյն եկեղեցւոյն մէջ 1913 Յունիս 9/22 հովիտ ձեռնադրուեցաւ, ցարդ կը շարունակէ գործը այս եկեղեցւոյն մէջ:

Փեր. Ա. Նիկոլոսիսեան, Բնիկ Խարբերդի Խոռվագիւղէն է. 18 տարեկան հասակին մէջ Եփրատ Գոլէճը զրկուած է: Վարժարասնի ընթացքը աւարտելէ յետոյ վարժապետութեան զրկուեցաւ Տիգրանակերտ եւ Բալու, ուր 4 տարի մասլէ ետեւ Գոլէճ դարձաւ: Երկու տարի եւս ուսանելէ ետեւ դարձեալ զր-

կուեցաւ Արարկիր իրը տնօրէն վարժապետ ու մնաց երեք տարի բեմն ալ հոգալով: 1885 ին գնաց Գահիրէ առուտուրի գործով ու երեմն ալ քարոզելով: 4 տարի յետոյ գառնալով Խարբերդ մտաւ Աստուածաբանական դպրոց: 1893 ին ընթացքը աւարտելով քարոզչական արտօնագիր առած ինքիրի գնաց: 1896 ին եկեղեցւոյն հովիտ ձեռնադրուեցաւ, ձեռնադրուելին 8 ամիս վերջը իրը յեղափախական Հայ գոյցմագամ մուավինը սպաննել տուող մը ամբաստանուելով բանատարկուեցաւ, երեք ամիս ինքիրի մէջ, երկու ամիս Խօղալթ ու 15 ամիս Խարբերդ: Վերջապէս անպարտ արձակուելով դարձաւ իր պաշտօնին 1898 ուր կը շարունակէ իր հովուական գործը:

Փեր. Պ. Ա. Կարապետեան, Ծնած է Խարբերդու Փէրչէնձ դիւղին մէջ 1865 ին: Շըտանաւարտ եղած է Խարբերդու Եփրատ Գոլէճէն 1884 ին եւ Խարբերդու Աստուածաբանական ճեմարանէն 1886 ին: Ամերիկա գացած է 1887 ին և վերագարձած է 1891 ին: Անդ ժամանակէն մինչեւ 1895, 4 տարի Փէրչէնձի մէջ գործած է իրը քարոզիչ: 1896—1897 Ամերիկան եւ Գերման միսիոնարաց կողմէն

այցելած է Խարբերդի, Բալսուի, Զմշկածակի,
Զնքուշի եւ Զերմուշի գիւղերն կարօտելոց
նպաստ բաշխելու եւ անոր որբեր հաւաքելու։
1897-1914 տարիներէ ի վեր Գերման որբանց-
ներու եւ գպրոցին մէջ կը ծառայէ իրը երեց
եւ ուսուցիչ։ Այս հասասառութիւններն ունին
իրենց մէջ իրը 700 մանչ եւ աղջիկ որբեր։ Ու-
նին վարժապետանոց մը, ուր կը դաստիա-
րակուին երիտասարդներն ու օրիորդներն,
որնք կը փափաքին երկրին մէջ իրը ուսուցիչ
կամ քարոզիչ ծառայել իրենց կենաց մէջ։
Ունին 28 ուսուցիչներ եւ ուսուցչուհի-
ներ եւ երկու փրոֆեսորներ այն բոլոր գպրոց-
ներուն համար։

Պատ. Յ. Յ. Գասապալասեան. Ծննդէ
1880 ին ի Երևաստիա, նախնական ուսումը
առած է ծննդավայրին մէջ։ Ժամանակ մը հե-
տեւած է օրէնսդիմութեան ճիւղին, ապա եր-
կու տարուց չափ բէժիի մէջ պաշտօնավա-
րած է յէւդոկիա։ 1901 ին Մարզուան 5 տարի
թէ Գօլէճի եւ թէ Աստուածառանական ճե-
մարանի դասերուն հետեւեցաւ։ Ենթացըը
աւարտեց 1906 ին։ Առաջին գործունէու-
թիւնը Շապին Գարահիսարը եղաւ։ Հոն 6 տարի

գործեց 12 անդամէ բազկացեալ նորակազմ
եկեղեցւոն մէջ։ Ունեցաւ նաև երկնեռ վար-
ժարան մը։ Նոր գպրոցին մէջ այր եւ կին և
ուրիշ օգնականներով երկու տարիի չափ շա-
րունակեց, յետ այնու Ամստիա փոխադրուե-
ցաւ, ուր Հայ-Աւետ։ Եկեղեցւոյն մէջ կը
գործէ։

Վեր. Պարտասար Գալայնեան.

Ծննդէ Խարբերդի Սարը Գամը գիւղը 1865
ին։ Խնքնօգնութեամբ գրել կարդալ սորվելէ
ետեւ 17 տարեկան եղած ատէն ուսուցչու-
թիւն ըրած է 10 տարի ձբիաբար իր գիւղին
մէջ։ Երկու զաւակի հայր էր երբ Խարբերդ
գնաց ուսումը կատարելագործելու։ 1891-1898
գաշտի գիւղերու քարոզչութիւնը ստանձնեց.
1900 ին 3 տարի Աստուածանչական գպրոցի
հետեւեցաւ։ 1903 ին ձեռնադրուեցաւ Խմէի
եկեղեցւոյն հովիւ, ուր 12 տարի պաշտօնավա-
րելէ ետեւ Քդի-Գասապալի եկեղեցին մէջ կը
գործէ։

**Վեր. Պ. Դալպրմեան պահած է իր գոր-
ծունէութեան վիճակացոյցը — բան մը որ շատ
քարոզիչներու յանձնարարելի է յոյժ։ Ահա-
ւասիկ. 465 քարոզ խօսած, զորս գրելով պա-**

հած է. 105 պսակ օրհնած. 62 թաղում, 50
միրտութիւն, 57 Տէրունական ընթրիք եւ 9
անդամ հովուական ըրջան է կատարած:

Ա.ԵՐ. Ս.ԵԽԻԽԻ ԳԷԼՈՐԳԵԱՆԻ. Ծնած է
Տիվրիկ. 1885—1889 ուսանող Աերաստիոյ Ա-
մերիկեան Վարժարանը. 1889ին շրջանաւարտ
եղած նոյն վարժարանէն. 1889—1891 վար-
ժապետ Տիվրիկի Բող. գպրոցին. 1891—1896
արհեստով և առեւտրով զբաղած, ապա 1896
—1900 Կրկին Տիվրիկի Բող. վարժապետ-քա-
րոցին. 1900—1903 ուսանող Աւտուած արա-
նական ճեմարանին ի Մարզուան և շրջանա-
ւարտ. 1903—1907 Սուլ Շէհիրի Ենատիրէս գիւ-
ղաքաղաքին մէջ 4 տարի քարոզած, 1907ին
Թոգուատի եկեղեցիին հրաւերովը Թոգուատ եկած
և 1910 Նոյեմբեր 6ին ձեռնադրուած սոյն
եկեղեցիին մէջ ուր մինչև հիմա կը գործէ:

Տօգ. Ա. Գ. Մ. Է. Լ. Խ. Խ. Խ. Խ. Խ. Խ. Խ. Ծնած է
ի Նոյեմբ. 22 Արարկիրի մէջ, հոն Հայ Աւետ.
գպրոցին մէջ իր նախնական կրթութիւնն ա-
ռած, 1897ին Խարբերդ Եփրատ գոլէճը կ'եր-
թայ: 1902ին Եփրատ գոլէճին շրջանն աւար-
տելէ վերջ, մէկ տարի ալ ծննդավայրին մէջ

ուսուցչական պաշտօն կը վարէ: 1903ին շատ
մը դժուարութիւններով անցագիր մը ձեռք-
ձգելով Պէջութ կ'երթայ, հոն Ամերիկեան
բժշկական վարժարանը կարդալու: 1907ին
Պէջութի Բժշկ. Համալսարանէն վկայական
կ'առնէ: 1908ին Թաղապետական բժիշկ կը
կարգուի, 1½ տարի նոյն պաշտօնը վարելէ
վերջ կը հրաժարի ու Խարբերդ գալով հոն կը
հաստատուի: Քիչ մը ատեն մնալէ վերջ 1910
ին Քղի թաղապետական բժիշկ կը կարգուի:
1910—1913 Պալգանեան պատերազմին իրը
հարիւրապետ բժիշկ կը ծառայէ, պատերազ-
մէն վերջ իր պաշտօնին Քղի կը վերագուռնայ
ու հիմա հոն կը ծառայէ իրը Թաղապետական
բժիշկ: Իր «Կրօնք» և Երկարակեցութիւն»
յօդուածը յաջորդ տարի յուսանք հրատարա-
կել:

Ա.ԵՐ. Ս.ԵԽԻԽԻ Յ. ՉՈՐԻԿԵԱՆԻ. Ծը-
նած է 1847 ին Կիւոմիդիոյ Օվաճըդ գիւղին
մէջ: 14 տարեկան հասակին մէջ մօրմէ և
թէ հօրմէ որբացած է: 1866 ին Կ'առաջնոր-
դուի Վ.Եր. Մը. Ռէշըրտանի նախակրթարանը
ի Պրուսիա Յետոյ կը դրկուի Մարզուան: 1872
ին շրջանաւարտ Կ'ելլէ: Հետեւեալ տարին

Պարտիզակ ուսուցիչ եւ քարոզիչ կ'ըլլայ
մինչև 1878: Խնքը պատճառ եղած է Ամերիկ-
եան Ցարձր. Վարժարանին հոն հաստատմանը:
1879-1880 Պրուսիյի եկեղեցին մէջ պաշտօ-
նավարած է, 1881 ին Պայպէ Հառւսի մաստ-
րան մէջ թուբքերէն լեզուաւ քարոզելու հա-
մար կը հրաւիրուի, և իրեն կը յանձնուի նաև
միսիոնարաց բացած դպրոցը, եւ կը հիմնէ կի-
րակնօրեսոյ դպրոց մ'ալ, որ մինչև ցարդ կը
շարունակուի Կէտիկ փաշոյի Ամերիկեան վար-
ժարանին մէջ: 1902 ին Խասդիւղի քարոզչա-
կան պաշտօնին կը հրաւիրուի, հոս ալ ար-
դիւնաւոր գործունէութիւն մը ունեցաւ մինչ-
եւ իր մահուան օրը: Ունի բաւական թարգ-
մանութիւններ որոնց մէջ «Վկ տունդ որ ես
դու ի բարձունս» երգը: Ունի նաև կտորներ
«Քնար»ի և «Քնար Արբազան»ի մէջ Յովհան-
նէս ստորագրութեամբ: Հանդեաւ ի Տէր ի Կ.
Պոլիս, 19 3 Հոկտեմբեր 3:

Ա.Ե.Ր. Գրիգոր Էօմիւրեան, Հան-
դուցեալը ծնած է 1833ին ի Մունճուսուն, ուր
նաև կնքած է իր մահկանացուն ի 10 Յուլիս
1914: Մինչեւ իր 25րդ տարիքը դպրոցներու
մէջ քիչ շատ ուսում առնելէ ետեւ վաճա-

ռականութեան է հետեւած: Յետոյ 1860 իր
Ծննդավայրի մէջ ուսուցիչ է եղած: 1864ին
Մարզուանի Աստուածարանական վարժա-
րանը մտնելով 18-8ին ընթացաւարտ կ'ըլլայ:
Տարի մը ետքը Մունճուսունի նորակազմ եկե-
ղեցին հովիւ կը ձեռնադրուի. հոն կը պաշ-
տօնավարէ մինչև 1875, երբ Կէմերէք կը հրա-
ւիրուի, ուր 2 տարի պաշտօն վարելէ ետեւ
վերստին իր ծննդավայրը կը գառնայ մինչեւ
1884 հոն կ'աշխատի, 2 տարի ալ նիկտէ,
ետքը կը վերադառնայ Մունճուսուն և կը
գործէ մինչև 1900: Ծերութեան պատճառաւ
կը քաշուի գործէ, 1914 Յուլիս 10ին իր հան-
գիստը կը մտնէ:

Յուղարկաւորութիւնը «Ազգային Միու-
թեան» մի նմոյշ կը ներկայացնէ: Հայ Առւա.,
Հայ Կաթողիկ և Հայ Աւետ. համայնքներու ե-
կեղեցեաց զանգակներ կը հնչեն: Նախ Հայ
Առւա. եկեղեցւոյ մէջ կը կատարուի մեռելա-
կան պաշտօն Տէր Պետրոս հօր նախագահու-
թեամբ, ապա շարականներու երգեցողու-
թեամբ գագաղը Հայ Աւետ. եկեղեցին կ'ա-
ռաջնորդուի, ուր կը շարունակուի պաշտօ-
մունք, ի վերջո գագաղը գերեզման կ'առաջ-
նորդուի շարականներու երգեցողութեամբ,

ուր Հայկազուն էվ. Եագուպեանի վերջին դամբանականէն ետեւ հողը կը յանձնուի հողին, Տէր Պետրոս հօր աղօթքով:

Վեր. Պ. Վ. Ամփրխանեան. Փիւրատիթանի մէջ ծնած է 1870 ին: Կրթաւէր եւ բարեպաշտ ծնողքը կը զրկեն զինք 1887ին Եփրատ Գօլէճ ուրէկ կ'ելնէ 1894. Մարաշի Աստուածաբանականէն 1902, Ամուսնացաւ ու ձեռնադրուեցաւ Խարբերդի մէջ 1903: Աւսուցչութիւն ըրած է Մալաթիոյ մէջ մէկ տարի, Խարբերդի մէջ երկու տարի, Տիարապէքիրի մէջ երեք տարի, Նորէն Խարբերդի մէջ չորս տարի: Երեցութիւն ըրած է Ֆարգինի մէջ 1 տարի (կառավարութենէն կ'արգիլուի) Տիարապէքիրի մէջ 7 տարի, Խարբերդի մէջ 4 տարի, ուր վերի թաղի երեցն է և կ'ուսուցանէ գօլէճին և Աստուածաբանական ճեմարանին մէջ: Կը սիրէ իր հայրենիքը, անմոհ հոգիները և իր Աստուածը:

ՔԻՒՐՑԻՍԹԱՆԻ Ա.Ի.Ե.Տ. ԳՈՐԾԻՆ
ՅԱՆՉԱՆԱԽՈՒՄԲԸ

Թօնունդը. Խարբերդի Միութեան ծոցին մէջ գրեթէ կըս գար առաջ, Շմաւոնեան Պապային և այլոց ջանքով:

Անումը. Այս գործին շուրջ միացան ու գործակցեցան Տաճկաստանի Աւետ. գրեթէ բոլոր Միութիւնները ու եկեղեցիները Խարբերդի, Մարտինի, Այնթապի և Մարտինի եկեղեցիներուն հոգածութեամբ Քիւրտիսիթանցի Երիտասարդներ կը կրթուին Խարբերդի մէջ ու կը վերագանձան հայլանիք: Սիլվանի, Պիերի, Պարավայի, Ղարզանի և Աքրդանի մէջ հոգեկան ու կրթական ջանքերու իրրե արդիւնք մեծ արթնենութիւն մը յառաջ կուգայ: Աւելի քան 12 տեղերու մէջ քարողիները և քարողին ուսուցիներ կը գործէին: Եկեղեցիները կը գոտեպնդուին և 200 լիրայի կը բարձրանայ Քիւրտիսիթանի Առաքելական գործին պատճէն:

Անկումը. Համփտեան ջարդերը արդիւցին ամէն բան: Վ. Ե. Շմաւոնեան շատոնց հեռացոծ էր գործին կեդրոնէն, Խարբերդէն: Հին աշխատաւորները մեռան, նորերը հեռացան եկեղեցիները աղքատացան, գործը ինկաւ:

Վերականգնաւմը. Երեք տարի առաջ Վ. Ե. Պալահատեանի և այլոց ջանքերով Խարբերդի Միութիւնը գործը ձեռք առաւ 100 լիրայի պիւտճէ մը յատկացնելով անոր:

Գործին գալուը զրկուեցան երէց, վարժուհի,
քարողի և ուսուցիչ : Խարբերդի եկեղեցի-
ներուն մէկ մասը անհօդ գտնուեցաւ . Տաճ-
կաստանի Աւետ. միւս . Միութիւնները չգոր-
ծակցեցան : Ամերիկայի Հայ-Աւետ . Միու-
թիւնը ու Հայ-Աւետ . եկեղեցիներէն ոմանք
գովիլի նախանձափառութեամբ մը իրենց
հնուն համակրութիւնը յայտնեցին Քիւրտիս-
թանի թշուտու արենակիցներուն : Ֆրեզնոյի,
Նիւ Յորքի և Պոսթընի եկեղեցիները քաջուե-
րեցին մեզ : Խարբերդի Միութիւնը 100 լիրայի
բարձրացուց պիւտնէն : Պէտք եղած օգնու-
թիւնները չհասան, պարաք գոյացաւ . Խար-
բերդի Միութիւնը գոցեց զայն :

Երկայն քաջալերական չէ, բայց գործը
աւելի սախազական է այսօր քան երբէք : Օգ-
նողներ ալ կան գեռ, ու խոսումներ ալ
կըլլան : Ֆրէզնոյի Երեցական եկեղեցիներն
քոյրերը Աւետարանիչ մը կը պահեն Քիւր-
տիսթանի մէջ . Փողովական եկեղեցին ալ
քոյրերը կը յուսագրեն մեզ : Պոսթընի Կիր.
Դպրոցը իր նուէրները կը զրկէ հետզհետէ ա-
ւելցնելով ու յուսագրելով : Տեսէք, կարօ-
տութիւնը որբան մեծ է Քրդախօս Հայերուն .

	զիւղ	ՏԱՐԻ	ՄԱՐԴ	ՏԱՀ.	ՏՈՂ.
Ալլվան	ունի	46	1,549	10,000	21 3
Պշերի	ունի	34	658	5,000	15 —
Պարավա	ունի	9	227	2,000	— —
Ղարզան	ունի	14	650	6,000	5 —
Արլգան	ունի	6	195	1,000	2 1
		109	3,279	24, 00	43 4

Մեր ակնկալութիւնը մեր ջանկերուն հա-
մեմատական ըլլալու է:

Մեր ջանկերը պէտքին ու մեր պարտքին
համեմատական ըլլալու են:

Մեր հպարերուն պատիւը, հոգիներուն փրր-
կութիւնը ու Աստուծոյ փառքը կը պահանջնեն
որ վեր վերցնենք Քիւրտիսթանի Առաքելական
գործը : Վ. Պ. Ամիրխաննեան

ԳՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ .

ԱՌԱՋՆԵՐ

Բ՞. զ.

Տօ լլ պար բազ՝

իր բրշդա մըն պը գա՞զ,

նա՞մ, նա ազ!

— Ազքատ մարդ մը որ ոչխարներ կ'արա-
ծեր ատեն մը, այլ բախտը բերաւ որ յեաց
լուագդյն գործ մը կը գտնայ և կը մտնայ աղէկ

Դիբքի մը մէջ. օր մը ինպղինքին գալով անցեալ
ու նոր կեանքը բաղդատելով՝ կը նայի իր հա-
գուստին ու կապուստին վրայ ուշագրաւ,
կ'ընէ վերոյիշեալ հարցումք. այսինքն,

Ե՞ս եմ այս

Երեկ ոչխարներու առջեւ՝ այսօր մէջքս
մետաքսեայ գօտի՛,

Աչ, ես չեմ:

Հօ'սրա նամաւր,

Պապա ուազի ուսմաս հարձաւր,

Տալիլ եափա, ստրկահ հազար:

— Թագտորին մէկը իր երկրին շատ կա-
րող և վարպետ նաճարի մը խիստ ծանր պա-
հանջ մը կ'ընէ, հուկառակ պարագային յաջորդ
օրը վարպետին գլուխը պիտի կտրել տար, այդ
գիշեր վարպետը ծայր աստիճան յուսահատա-
կան տիրութեան մէջ ընկղմած՝ իր կինը իրեն
վերոյիշեալ քաջալերականը կը խօսի. այսինքն,

Վարպետ նաճար,

Ելիր քնացիր ամէն ատենուայ պէս,

Ցցուը մէկ է, դուռներ հազար:

Առաւօտուն երբ կ'ելլեն, կը լսեն որ թա-
գաւորը մեռած է:

Նանէ կանըմ նա ըլ նանա,
Նանէ ճահին նիվ նանա,
Նանէ կըկըլ համ գուրա, համ մնուրա,
Համ չափէ լառէ ոուրա:

— Երկու ընկերներ կը ճամբորդէն, եր-
կուքն ուլ անդէն, այլ մին ցորենէ հաց առած
իր հետը, միւսը կորիկէ հաց. Աւազակներու
յանդիպելով՝ ցորենէ հաց ուտողը կը փախչի,
իսկ կորիկէ հաց ուտողը քաջաբար կը կռուի,
կը յաղթէ. յեսոյ կ'երթայ կը հասնի փախս-
տական ընկերօջ՝ կըսէ յիշեալ խօսքը փորձա-
ռական. այսինքն,

Ցորենէ հացը երթէք հաց չէ,

Գարիէ հացը կէս հաց է,

Կորիկէ հացը թէ կերակուր է, թէ պա-
շոր,

Եւ թէ տկլօղ մանչին գէնքն է:

Տիգրանակերտու և Պիթլիսու կուսակա-
լութեանց մէջ 3 նշանաւոր հնագարեան շէն-
քեր կան.

Ա. Պաթմանու գետին վրայ կամուրջ
մը կայ քարաշէն, շատ բարձր և խիստ հաս-
տատուն՝ գարերէ ի վեր կը մնայ, որու 2 ոտ-
քերու մէջ 2 փառատեսիլ սենեակներ կան:

Բ. Ծնտվանու կալերու մէջ գետնի տակ,
շատ հաստատուն քարերէ և նիւթերէ շին-
ուած ջաղացք մը կը մնայ ցայսօր, որու վրայ
հասարակաց պողոտան է, օտարական ճամ-
բորդ մը չի կրնար հասկնալ թէ իր տակը ջա-
ղացք է:

Գ. Ծնտվանէն քիչ հեռու՝ Աղերթու-
ճամբու վրայ գիւղ մը կայ. Քելքէլան անու-
նով, որուն մզկիթն ալ գարերէ ի վեր հաս-
տառուն կը մնայ և կը գործածուի այսօր:

Այս երեք տեղերու վրայ աս առածը
կ'ըսուի.

Փլրա Պարմանէ,

Այս Ծնտվանէ,


Մրգկաֆ'րա Քայլալանէ

Խըրաւ հապըն հարրա ախըրզամանէ,

—Պաթմանու կամնուքը, Ծնտվանու ջրանց-
քը, Քելքէլանու մզկիթը չեն աւրեր մինչ ի
կատարածն աշխարհի:



Դանօր. — Գնեցէք Գահիրէի Հոյ Նըիտ.
Քրիստ. Ծնկերակցութեան հրատարակած Եր-
գարանը, կրօնական և ազգային Գինն է 4 դշ.
կեդրոնատեղի Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ վաճա-
ռատունը:



ՏՕԳ. Կ. Գ. ՄԵԼԻՔԵԱՆ


Քղի



Առաջնական գործադիր Հեղա



ԳԵՐ. Ս. Յ. ԶՈՐԵԿԵԱՆ



ԱՅՐ. Գ. ԼՈՒԻՆԵԱՆ

